



Կ. ՄԻՏՏԱԼ

1939


# Սահու ծովեր








*Handwritten signature or name in a cursive script.*



Handwritten text in a cursive script, appearing to be the first part of a name or title.

Handwritten text in a cursive script, appearing to be the second part of a name or title.



31 JUL 2013

55265

Կողքի շապիկն ու գրքի միւս զարդանկարներ գործն են նկարիչ Նրւանդ  
Ամատունիի —

ԻՄ ՏՈՒՐՔԸ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻՆ

Հրատարակութիւն  
ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



7882 - 70

Printed in U. S. A.

ՍՍՍՈՒՑԻ ԴԱԽԻԹԻ փառաւոր հաղարամեակին ես էլ ահա բե-  
րում եմ իմ համեստ տուրքը — ՍՍՍՆԱ ՄՈՒՆԻ ղեկցաղներդութիւնս ,  
որ մշակումն է նոյն անւամբ յայտնի ժողովրդական մեծարժէք հե-  
րոսապատումի: Ժողովրդական այս հոյակապ աւանդավէպն եղել  
է իմ դպրոցական օրերի ամենից ծանօթ եւ սիրւած եւ ամենից  
չատ ոգեւորող պատմածքը:

Վանի 96-ի ջարդերից յետո ես կորցրի ծնողներիս եւ դեռ հաղիւ  
եօթ տարեկան հասակիս ընդունւեցի Վանի Ամերիկեան որբանոցում:  
Այստեղ էին հաւաքել Վասպուրականի բոլոր դաւառններից եկած  
600-ի մօտ երկսեռ որբեր: Նրանք իրենց հետ էին բերել մի մեծ  
հարստութիւն — մեր ժողովրդական անգիր բանահիւսութեան թան-  
կարժէք դանձերը: Այս դանձերի կարգին էին Սասնա Ծռերի բազ-  
մաթիւ տարբերակները:

Որբանոցի այդ մռայլ շրջապատում ես ընդարձակ պատեհու-  
թիւն ունեցա հանդամանօրէն ծանօթանալու՝ ինձ ծանօթ պատումի  
չարքին՝ նաեւ Մոկաց, Ծատախի, Հայոց Զորի, Կաւաչի, Աղբակ:  
Սպարկերտի եւ Թիմարի բազմասլիսի պատումներին:

Որոշ ժամանակի ընթացքում իմ սկզբնական պատումը ենթարկ-  
ւեց խոշոր փոփոխութիւնների, աճեց եւ ընդարձակեց եւ դարձաւ  
միւս բոլոր տարբերակների մի տեսակ համադրութիւն — խառնուրդ:

Ինձ վրա անջնջելի եւ հզոր ազդեցութիւն է ունեցել Հայոց Զորի  
Խեք գիւղացի որբ Սարգիս Բաղդասարեանի պատումը: Պատմելու  
լաւ շնորհք ունէր Սարգիսը եւ նրա ԽՊՐ Իսախիբ հերոսապատումը  
ինձ համար միշտ էլ ունեցել է անօրինակ եւ անդիմադրելի գրաւ-  
չութիւն: Իր այս տարբերակը նա լսել էր իր պապից, որ եղել էր  
յայտնի գիւղական երգիչ եւ ասող:

Համաձայն Բաղդասարեանի այս տարբերակին՝ Սասնա ժողո-  
վըրդի լայն զանդւածները — Սասնա Ծռերը — խոշոր եւ վճռական  
դեր են կատարում ազատագրական եւ պաշտպանողական կռիւների,  
ինչպէս նաեւ շինարարական աշխատանքների ընթացքին — իրենց  
մեծ ղեկավարների հետ եւ նրանց կողքին:

Իմ լսած պատումների խոշոր տոկոսում ժողովրդական զանգ-  
ւածների մասնակցութեան պարադան երեւան չի դալիս չեչուած  
կերպով կամ բնաւ իսկ չի յիշատակում: Տարակոյս չկա որ այս  
զանցառութիւնը հետեւանք է անհատ պատմողների կողմից ղեկցաղ-  
ներդութեան քաջարի եւ պանծալի հերոսների հանդէպ սնուցած մե-  
ծարանքի եւ հիացման: Մեծ հերոսների հանդէպ նրանց անսահման  
ոգեւորութիւնը ժամանակի ընթացքին սոււերի մէջ է ձգել ժողովրդ-

դական զանգաւածները դերը եւ ապա հետզհետէ բոլորովին մոռացութեան է տւել նրանց: Այսպէս դիւցաղներգութեան գլխաւոր հերոսները — Սանասարի, Առիւծ Մհերի, Թլոր Դաւիթի եւ Պղտիկ Մհերի դիմանկարները՝ այնպիսի վիթխարի մեծութեամբ են տարածուած պատուի իւրաքանչիւր դրւագիւ եւ անցքի վրա, որ ամբողջովին թաղուած է ժողովրդական զանգաւածների դիմագիծը: Բարեբախտաբար գտնւել են ժողովրդական ասողներից այնպիսիներ, որոնք հաւատարիմ են մնացել իրենց աւանդին եւ նրան հարազատօրէն յանձնել են իրենց յաջորդներին:

Եւ շնորհիւ այս հաւատարիմ եւ հարազատ աւանդապահութեան Սանա գիւղացիների քաջագործութիւններն ու մեծագործութիւնները հանդիսացել են ժողովրդական այս պանծալի հերոսապատումի պայծառ եւ լուսաշող գիծը, հայ աշխատաւոր ժողովրդի ազատութեան եւ վերջնական յաղթանակի դարաւոր եւ անսասան հաւատքը:

Սորհրդային Հայաստանի թերթերի մէջ երեւացող վերջին մի քանի պատումները գալիս են հաստատելու իմ տեսակէտը:

Ինձ ծանօթ անգիր պատումներից դուրս ես նաեւ օգտուել եմ Պետերատի ՍԱՍՆԱ ՄԻՆԻ՝ խոշոր հատորից:

Սասնա Ծռերիս նախապատրաստական աշխատանքներէս ընթացքին ես համոզւեցի, որ իմ այդ պոեմը պէտք էր գրի առնէի Արեւելահայ բարբառով: Նախ որ Վասպուրականի եւ Արարատեան գաւառների բարբառների միջեւ կա մի մեծ մօտիկութիւն եւ գրեթէ նմանութիւն ասացածքների, հնչումների եւ առհասարակ արտայայտութեան բոլոր ձեւերի: Սա, ի հարկէ, արդիւնք է այն բանի որ Արարատեան Դաշտն ու Վասպուրականը եղել են Հայաստանի պատմական երկու մեծ կուլտուրական բնաշխարհներ եւ սահմանամերձ, մօտիկ հողամասեր: Երկրորդ, ներկայիս Վասպուրականի ժողովուրդի մնացորդը հաստատուել է Արարատեան եւ Ծիրակի դաշտերում եւ իւրացրել է Արեւելահայ բարբառը եւ այդ բերքառատ դաշտերի ազատ ժողովրդի հետ մէկտեղ դարձել է Սորհրդային Հայաստանի բախտաւոր քաղաքացի: Եւ վերջապէս շնորհիւ Սորհրդային իրականութեան այսօր Արեւելահայ բարբառը հանդիսանում է հայ ժողովրդի պետական լեզուն:

Կա նաեւ այն հանգամանքը, որ իմ կրթութիւնը եղել է կիսով գաւառական եւ կիսով Արեւելահայ: Այնուամենայնիւ ես բնաւ չեմ ժխտում Արեւմտահայ լեզուի հարուստ դունագեղութիւնն ու բազմապիսի գեղեցկութիւնները:

Սասնա Ծռերի հերոսապատումով հայ ժողովուրդն արտայայտել է իր բոցավառ սէրը կեղեքումներից, հարկերից ազատ մի կեանքի


մասին, նրա խաղաղասիրական եւ եղբայրական ջերմ զգացումները հարեւան ժողովուրդների եւ առ հասարակ բովանդակ մարդկութեան հանդէպ, նրա անխախտ հաւատքը տառապող եւ անբաժին ժողովրդական զանգաւածների միասնական պայքարի եւ վերջնական յաղթանակի համար:

Ես աշխատել եմ կատարեալ հաւատարմութեամբ եւ հարազատօրէն կատարել այս փառաւոր հերոսապատումի մշակումը: Պատմւածքի զանգաւածային բնոյթի եւ թարմ, մաքուր եւ ազատական շունչի մասին իմ խանդավառութիւնն ու հիացումը շատ աւելի մեծ չափով աճել ու բաղմապատկւել է իմ մշակման աշխատանքի ընթացքին: Յոյս ունիմ որ ինձ յաջողւել է նոյն անպայման խանդավառութեամբ եւ հիացումով տողորել նաեւ Սասնա Ծռերիս:

Կ. ՍԻՏԱԼ

Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐ



անա ծիծղուն ծովի ասին կար մի արի քագաւոր,

Որ վարել էր անվերջ կռիւ ուժերի դէմ բռնաւոր.  
Բայց մի սել օր նրան լիել էր բախտն անգութ մարտերի  
Սւ նա դարձել էր հարկատու ագահ օտար տէրերի:  
Ունէր աղջիկ մի ոսկեծամ՝ հասակ քաշած քանց չիմար,  
Աչքերը՝ ծով, շրթները՝ նուռ — անունն նրա՝ Ծովինար:

Մի օր եկան հարկահաններն հարաւի մեծ արքայից  
Կողոպտեցին երկիրն այդ խեղն ոսկուց, բերքից, արջառից.  
Հաւաքեցին վարդ կոյսերին, տղաներին աչագեղ  
Որպէս պահանջն էր յարքողի եւ հրամանն իր անեղ:  
Յետո եկան քագաւորից վերջին հրաժեշտն առնելու  
Սւ ասելու որ մնա միշտ այդպէս խելօք ու հլու:  
Պարտէզի մէջ տեսան նրա արեւագեղ աղջկան —  
Պայծառ՝ որպէս արեւածագ, քննուշ՝ որպէս մի շուշան:  
Երբ որ հասան երկիրն իրենց մեծ արքային ասացին.

— Ապրած մնա մեր մեծ արքան — տէրն մեր կեանքին ու հացին,  
Աստուածները քեզ տւել են ապրանք, ե՛ւ հող, ե՛ւ ոսկի,  
Եօթն երկիրներ ռոտիդ կոխան հարկ են տալիս ըստրկի.  
Բայց այս ամենն, անեղ արքա՛, չունեն իմաստ, չունեն գիճ,  
Միճչել չանես Ծովինարին մեծ Հարաւի քագուհին:

Սլաւ արքան, մարդ ուղարկեց քագաւորին Հիւսիսի.

— Լսել եմ դու աղջիկ ունես շքեղ որպէս մի սօսի.  
Ծովերի պէս խոր աչքերով, դէմքը նրա՛ վարդի քերթ.  
Նրա շնորհքն կը խորտակի հազար ամբոց, հազար բերդ:  
Այդպէս լուսէ, չքնաղ աղջիկ ինձ է միայն արծանի,  
Պատիւ եմ քեզ ուզում անել, անել քեզ ինձ խնամի:

— Երկու տարբեր ազգի մարդ եմք —  
Ո՞նց խնամի լինեմք մեմք:

— Խաբբով եղել է կառնեմ,  
Կուով եղել է կառնեմ:

— Արունք կսնեմ ու չեմ տա,  
Կոնի կանեմ ու չեմ տա:

Կոնի արին, արունք արին, շատ մարդ ընկաւ խոտի պէս.  
Գիւղեր եղան հիմնայատակ, չորացան հանդն ու պարտէզ:  
Շատ հօր էր գոռոզ արքան — ունէր նա գորք անհամար.  
Յրիւ եկաւ գորքն Հիւսիսի որպէս փոշի հողմավար:

Վագեց մտաւ վրանն իր հօր՝ յայց աչքին Ծովինար.

— Ինչո՞ւ արիւր, հա՛յր իմ անգին,

Այսքան աւեր ինձ համար.

Այսքան արիւն իմ շիւնքին՝

Ինչպէ՛ս տանեմ, անբախտ հայր.

Այսքան ցաւի իմ որք հոգին

Ո՞նց դիմանա, տանջւած հայր.

Կին եմ գնում չար արքային,

Մնաս բարով, իմ աշխարհ:

Ձիեր սարքեցին նաշխուն թամբերով,

Փռչի հանեցին ոսկի ամպերով.

Եւ խոցւած սրտով սիրուն Ծովինար

Հասաւ Հարաւի քաղաք պայծառ:

Եղաւ հարսանիք եւ տօն փառաւոր.

Եւ երբ որ անցաւ ինն ամիս, ինն օր՝

Երկու ժիր տղա բերեց Ծովինար —

Մեծն էր Սանասար, մէկն էլ՝ Բաղդասար:

Այնքան դաժան ցաւ էր տեսել, այնքան մորմոք աղեպատառ,  
Այնքան կարօ՛տ էր նա քաջել, այնպէս յացել էր Ծովինար,  
Որ փառքն ու գանձն արիւնավառ, ուժն ու վայելքն արքայական  
Նրա համար տանջանք էին, դատարկ՝ ելնող փոշու նման:

— Եթէ կոնի պիտի վարէք — ժողովրդի կողմն լինի,

Եթէ պիտի պարպէք բաժակ — ժողովրդի փառքն լինի.

Ժողովուրդն է միայն անմահ եւ աննահ ու վիթխարի:

Այսպէս ասել էր Ծովինար կորիւններին իր քաջարի:

Խորամանկ էր կոխապետը — մի արնախում, ըստոր սողուն.  
Նա լաւ գիտէր որ քագուհուն ասելի էր բիրտ բռնութիւն.  
Եւ թէ նրա շքեղ որդիքն հերոսն էին ժողովրդի —  
Մշակների, համայների եւ նորտերի մերկ ու նօթի:

Ելաւ, գնաց արքայի մօտ.

— Ապրա՛ծ մնա մեծ քագաւոր,

Կուռքերը մեր բարկացել են, վրէժխնդիր են ու խոժոռ.

Նրանք հիմա գո՛հ են ուզում, որ հաշտ նայեն մեր աշխարհին.

Զո՛հ են ուզում, ո՛վ մեծ արքա, կուռքերը մեր արեւածին:

— Գնա՛, ասաց ցասկոտ արքան, գոհ են ուզում — գոհ արա դու.

Միթէ երբեք եղե՞լ եմ ես քրմապետին խորհրդատու:

— Հօր արքա, բայց այս անգամ գոհը տնիցդ են պահասջում.

Մեր ահաւոր ասուածները արքայական գոհ են ուզում:

— Ասուածների կամքը մեծ է. բայց ի՞նչ մեղք է գործել արքան,

Որ իմ տնից մատաղ ուզեն, որ այս սերը բերեն իմ տան:

— Արքան ունի մի գոյգ որդի մի անհաւատ մօրից ծնւած,

Պէտք է նրանց մեր կրօնի հրովն անեմ սրբագործւած:

Լուրը հասաւ Ծովինարին, որ շտապեց արքայի մօտ.

Սիրուն էր նա որպէս վանա ծովին բացւող ջինջ առաւօտ:

-- Մեծ քագաւոր, մեր երեխեքն մեծացել են.

Հրաման տուր գնան մի քիչ աշխարհ տեսնեն:

Եւ հրաման տեց արքան, որ ուր ուզեն թողնեն գնան,

Բայց Մեծ Զոհի տօնից առաջ նորից պալատ վերադառնան:

Շատ գնացին, քիչ գնացին, եկան կանգնան ծովի ափին.

Ծո՛վն էր ծփուն, ծո՛վն էր խոռով նման իրենց յուզւած սրտին:

— Եղբայր, ասաց Սանասար, մեզ ծով ձգեմք, ազատեմք,

Ո՛չ թէ դառնանք մեր հօր մօտ եւ կոռքերին գոհ լինեմք:

Բաղդասարը չի հաւանեց — ինչո՞ւ նետուել ջրերի ծոց:

Եղբայրն իրեն նետեց ջուրը. դէմը բացեց հանդ ու ծաղկոց.  
Եւ այդ ծաղկած, դալար ուղիւն՝ երկու կողմից բիրբեղ պատեր՝  
Որպէս կամուրջ երկարում էր մինչեւ գմբուխտ կղզիւն Առտէր:  
Կղզու վրա՝ կանաչ ու ժայռ, շուրջը՝ ջրի օրօր ու պար.  
Մի ժայռի տակ՝ քարը գլխին՝ խոր բուն ընկաւ մեր Սանասար:

Շուրջն էր ջրի թովիչ օրօր, բնում՝ երազ կախարդական,  
Դէմն էր կանգնել արեւավառ յաղթ ու բարի մի շինական.  
Թեւի տակին՝ մի խուրձ ցորեն եւ մի ձեռքում՝ թուր պսպղում,

— Քաջ Սանասար, ասաց, վե՛ր կաց,  
Այն քարայրի մուտքը դու բա՛ց.  
Այնտեղ գրահէ մի շապիկ կա,  
Պողպատակուռ մի քամար կա,  
Զրահաւոր գոյգ ոտից կա,  
Զրահէ կոտի քաղախի կա,  
Գեղաբանդակ մի վահան կա,  
Ծաղկանկար մի կարաս կա,  
Կարասի մէջ մի մեծ թուր կա —  
Հրաշագործ թուր — կայծակին:  
Ափին մարմար մի քա՛ր կա,  
Քարի տակին մի սա՛նձ կա,  
Սանձը գարկ ծովն ու քաղի՛ր,  
Կը գա մի ձի ամպաթիւ:  
Ե՛լ աղբիւրի մէջ դու լոգցիր  
Եւ ահարկու, հսկա դարձիր:

Զարթնեց Սանասարն իր անուշ քնից.  
Գտաւ քարայրի մուտքն խորհրդալից:  
Այնտեղ գրահէ մի շապիկ կար,  
Պողպատաշէն մի քամար կար,  
Զրահաւոր գոյգ ոտից կար,  
Զրահէ կոտի քաղախի կար,  
Գեղաբանդակ մի վահան կար,  
Ծաղկանկար մի կարաս կար,  
Կարասի մէջ մի մեծ թուր կար —  
Հրաշալի թուր — կայծակին:  
Ափին մարմար մի քար կար,  
Քարի տակին մի սանձ կար,  
Սանձն գարկեց ծովն ու քաղեց,  
Զրից մի ձի դուրս վազեց.

Մի ձի երեղէն, ծովային  
Լուսամարմին Մուրադ ձին:  
Յետո ելաւ, մտաւ աղբիւր,  
Ափն էր գմբուխտ, դիւքական՝ ջուր:  
Որ մէկն էր — եօթն անգամ եղաւ,  
Որ հօր էր — անյաղթ դարձաւ:

## 5

Հագաւ գրահէ շապիկն այն վառ,  
Մէջքին կապեց պողպատ քամար,  
Հագաւ գրահէ մոյկը ոտին,  
Գլխին դրեց քաղախ կոտին,  
Մէջքից կախեց թուր — կայծակին,  
Քամակին դրաւ թամբ սաղափին,  
Հսկա վահանն առաւ ձեռքին,  
Ելաւ հեծաւ երեղէն ձին,  
Քշեց արագ, ելաւ ծովափ  
Որպէս մրրիկ կայծակնաթափ:

Ափին նստել էր Բաղդասար՝ սեւ ամպի պէս մութ ու տխուր,  
Սանասարի ընկած տեղից ելնում էր լոկ նողփ ու փրփուր.  
Մտածում էր թէ մեն մեծակ ինչպէ՛ս ապրէր նա այսուհետ —  
Իր հօր ձեռքից՝ հալածական եւ աշխարհի բանին՝ անգէտ:  
Մէկ էլ տեսաւ գլխին կանգնած յաղթ ու շքեղ մի ձիաւոր,  
Դողը բռնեց Բաղդասարին, լեզուն կապեց, ձայնն ընկաւ փոր:

— Ինչո՞ւ ես լալիս, ա՛յ ջահել տղա,  
Միրով հարց տուեց նրան Սանասար:

— Կտրին ձիաւոր, ես չը լամ — ո՞վ լա.  
Վախից ծովն ընկաւ շքեղ իմ եղբայր.  
Մնացի անտէր — ես չը լամ — ո՞վ լա:  
Կը գամ, կը տանեն, ինձ կանեն մատաղ,  
Հօր փահիլվան — ես չը լամ — ո՞վ լա:  
Մեծակ — ռնց հօտից կորած մի ոչխար —  
Ասա ձիաւոր, ո՞ր ծովն ընկնեմ ես:

— Եղբօրդ որ տեսնես, դու կը մանաչե՞ս:

— Զայնդ նրան է, բայց դու եղբայրս չես:  
Նա մի տղա էր — դու՛ ահեղ հսկա.

— Վախից գժւել է, արեւը վկա.  
Ասաց եւ ձիւնց իջաւ Սանասար:  
Եղբայրը նրան նայեց լո՛ւռ, երկար

— Այդ դո՞ւ ես միքէ . . . նչաց Բաղդասար.  
Քեզ ծով նետեցիր — հօօր դուրս եկար.  
Ընկար դու ծովը՝ անյոյս, գլխիկոր —  
Դուրս պրծար՝ անյաղթ, շֆեղ ձիւնոր:

6

Իսկոյն բնկան իրար վզով վանա փերուզ ծովի ափին.  
Ականջ արին հովի երգին, ալիքներն անվերջ ծափին:

— Դէ, ձի, բռիր, վագիր արագ, հասիր շտապ մօտը մեր մօր.  
Թէ տարի է — արա՛ւ ամիս, բէ ամիս է — արա՛ւ դու օր,  
Թէ որ օր է — արա վայրկեան — տար մեզ այնտեղ որպէս փայլակ:  
Հասել էին երբ նստան քամբ, ոտք չը դրած միւս ասպանդակ:

Ջոնի օրն էր. եկել, լեցւել էր մեծ ամբոյս շուրջ կռատան.  
Բակումն էին կռփապետը, մեծ իշխաններ ու գոռ արքան.  
Ինչպէս արեւն ամպի տակին՝ քալածոտ նստել էր Ծովինար.  
Կանգնել էին աստուածները բազկատարած եւ սովահար:

Մեծ պարսպի դռան առջեւ եկաւ, կանգնեց հրեղէն ձին.  
Այնտեղ բողեց Բաղդասարին, որ սպասի իրենց դարձին:  
Իսկ նա էջեց կռատան բակ, բռնեց մօրը, առեց քամակ.  
Նրա առաջ կտրեց գօրքը, ե՛ւ ձիւնոր, ե՛ւ հետեւակ:  
Կողքից հանեց թուր — կայծակին եւ ձայն տւեց ամպի նման.  
Լեղապատառ եղան գօրքը եւ կռփապետն ու մեծ արքան:

— Ճամբա բա՛ց արե՛ք որ անցնի իմ ձին —  
Թէ ոչ կը շողա իմ թուր — կայծակին.  
Չուզե՛ք — կը գնանք, ուզե՛ք — կը գնանք  
Ճամբա բա՛ց արե՛ք — բէ սիրում էք կեանք:

Եւ հրեղէն ձին վրնջաց, պայծառ շողաց թուր - կայծակին,  
Որը ջարդեց ամբակի տակ, որն վիրաւոր բնկաւ գետին:  
Այն, որ փրկւեց ահեղ մահից, կծիկ դրեց սարսափահար,  
Մայրն իր քամակ, եղբօր կողքին էջեց, հոտաւ քաջ Սանասար:

7

Եւ գնացին, շա՛տ գնացին, հասան յարդան մի գետի ափ.  
Շուրջը՝ լեռներ ձիւնապակ, վերեւն՝ երկինք ջինջ ու անափ.  
Հեռից մի փոքր ջուր էր գալիս ու գլգլալով գետն էր քափում —  
Կետը կտրում, կարկաչելով միւս ափը դուրս էր հոսում:

— Հօօր ջո՛ւր է, ասաց մայրը, մեր տուն շինենք նրա ափին  
Նրա ջուրը խմողն այլեւս մէջք չի ծռի այլոց կամքին:

Ելան հասան մի սարալանջ, որ ծաղիկի ծա՛ղ էր ծփան,  
Հսկա ժայռից ջուրն էր բոխում մի մարտական երգի նման.  
Եւ արշաւում բարձունքն ի վար ձիերի պէս մրրկավար.  
Երկու կողմից վրի էր անտակ, եկու կողմերն՝ անմատոյց ժայռ:

Ասին — եկե՛ք մեզ տուն շինենք այս ժայռերի նման ամուր.  
Նրա դռան թող կարկաչի աղբիւրն այս ջինջ, հրաշաջուր.  
Շինենք մի գիւղ զրկւածների, անտուն, անհող մարդկանց համար,  
Հալածական անբախտների եւ նորտերի համար քշառ:

Բերին քարեր, բերին շաղախ, բերին մարդակ, սին ու գերան.  
Ու փորեցին հողը, ամուր դրին հիմքը մի հսկա տան:  
Եւ Սանասարն յաղթ ձեռքերով քարեր շարեց հսկայական,  
Ու բարձրացան պատերը յաղթ՝ անփակտելի բերդի նման:  
Հաւաքեցին ով որ գտան — անբախտ, անտուն, հալածական,  
Որի համար ատելի էր ստրկութեան անարգ շղթան.  
Եւ կառուցին պայծառ մի գիւղ այն անմատոյց սարալանջին:  
Ո՛րն ստացաւ տուն ու պարտեզ, որին այգի ու հող տւին:

8

Մի օր տեսան գետի նամբով գնում էր մի սիպտակմօրուս,  
Փայտը՝ ձեռքին, դէմքը՝ փոշոտ — դատարկ մի պարկ առած  
իր ուս.

Ասին — պապի՛կ, նամբորդ մարդ ես, փոշոտ ու խոնջ ու  
ֆրոնած ես.

Արի մեզ հետ ու հանգիստ ա՛ն — մեր տանն զգա քո տանը պէս:  
Երբ ծերունին կերաւ, խմեց եւ իր նամբի խոնջէքն առաւ,  
Շուրջը նստան գիւղի մարդիկ զրոյցների, խօսքի ծարաւ:

— Այստեղ ունէ՛ք նոր տուն ու գիւղ, այստեղ ունէ՛ք մի նոր աշխարհ,  
Դուրսը ցա՛ւ կա եւ կեղեքում, ստրկութիւն, մահ ու խաւար.

7883-70



Սազիս վրա վաղուց է որ ես չեմ ածել ուրախ մի երգ,  
Իմ երգերի տխուր այգին դեռ չէ տուել ֆաղցր մի բերք:  
Եւ սագի վրա որոտացին հալալ հացի, սիրո երգեր,  
Անյաղժ ու սէգ ըմբիշների, ժողովրդի գարթ գովքեր:

— Պապի՛կ, ասին, դեռ մեր գիւղը, մեր աշխարհը չունի անուն,  
Նայեց հսկա այդ տներին — գարմանֆ պատեց մեծ ծերունուն,

— Այն ո՞վ բերեց այս ֆարերը, ի՞նչ ձեռք կտրեց գերանն ու սիւն,  
Այն ի՞նչ ո՛ւժ է պատերն ի վեր հանել ֆարերը այս Սասուն:

— Մեր գիւղի անունն թող լինի Սասուն —  
Կանչեց Սանասարն ցնծումով անհուն:

— Ելէ՛ք, ասաց Սանասար,  
Բռնենք ամեն քար ու քամբան,  
Կամուրջներն մուտքի բերան,  
Հրաւեր կարդանք անցորդներին —  
Գնացողին, մնացողին:  
Ո՞վ անտուն է, հալածական,  
Ո՞վ հող չունի, չունի պաշտպան,  
Ո՞վ հոգս ունի, ձեռքին՝ շղթա —  
Մեր երջանիկ Սասուն թող գա:

Եկան քարտերն արիւնաֆամ՝ անհող, անհաց — հագար, հագար,  
Եկան խեղներն հալածական՝ գրկած, անտուն — հագար, հագար,  
Եկան ազատ, անեղ ֆաջերն ու մարտիկներն — հագար, հագար —  
Տուն շինեցին հպարտ Սասնա սէգ սարերի մէջ լալագար:

### 9

Հրդեհի պէս բոցավառեց եօթ ծովից դէն ու եօթն աշխարհ,  
Հոչակն Սասնա Ծռերի վառ, նրանց անունն՝ լուսալայծառ.  
Ասում էին ոչ մի երկիր չունէր այնպէս լաւ, գովական,  
Անյաղժ որդիք ժողովրդի, այնպէս անկոխ ֆաջ փահլեվան:

Անցաւ շատ օր, ու շատ տարի. մայրը խօսեց Սանասարին.

— Զրի նման օրըդ երկար,  
Բագուկդ անյաղժ մնա, որդի՛.  
Մահից յետո Սասնա համար  
Նոր դեկավար պէտք է, որդի՛.  
Ես էլ ծեր եմ, մեր տան թացան,

Ու հաց շինող պէտք է, որդի՛.  
Դու էլ կերթաս. բայց Սասնա տան  
Նոր փահլեվան պէտք է, որդի՛:

— Թէ պսակել ես ինձ ուզում  
Ազգիկ բե՛ր ինձ որպէս սօսի.  
Վարդի նման վառ ու սիրուն  
Բլբլուի պէս ինձ տաղ ասի:  
Այսպէս ազգիկ թէ գիտես, մա՛յր,  
Հոգիս կըտամ նրա համար:

— Սիփան սարի այն վառ լանջին  
Փախցրել եմ թանկ Գոհարին.  
Բոյը եղէ՛ք լինի ասես,  
Դէմքը՝ շոգան արեւի պէս.  
Համզո անուն մի դեւ հսկա  
Պահակ կանգնել նրա վրա:

— Մնաք բարով, մայր ու Սասուն,  
Նրան չառած՝ չեմ դառնա տուն:

### 10

Սանասարն իր աղեղն առեց, գնաց, հասաւ Սիփանա սար:  
Ցորեկն ամբողջ որս էր անում եւ երագում երբ մութը գար:  
Մի օր տեսաւ վայրի մի եգ, առեց աղեղն, յետեւն ընկաւ,  
Նրան այսպէս հալածելիս մի տուն նրա դէմը կանգնաւ.  
Էլ մռայցաւ եզն ու աղեղ. գնաց կանգնեց հսկա դռան:

— Սա՛ Գոհարի բանդն է, ասաց, վարդ ու ծիծաղ էն աղջկան:  
Դէ՛, բա՛ց արէ՛ք դուռը, կանչեց:  
Համզո հսկան ներսից ձայնեց.  
— Ո՞վ է ուզում ինձնից մահը:  
— Ես չգիտեմ ի՞նչ է անը:  
— Ո՞վ ես, ի՞նչ է քո անունը:  
— Դու չգիտե՞ս իմ անունը.  
Երբ ես ծծկեր մանուկ էի  
Մայրըս ինձ վեր էր թոցնում  
«Դէ՛, մեծացիր կտրին որդի,  
«Գրողն եղիր դու Համզոյի»  
Ասում էր մայրս ինձ թոցնում:

Համզոն ասաց — ո՛վ էլ լինես,  
Եթէ նիշտ է որ Գրոզու ես —  
Թող քո ձեռքը մէկ տեսնեմ ես:  
Դռան նեղֆից ձեռքն երկարեց քաջ Սանասար.  
Ձեռքն որ տեսաւ՝ Համզոն եղաւ լեղապատառ.  
Մի դող ընկաւ ծնգերի մէջ — վախից ասես կտրւեց քար:

— Երկարի՛ր, մէկ տեսնեմ ձեռքդ, դրսից գոռաց քաջ Սանասար:  
Համզոն ձեռքը դուրս երկարեց ու Սանասարն մեղմով սեղմեց.  
Մէկ որ սեղմեց Համզոյի մօր ծծի կաթը՝ արեան հետ վառ՝  
Նրա մատի եղնգներից գետին հոսեց աղբիւրի պէս:  
Ահեղ ուժից այդ՝ սհաբեկ — Համզոն փախաւ Գոհարի մօտ:

— Պոչդ առած ոտքերիդ մէջ ո՞ւր ես փախչում շան պէս քոտոտ:  
Գոհարի այս կշտամբանքին Համզոն այսպէս պատասխանեց.

— Մի մարդ եկաւ քակեց դուռը. ես չի բացի. նորից քակեց.  
Ձեռքս բռնեց, սեղմեց մի քիչ, աննար հոգիս բերանս բերեց,  
Եղունգներիցս՝ մօրս կաթի հետ, ջրի նման արիւնս հոսեց:

Գոհարն հարցրեց — հսկա Համզո, չը սեղմեցիր ձեռքը նրան:  
Համզոն ասաց — այն ձեռք չէր որ, գերան էր այն հսկայական:

— Սասնա Ծուռը, Սանասարն է — քաջ ու անյաղք այն փահլե՛վան:

## 11

Ջրընգ, գրընգ, քակեց դուռը.  
— Բացէ՛ք — գոռաց յաղք Սանասար,  
Թէ չէ ձեռք դուռն ու երդիքը կանեմ հողին հարթ, հաւասար:

Գոհար վազեց, բացեց դուռը:  
— Բարով եկար քաջ Սանասար,  
Աչքիս, գլխիս վրա եկար:

Ձեռք ձգեցին իրար ուսին, մրմնջացին սիրո խօսքեր.  
Համզոն ելաւ մծղուկի չափ եւ դուրս փախաւ. է՛ն փախչելն էր:

Գոհարն ասաց.  
— Դու որ եկար նորից վրաս շողաց արեւ.  
Իսկ Համզոյի աստղը կորաւ ամպի ետեւ:

Ասաց — եկա,  
Մենակ եմ ես. դու ինձ լինես սէր ու ընկեր.  
Վայրի ծա՛ռ եմ — ինձ տաս ծաղիկ ու պտուղներ:

Գոհարն ասաց —  
— Մատաղ լինեմ քեզ պէս տղին, քաջ Սանասար,  
Ո՞րտեղ գտնեմ սիրող կտրին քեզ հաւասար:

Յետո ընկան իրար վզով, համբուրեցին վառ կարօտով  
Ու փոխեցին մատանիներն իրարու հետ սիրով խօսքով:

— Երբ որ հանեն Սասնա կալերն ոսկի շեղջեր,  
Երբ ամեն տուն դնի իրեն կարագն ու սեր,  
Դափ ու գուռնով քեզ եմ գալու, անգին Գոհար,  
Որ ինձ՝ ընկեր, ծաղիկ լինես Սասնա համար:

## 12

Եւ Սանասար քողեց Սիփան, ելաւ, գարկեց, գնաց Սասուն —  
Սիրտը պայծառ՝ Սասուն հասաւ՝ շաղով, շաղով բարի լուսուն:  
Եւ աղջիկներն կուժն ուսերին՝ գնում էին աղբիւր ջրի.  
Երգում էին գովքերը վառ՝ անյաղք ու քաջ Սանասարի:  
Դռան շեմքին բոց կարօտով մայրն իր որդուն էր սպասում.  
«Համզոյին էլ նա կը յաղքի» ինքն իրեն էր խրախուսում:  
Երբոր դէմքին վարդ ու ծիծաղ տղէն ելաւ մօր առաջին —

— Գիտէի որ դու կը յաղքես ե՛ւ Համզոյին, ե՛ւ Գոհարին:  
Երբ աւարտի մեր սարերում կալի շրջան,  
Մեղր ու հացով երբոր լեցւի ամեն մի տուն,  
Թող որ հնչեն դափն ու գուռնան ու նաղարան,  
Ուրախ երգով քող պար բռնի ամբողջ Սասուն:

— Համզոյին ես շուտ յաղքեցի — դա հեշտ բան էր.  
Բայց Գոհարի նետը դպար սրտիս անտէր,  
Եւ այդ վէրքից արիւն ելել, դարձել է գետ —  
Նրա սրտին էլ դպել է սիրո իմ նետ:

— Թող քեզ չի դպի աչքն օտար ու չար,  
Լինի քող հունձքդ ոսկի՝ ծովի պէս.  
Եօքն օր, եօք գիշեր, որդի՛, քեզ համար  
կանեմ հարսանիք եւ պար ու հանդէս:

Կալերն ելան, նաշխուն շորեր հագաւ աշուն,  
 Սասուն ամբողջ արաւ պարերգ ու ցնծութիւն.  
 Կիւղի միջին պարն էր զնգուն ժողովրդի,  
 Պարում էին մայր ու աղջիկ, հայր ու որդի:  
 Հարս ու փեսի գլխին առատ միրգ տեղացին,  
 Որ բեղմնաւոր լինին նրանք ու բազմածին:  
 Տարան յետո կանգնեցրին աղբիւրի ափ,  
 Որ հեշտ լինի նրանց կեանքի ընթացքն ու թափ:  
 Եւ հարսնետր այդ ժողովուրդն հանդիսատես,  
 Ասում էին որ չէ եղել հարս ու փեսա այդ գոյգի պէս:  
 Ոնց անտառում հասակ քաշած երկու չինար —  
 Այնպէս շէնդ, դալար էին սիրուն Գոհարն ու Սանասար:

Բաթմանի գետից մինչեւ ծովասար՝  
 Զմրուխտ արտերով, հօր մարդերով  
 Փուել էր Սանա աշխարհը պայծառ:  
 Սարերի լանջին ե՛ւ կանաչ, ե՛ւ գով՝  
 Հօտն ու նախիրն էր շարել մարգարտէ վզնոցի նման:  
 Եւ Սանասարի կողքին՝ զինավառ  
 Կանգնել էր Սանա մեծ ժողովուրդը հագար ու հագար:

Շատ երկար ապրեց Սանասար հսկան.  
 Եղաւ նա մանկալ, եղաւ նա հնձուր ու եղաւ կալուր.  
 Եղաւ նա հօր ու մարտար որսկան.  
 Եւ հեծած հրեղէն Մուրադ նժոյգը անցաւ սար ու ձոր:  
 Ու ձմեռն ամբողջ թռնրան շուրջ նստած՝  
 Պատմում էր իր կեանքն արկած առ արկած,  
 Թէ ոնց նա իրեն ձգեց կատաղած ծով  
 Եւ կղզին ելաւ ծաղկուն պարտէզով.  
 Թէ ոնց նա գտաւ զէնքերն դիւրօական  
 Եւ դարձաւ անյաղթ եւ անկոխ հսկան.  
 Թէ ոնց ժայռերից շինեց գիւղն ու տուն  
 Եւ ազատ այդ հողն անւանեց Սասուն:

Սիրուն Գոհարն էլ չինար հասակով՝  
 Ամառն հարսների հետ բեր էր գնում խաղով ու պարով.  
 Եւ ձմեռն ամբողջ երգերով նաշխուն  
 Գունագեղ կարպետ ու գորգ էր հիւսում,  
 Եւ շալ ու շապիկ քաջ Սանասարին:  
 Այսպէս բոլորի պէս գալիս, անցնում էր ամիսն ու տարին:

Երկու գաւակ բերաւ Գոհար — երկու տղա Սանա մեծ տան.  
 Առջնեկը քաջ Մհերն էր ու պատիկը՝ Ձէնով Յովհան.  
 Մհերն ծնած փահելվան էր — աւարկու ձայն Յովանն ունէր.  
 Մհերն՝ հօր ու անկաշառ — Յովան երկշոտ քայց բանգէտ էր:

Երբ Սանասար զգաց հասել է իր կեանքի արեւմար,  
 Թէ ոչ մի ձի չի տանելու նրան այլեւս դէպի պայքար,  
 Թէ քաղել է կեանքի ծառից նա ամեն թանգ միրգ ու պտուղ  
 Եւ մնացել է իր համար լոկ գոսացած եւ անբեր միւղ —  
 Կանչեց թիկնեղ Մհեր որդուն իր ծերութեան անկողնու մօտ,  
 Կանչեց կնոջ եւ Յովանին — իր քաջերին յաղթ ու սրտոտ.  
 Հատիկ, հատիկ որպէս դեղին սաթից շինւած անգին համրիչ՝  
 Այսպէս խօսեց Մհեր որդուն, մարտիկներին Սանա կտրին:

— Բարձր ու հպարտ մեր լեռներում մենք շինեցինք մի նոր աշխարհ  
 Զրկւածների ու մարտերի, անտունների եւ մեզ համար —  
 Մի նոր աշխարհ՝ ազատ հարկից, ազատ՝ դաւից ու տէրերից,  
 Ազատ՝ օտար իշխողների արիւնածոր գարշապարից:

Իմ օրերին չի բարձրացել ո՛չ մի կոպիտ, կեղեքիչ ձեռք.  
 Ո՛չ ոք եկել է տանելու մեր փողն ու հաց, մեր հօտն ու բերք,  
 Ո՛չ մէկ իշխան յանդգնել է մօտենալու մեր սարերին,  
 Եւ ոչ էլ մենք աչք ենք տնկել ուրիշների հողին, հացին:

Բայց գարունքին չի հնչելու էլ հորովելու ձեր երգի հետ,  
 Մեր կիրներում թշնամու դէմ չեմ բռնելու դիրք այսուհետ.  
 Ձեմ որսալու մեր լեռներում ձեզ հետ այժեամ եւ վայրի եզ,  
 Եկա տխուր որպէս մորմոք. գնում եմ ես վառ ժպտի պէս:

Ձե՛զ աւանդ եմ թողնում Սասուն — ազատ ու շէն մեր նոր աշխարհ,  
Ձե՛զ աւանդ եմ թողնում արի մեր ժողովուրդն բազմահազար.  
Պահէ՛ք նրանց դուք անվնաս ինչպէ՛ս լոյսը ձեր աչքերի,  
Սասնա Մոներն վիզ չեն ծոխ ոչ մի կարգի բռնաւորի:

Իմ թանգ Մհեր, առիւծ որդի, դու սիրտ ունես, ուժ ու եռանդ,  
Թուր — կայծակին, իմ Մուրադ ձին ես թողնում եմ քեզի աւանդ.  
Քեզ եմ թողնում գրահէ՛ շապիկն ու գոյգ գրահէ՛ մոյկը ոտին,  
Քեզ եմ թողնում գլխի կոտին եւ պողպատէ՛ քամար մէջքին:

Փառքի գարդեր չանես նրանց — զէնքերն այդ թանգ յաղթանակի,  
Դու նրանցով պաշտպան կանգնիր հալալ հացի եւ վաստակի.  
Եթէ նոյնիսկ կուրց խոյս տա մեն մի մշակն ու Սասունցին —  
Թուրը քաշած՝ դու մեն մենակ կուրի դաշտը քշիր քո ձին:

Եւ ամենքն էլ խոնարհեցին մեծ ծերունու սնարի մօտ,  
Գալիփների առջեւ վստահ, աչքերն պղտոր եւ արցունքոտ.  
Ասին — քո գործն անենք պիտի աշխատանքի, կուրի դրօշակ  
Եւ մեր վերեւ ամուր բռնած՝ պիտի գնանք դէպ յաղթանակ:

Սասնա չփնաղ մեր աշխարհին այսպէ՛ս շողաց սէգ Սանասար,  
Արեւի պէս մեծ ու բարի, արեւի պէս ջերմ ու պայծառ.  
Եւ հեռացաւ բոյրի նման, կախարդական երգի նման՝  
Յետեւ թողած անգին աւանդ աշխատանքի եւ քաջութեան:

Բ

Ա Ռ Ի Ի Թ Մ Յ Ե Ր

Սամասարի մահից յետո հագիւ անցել էր մի տարի.  
 Երբ զնգում էր Սասնա հողից մինչ հեռաւոր ծագն աշխարհի  
 Մհեր որդու հոչակն ուժգին, փառքը նրա դիւցազնական.  
 Հսկաներում՝ հսկա էր նա, հզօրների մէջ՝ փահլեվան:

Առիւծ Մհեր ձեռքն էր առնում ման ու մանգաղ ու գերանդի,  
 Լուսարացից մինչեւ մութը մեծ վաստակն էր տանում հանդի.  
 Բայց երբ Սասնա շուրջն էր ելնում սմբակների, ոտքի փռչին,  
 Մանն ու մանգաղն հանդն էր բողնում եւ ձեռքն առնում  
 Թուր — կայծակին:

Նրա կռիւն լսում էին Սասնա քաղերն հազար, հազար —  
 Հովիւ, մշակ, արհեստաւոր — ամենքն սպառաստ ու զինավառ —  
 Եւ թշնամու վրա ընկնում որպէս հրդեհ ու փոթորիկ,  
 Եւ ջարդուում էր գոռ թշնամին ոնց ժայռի դէմ բեկուղ ալիք:

Խաղաղութիւն՝ որպէս գազպին՝ իջաւ Սասնա ջրին, հողին,  
 Սասնա արի ժողովրդին — գնացողին, մնացողին:  
 Եւ բազմացան գառն ու մափին, եւ բազմացան ձին ու արջառ.  
 Թէ տասն էին — եղան հարիւր, հարիւր էին — եղան հազար:

Սասնա աշխարհն ծողկեց դալար, ելաւ թովիչ նոր հարսի պէս.  
 Համեղ մրգով, առատ բերքով կանաչացան հանդն ու պարտէզ.  
 Եւ սագն առան հարիւր գուսան եւ գովեցին քաջ Մհերին,  
 Սասնա փառքը, նրա կանանց, Սասնա շքեղ կտրիմների:

Սասնա հողից շատ, շա՛տ հեռու ապրում էր մեծ Մսրա իշխան.  
 Բանակներով գործ հաւաքեց, զարկեց, եկաւ, հասաւ Բաքման.  
 Որն՝ դեռ տղա, որն՝ նորահաս, որն՝ ալիսառն, որն՝ ալետոր.  
 Եկան տարբեր աշխարհներից, որն՝ ոտաւոր, որն՝ ձիաւոր:

Ելաւ փութով մարդ ուղարկեց Սասնա քաղաք Մհերի մօտ  
 Ոսկեշողուն հագուստներով եւ աչքերով չար ու ծահրոտ.  
 Տեսան տիտան մի գիւղացի նորոգում էր հսկա խովեր՝  
 Չեռֆին բռնած մի ահեղ մուրն:

— Սա է, ասին, Սասնա Մհեր:

Գարձաւ ու խօսեց մի պատգամաբեր.

— Սալամ ու յանգանք քեզ, հօր Մհեր՛ր,  
 Ողորմած իշխանն ունի շատ բարեւ,  
 Գեթ ողջունում է մեր Մսրա Արեւ:  
 Ասում է. — աշխարհին մի ոսկի նուռ է  
 Եւ նրա կամքը մերկացած թուր է.  
 Որտեղից ուզի — այն մասն է շերտում.  
 Որ մասն որ ուզի — այն շերտն է ուտում:  
 Նա Սասնա երկրին կը լինի բարի  
 Թէ՛ նրան հարկ տաք դուք ամեն տարի:

Ուզում է ձեզնից հարիւր բեռ ոսկի,  
 Հագար հատընտիր բեռնատար ջորի.  
 Ուզում է հագար լաւացեղ արջառ,  
 Հինգ հագար չուռ այծ, հինգ հագար ոչխար,  
 Հագար մթոյգ ձի ու հագար՝ մատակ,  
 Տիկերով լի՝ մեղր, տիկերով՝ կարագ.  
 Ուզում է հարիւր թխածամ աղջիկ,  
 Հարիւրը խարտեաշ — վարդից գեղեցիկ.  
 Եւ իր հանութեան եւ ուժի նշան  
 Այստեղ է թողնում մի հօր դեսպան:

Ասաց քաջ Մհեր՛ մեծ մուրնը ձեռքին՝  
 Մսրա ոսկեշոր պատգամաբերին.

— Թէ՛ որ եկել էք խաղ անում մեզ հետ —  
 Խաղում էք անմար, թէ՛ կրակի հետ:  
 Ազատ ու հպարտ Սասնա լեռներում  
 Մենք եւ ո՛չ ոքի հարկ չենք վճարում:

Գնացէ՛ք, ասէք ձեր գոռ իշխանին,  
 Թող թողնի գնա իր գործին, բանին.  
 Իսկ թէ մի անգամ մենք կուի ելանք —  
 Ձեզ փոշի կանենք ու քամուն կը տանք:

Ասաց բանբերը շորով ոսկեհուռ.  
 — Կամ մեծ իշխանին եղէք անձնատուր,  
 Եւ կամ ընտրեցէք դուք թուր ու կռիւ:

Գոռաց սէգ Մհեր.

— Ընտրում ենք կռիւ ...

Ձէնով Յովան ելաւ, կանչեց, գոռաց որպէս բուք, որոտում.  
 Նրա ահեղ ձայնը թնդաց համատարած Սասնա երկրում:  
 Ո՛վ հնձում էր — թողեց մանգաղն, հանդում թողեց իր գերանդին,  
 Սայլտրն թողեց սայլը նամբին, թէ ձի ունէր — հեծաւ իր ձին,  
 Ո՛վ քահ ունէր ձեռքին բռնած — թողեց բահը — առեց նիզակ,  
 Ո՛վ որ խուրձ էր կապում հանդում — գէնէր կապեց, վագեց քաղաք,  
 Ով դագգեհին շալ էր բանում — թողեց դագգեհին ու ստաւ թուր.  
 Եկան հովիւն ու գառնարածն, եկան բրուտն ու ջաղացպան —  
 Որն՝ արագոտն որպէս այծեամ, որն՝ աժդահա սարի նման:

Ելաւ, կանգնաւ Առիւծ Մհեր՛  
 Թուխ աչքերով ու գանգրահեր.  
 Հագար գրահէ շապիկն իր վառ,  
 Մէջքին կապեց պողպատ քամար,  
 Հագար գրահէ մոյլը ոտին,  
 Գլխին դրեց քաղախ կոտին.  
 Կողքին կախեց թուր — կայծակին,  
 Հսկա վահանն բռնեց ձեռքին,  
 Ամուր կապեց թամբ սաղափին,  
 Ելաւ հեծաւ հրեղէն ձին:

— Սասնա ժողովուրդ, ա՛յ, Սասնա Ծոեր,  
 Թշնամին կարծում է Սասունն՝ անտէր:  
 — Ապա ի՛նչ ենք մենք — մոխի՞ր, ոտքի հո՞ղ ...  
 — Ձէ՛, Մսրա գորգին ահ ու մահ բերող ...

— Թող շուտ ձի հեծնի, ով որ ձի ունի.  
 Գնում ենք մինչեւ գետը Բաքմանի.  
 Թող մեզ հետեւի ո՛վ որ ոտաւոր,  
 Ով կուի գործին վարժ է ու սովոր:

Փռչին ելաւ ամպի նման եւ տարածեց մինչեւ Քաթման.  
 Եւ այդ փռչաւ ամպի տակին Սասնա քաղերն գետը հասան:  
 Սարի սովոր տղերք էին — արագավագ որպէս այծեամ.  
 Իջան որպէս ահեղ մրրիկ, գարնան վարար գետի նման,  
 Շինեցին լաստ, դրին կամուրջ — անցան արագ այն միւս ափ:  
 Երբ վրնջաց Մհերի ձին — Մարա գորգին տիրեց սարսափ:  
 Ելաւ Մարա բանակն անծայր, որ չունէր թիւ, չունէր համար:  
 Հովին բացին անվերջ դրօշակ՝ մետաքսահիւս եւ գունավառ.  
 Հեծելագորն առաջ տուրեց որպէս յանկարծ ելնող հեղեղ  
 Եւ յետեւից անհաշիւ գորգ՝ ձեռքերն առած տէգ ու աղեղ:

— Վաղ ձեր կիները կը մնան այրի,  
 Է՛յ, սարի արջեր Սասնա աշխարհի.  
 Կանչեց իշխանը Մարա մեծագոր:

Մհեր միտ բերեց աւանդն իրեն հօր.  
 Դարձաւ եւ խօսեց Սասնա քաղերին.  
 — Յիշեցէք հօրըս պատուէրը վերջին —  
 Այնպէս պաշտպանեմք հողը մեր երկրի —  
 Ինչպէս պահում ենք լոյսն մեր աչքերի:

Եւ շողացրեց թուր — կայծակին — քաղեց, մտաւ Մարա բանակ  
 Եւ նրա հետ թռան արագ թէ ձիաւոր, թէ հետեւակ:  
 Այն որ չընկաւ նրանց թրից — ջարդեց ձիու ոտներն տակ,  
 Այն որ փրթաւ ձիու ոտքից — նրան խոցեց տէգն ու նիզակ,  
 Այն որ տէգից չընկաւ խոցուած — նրա գլխին իջաւ մահակ.  
 Ո՛վ չը կերաւ գլխին մահակ — գետին փուկեց բռունցքի տակ:  
 Մարա գորգը ալիք ալիք եկաւ թափուեց ծովի նման —  
 Ծովի նման յետ նահանջեց — ինքը փլած իրա վրան:

Մարա գորգերն ասին միմեանց.

— Սրանք մարդ չեն — դե՛ւ ու տիտան.

Ո՛չ մեր նետն է խոցում նրանց, ո՛չ մեր թուրը արարական:  
 Որպէս ալիք յետ, յետ ընկան — Սասնա քաղերն նրանց յետեւ:  
 Հագիւ ելել էր երկնում միջօրէի պայծառ արեւ  
 Երբ շողաղուսն այն դրօշներն անհետ եղան արեւի տակ.  
 Եւ նրանց տեղ երեւացին դրօշներ ձիւնի պէս սպիտակ:

Մարա գորգից առաջ անցաւ մի կին շքեղ որպէս չինար.  
 Եկաւ հասաւ Սասնա բանակ՝ ծամերն արձակ ու զինավառ.

— Ձեռքդ՝ կանաչ, սուրդ՝ հասու,  
 Արեւդ անմար լինի, Մհեր.  
 Մարն արիւր քեզ հարկատու  
 Եւ դու՝ նրա պաշտպանն ու տէր:  
 Խորտակեցիր ոտքիդ ներքո  
 Մարա գորգը ջարդ ու փշուր.  
 Գթաւ լինի թող սիրտը քո  
 Այդ խեղճերին որք ու տխուր:  
 Հրաման տուր որ տուն գնան,  
 Վառ արեւիդ աղօթք կարդան:  
 Ես էլ — Մարա իշխանի կին  
 Ողջունում եմ Սասնա քաղին:

Մհերն ասաց.

— Մարա հաթուն,

Ասա գորգին որ գնան տուն.  
 Ո՛ւր է էրիկդ, Մարա իշխան —  
 Նրան ասեմ մի երկու բան.  
 Մենք ուրիշին չենք ծոռում վիզ,  
 Հարկ չենք առնում եւ չենք տալիս:

— Երնէկ Սասնա, ո՛վ քաղ Մհեր,  
 Որ քեզ պաշտպան ունի ու տէր:

Ասաց Մարա շքեղ հաթուն, շիկնեց փափուր վարդի նման,  
 Շողաց նրա ծով աչքերում մի ցով սիրտ եւ հիացման.  
 Ու գլխիկոր թողեց, գնաց. Մհեր կարծեց որ մարել էր  
 Մի արշալոյս իրեն հագում եւ տիրում էր այնտեղ գիշեր:

Վերադարձան Սասնա քաղերն գոռ երգերով, ծիծաղներով,  
 Կանգնել էին հարս ու աղջիկ նրանց անցած ֆար ու ֆամբով.  
 Պառան ու ծերն թափում էին առատահոս գովք, օրհնութիւն.  
 Հօր էին Սասնա ծոռերն, անպարտելի էր դեռ Սասուն:

Քաղ Մհերին ջերմ ողջունեց նրա սիրուն կինը Սինամ.  
 Նրա հագում վառում էր դեռ պատկերն կնոջ այն գեղածամ,  
 Զգում էր նա որ այն կուռւմ յաղթողն Մարա վարդ հաթունն էր,  
 Որ խոցել էր իրեն սիրտը եւ անշոթա իրեն գերել:

Խոր կսկիծից, վշտից մեռաւ Մսրա գոռոզ ու չար իշխանն,  
Եւ վարդ խաթունն այն շողշողուն դարձաւ Մսրա տէր-տիրական.  
Ելաւ փութով Սասուն նամբեց հաւատարիմ երկու բանբեր.  
Առաւ նամակն անուշահոտ՝ յուզած կարդաց Առիւծ Մհեր:

«Սասնա առիւծ Մհերին, փահելվանին անմամն  
«Մսրա անբախտ խաթունից ողջոյն, ե՛ւ սէր, ե՛ւ սայլամ:  
«Այն կուռում որ, քաջ Մհեր, Մսրա գորգին յաղթեցիր —  
«Նրանց թողիր անշոքա — դու իմ հոգին գերեցիր:  
«Ես այն օրից չգիտեմ ի՛նչ է հանգիստ, ի՛նչ է քուն.  
«Ջնջիր հոգուցս քն դաղը — կամ տէր եղիր քն գերուն:  
«Մեռաւ իշխանն ամօթից երբ շահեցիր երկու մարտ —  
«Մէկը կռի՛ւն էր այն մեծ, մին էլ սի՛րտն էր իմ հպարտ.  
«Սիրտըս — պակած կարմիր վարդ՝ ոտքիդ տակն է, իմ յաղթող.  
«Վեր ա՛ն. նայիր կոխուած թերթիկներին արիւնոզ:  
«Հարուստ Մըսրն ու խաթունն, Մհե՛ր, քեզ են սպասում.  
«Մեմ տէր չունենեմ — դու արի եւ մեզ արա տիրութիւն:  
«Մետաքս բարձեր շարել եմ, ծովին բացել պատուհան,  
«Ծոցիս այգին ծաղկել է, արի՛, իմ թանգ պարտիգպան:  
«Սիրո գիրն այս փակում եմ համբոյրներով անսպառ.  
«Սիրտս եմ թափել նրա մէջ որպէս թանգ արնավառ.  
«Ինչպէս հանդը Նեղոսին — սպասում է սիրտըս քե՛զ.  
«Արի վարար Նեղոսի սուրբ, կենսատու ջրի պէս»:

Մհերն ասաց.  
— Ա՛յ կին, Սինամ, գիր է նամբել Մսրա խաթուն.  
Ասում է որ ես վեր կենամ գնամ իր տուն:

Սինամն ասաց.  
— Թէ դու գնաս Մսրա քաղաք, խաթունի մօտ՝  
Քառսուն տարի էրիկ չես ինձ — չես ինձ ծանօթ:

Վէճի մտան մարդն ու կինը երեք ցորեկ, երեք գիշեր,  
Ո՛չ մին արաց փոքր զիջում — ոչ Սինամը, ոչ էլ Մհեր:

Ելաւ Մհեր նամբէն ընկաւ, գնաց, հասաւ Մսրա քաղաք.  
Բազարներում՝ գանձ ու սպրանք — ամեն կողմ՝ ֆէօշկ ու  
աշտարակ.  
Եւ խաթունի հոխ պալատում՝ ոսկի սպասք, մետաքս ու բոյր,

Քառսուն ծառա՝ սաքի պէս սեւ եւ քառսունը խած, ճիւնաքոյր:  
Երջանիկ էր Մսրա խաթուն՝ յաղթ ու շէնշող Մհերի հետ.  
Նազան էր նա որպէս գեփիւռ, գարնան նման՝ բուրումնաւէտ:  
Երբոր անցաւ մի ժամանակ մի մանչ տղա բերեց խաթուն.  
Տօն սարքեցին Մսրա երկրում, պար, խրախնամք ու ցնծութիւն:  
Պալատում մեծ կոչումն արին, տղի անուն դրին Մելիք.  
Մսրա ժառանգն ու տէրն էր նա եւ անցքերին նրա գալիք:  
Թէ որ ուրիշ ամեն տղա ամսից ամիս էր մեծանում՝  
Մսրա Մելիքն օրից օր էր անում, փարթամ հասակ քաշում:

Մհերի մեծ սրտում կրկին վառեց սէրը իր լեռների,  
Յիշեց իր ճին, թուր — կայծակին, իր կորեկի արտը բերրի.  
Ի՞նչ էր անում սիրուն Սինամ, դեռ իրեն դէմ ֆէ՞ն էր պահում,  
Ի՞նչ էր անում ինքն հեռաւոր եւ տօթակէզ Մսրա երկրում:  
Ականջ դրեց — Մսրա խաթունն խաղ էր անում երեխի հետ.  
Մելիքն հագիւ ոտքն էր փոխում՝ իր մօր անհուն ցնծման անգէտ.  
«Մանըր, մանըր փոխիր տոտիկ,  
«Մայրն քեզ մատաղ, Մսրա Մելիք.  
«Մսրա օջախն դու վառեցիր.  
«Սասնա օջախն էլ մարեցիր»:

Մհեր կարծեց որ իր սրտում յանկարծ մխտեց արար դաշոյն:  
— Մնաս բարով, Մսրա երկիր, մնաս բարով, Մսրա խաթուն,  
Ինձ կանչում է մի վառ կարօտ, ինձ կանչում է հայրենի տուն.  
Ինձ կանչում է քաղցր Սինամ, անպարտելի, հպարտ Սասուն:  
Ոտքս կոտրէր Մսրա երկիրն ես չը գայի,  
Կուրանար աչքս ես խաթունին չը տեսնէի.  
Ուրիշի արտն ես ջրեցի — կանաչացաւ.  
Սասնա արտը թողի անջուր եւ չորացաւ:

Ուշ գիշեր էր երբոր Մհեր եկաւ, հասաւ Սասնա քաղաք.  
Իրենց տանը յոյսի նման պլպլում էր մէկ հատ նրագ.  
Թակեց դուռը, քակեց կրկին. ներսից Սինամն «ո՞վ է» ասաց:  
— Ես եմ, Սինամ, եկ, դուռը բաց:  
— Դուռ չեմ բանա ես քեզ համար,  
Օտար ես ինձ — ես քեզ օտար:

— Սինամ, մեղք եմ արել քո դէմ,  
Սասնա երկրի եւ իմ հօր դէմ:  
Մ'սրա օջախն վառեցի ես,  
Թողի Սասնա օջախն անտես:

— Երդւել եմ ես՝ քառսուն տարի  
Քեզի համար մնալ այրի:  
Գնա՛, քակիր ուրիշի դուռ,  
Իմ դուռն քո դէմ փակ է, ամուր:

Մեքն ելաւ, ընկաւ դռներ, դուրսն՝ աղամա մութ, կէս գիշեր.  
Բերեց եղբօրն ու տէրտրոջն, ու ծերերին շատ ալեհեր:  
Սինամ ելաւ բացեց դուռը. ու նստեցին ամենն կարգով.

— Սինամ, օրհնած, քո աչքը՝ լոյս, կտրիւնդ եկաւ հագար բարով.  
Ասաց բարի, ծեր տէրտէրը —  
Եւ ձայն տիւն միւսները:  
— Կտրի՛ն է նա — բայց իմը չի:  
— Հասպա ո՞ւմն է, որ քոնը չի:  
— Ո՛ւր էր — այնտե՛ղ քոն որ գնա,  
Նա ո՛չ իմն է, ո՛չ էլ Սասնա:

Ասին.—

Սինամ, երդումդ, որ կա, ե՛կ, մոռացիր.  
Մեք վառեց Մ'սրա օջախն արեւածիր.  
Սասնա օջախն քոնեց մարած եւ անկրակ:  
Մենք ձեզանից պահանջում ենք Սասնա ժառանգ:  
Քառսուն տարին արի, հաշիւը քառսուն վայրկեան,  
Թող միշտ շողա աստղը պայծառ Սասնա մեր տան:

Սինամն ասաց.—

— Սասնա սիրուն  
Ես Մեքին առնում եմ տուն.  
Նորից սիրով էրիկ ու կին,  
Նորից նոյն բարձն, նոյն՝ անկողին:  
Հօր իգիթ մարդու համար  
Երբեմն պէտք է սիրո աւար:  
Ինչո՞ւ կրճով երդւելի ես,  
Ու դրժելի երդումս այսպէս:  
Այն օր որ մեզ ծնւի տղա,  
Այն օր մեզի գալու է մահ:

Քաջ Մեքի դարձի լուրը քնդաց բոլոր Սասնա երկրում.  
Եւ քաղաքում ու գիւղերում վառեց ծիծաղ ու ցնծութիւն:  
Ամեն կողմից հաւաքեցին մարտիկները կարօտավառ  
Եւ Մարութա վանքի բակում մատաղ արին նրա համար:  
Ժողովել էր մեծ բազմութիւն — հարս ու աղջիկ, տղա ու ծեր.  
Եւ ամենքին ողջունում էր լուսածիծաղ Առիւծ Մեքը:  
Երբոր կերան մատաղն առատ եւ լսեցին սառն աղբիւրից՝  
Մեքն ելաւ մեծ կաղնու պէս՝ բոցավառած բուռն յուզմունքից:

— Իմ աննաւն, իմ հարագառ Սասնա քաջեր,  
Ջա՛ն ժողովուրդ, ձեզի մատաղ լինի Մեքը.  
Անկորձ էի Մ'սրա երկիրն երբ գնացի —  
Վերադարձաւ ես փորձառու եւ լսելացի:  
Թէ ուզում ենք ապրիլ ազատ հարկից, անից,  
Փրկել մեր վիզն օտարների արևոտ լծից —  
Ի՛նչ կրճեքով քշնամու դէմ կուով միայն  
Չենք քաղելու անգին վարդը մեր յարթութեան:  
Ժողովրդի կեանքը քանց է մեզի համար,  
Ամեն կրնի, անցքի մուտքին կանգնեմք պատար,  
Կանգնեմք բերդեր մենք անառիկ մեր հոգու պէս.  
Թող միշտ այնտեղ պատրաստ գտնի քշնամին մեզ:  
Գոմշու կուի օ՛րն անցել է. վա՛յ այն ազգին,  
Որ գէնք չունի, պատար չունի իրեն կրճին.  
Խշնամու դէմ պէտք է անխոց անենք Սասնա.  
Ես կառուցող մարտիկներ եմ ձեզանից ուզում:  
Վանքերի մօտ շինեմք պայծառ, մեծ դպրատուն,  
Թող մեր հոգին ծաղկագրւի քանց գրքերում.  
Գուսանների, պատմիչների երկերում վառ՝  
Մեր ժողովուրդն անմահ մնա դարուց ի դար:

Առաջ անցան քարհան, քարտաշ — առաջ անցան վարպետ,  
սայլուր.

Նկան հագար աշկերտ, մշակ ե՛ւ որմնադիր, ե՛ւ գործաւոր.  
Եւ մուրների գարկից գնաց Սասնա աշխարհն ու Յովասար,  
Նլան բերդեր ու դպրատուն եւ անցքերում՝ պատ ու պատար:

Եւ վիթխարի, սպառազէն իր լեռների փառքի նման  
Նլաւ Սասնա մեծ ժողովուրդն արեւաշող ու գովական.  
Կանգնեց առիւծ Մեքի շուրջ — պատրաստ՝ ամեն պատահարի —  
Հալալ դատի եւ վաստակի, անեղ կուի ու պայքարի:

Դարձեալ անցաւ մի ժամանակ — որպէս բուրմունք, որպէս  
երագ.

Ապրում էին հրկէզ սիրով — սիրողների պէս նորահաս՝  
Առիւծ Մհերն ու վարդ Սինամ, ապրում էին սպառելով,  
Որ միշտ ազատ մնա Սասուն իր հրաչւի կտրիններով:

— Մհեր, իմ քաջ, ես մեռնէի, ինչո՞ւ այսպէս երդում արի-  
Դէ՛հ, ես ոչինչ — ես ի՞նչ արժեմ — վայրի ծաղիկն իմ սարերի.  
Իսկ դու քաջ ես եւ իմաստուն, հօր մարտիկ ու ղեկավար.  
Ինձնից յետո հազա՛ր կը գան — քեզնից յետո՛ միայն խաւար:

— Թէ իմ մահով Սասնա համար պիտի ծնի մի լաւ ժառանգ  
Հազար գին են տւել կեանքիս — մահս եղել է աւելի քանգ:

Եկաւ, հասաւ այն մեծ օրը, Սինամ բերեց մի մանչ տղա —  
Առեց նրան սիրով սեղմեց իրա մարդ սրտի վրա:

Դեռ մահն չեկած, ասաց.

— Մհեր, տղիս անուն Դարիք դնէ՛ք,

Թող քեզ նման հօր լինի, եւ իմաստուն, քեզի պէս սէգ:  
Իմ քաջ Մհեր, այս մէկ օրը՝ ինձի արժէ հազար տարի  
Ես մի ժառանգ տւի Սասնա, մի նոր պաշտպան մեր աշխարհի:  
Դու իմ Մհեր, դու անմահ ես, պիտի ապրես դարեր անվերջ —  
Ին աննւան ժողովրդի պայքարների ու երգի մէջ:

Եւ դեռ չեղած օրն իրիկուն՝ նրա համար սեւ գիշեր էր:

Մարտիկների, Յովանի հետ Մհեր հանդարտ խօսում էր դեռ.  
Խօսում էր հին կռիւներից եւ դէպքերից հերոսական,  
Պատւիրում էր որ միշտ լինեն անվախ, գթոտ ու միաբան:

Ապա ասաց.

— Զէնով Յովան, Դարիքն տարէ՛ք Մսրա աշխարհ,

Թող Խաթունը մեծացնի մանուկ Դարիքն Սասնա համար:  
Թող սովորի կուրի գործը եւ շատ արհեստ, իմաստութի՛ւն.  
Որ իր օրով հօր լինի եւ բարգաւան մեր այս Սասուն:  
Հօրս քողած աւանդը մեծ՝ ձեզ քաջերին եմ աւանդում.  
Սիրով ապրէ՛ք, հօր կացէ՛ք, քողէ՛ք հանգիստ մեզ մեր քնում:

Եւ այն անուշ դէմքի վրա, ուր չէր իջել ո՛չ քեզ, ո՛չ ան —  
Իջաւ մշուշ եւ մառախուղ, իջաւ դալուկ եւ յետո ... մա՛հ:

Գ

Ս Ա Ս Ն Ա Դ Ա Ի Ի Թ

1

Միմամն ու առիծ Մհեր այսպէս վեհութեամբ մեռան .  
Տարան, քաղեցին նրանց լանջին Մովսասար լեռան,  
Ուր շէն կանգնում էր վանքը եւ ուր դպրատունն էր նոր,  
Որտեղ փուում էր Սասնա որսի անտառը խռչոր :

Նրանց նւիրումն այն վեհ, նրանց գործերը պայծառ  
Միշտ էլ մնացին անմահ Սասնա փառերի համար .  
Թէ վառ յաղթութեան ժամին, քէ յորդ արիւնի նամբին  
Անմար վառուել է նրանց բոցէ, անմահն հոգին :

Նրանք որք քողին Դաւիթին — իրենց բոցաւեր մանկան,  
Որին տէր կանգնեց իսկոյն նրա հորեղբայր Յովան .  
Ասաց Յովանի կինը — եղբորդ պատուէրը յիշիր —  
Ե՛լ ու երեխին անփորձ՝ Մսրա հաքունին նամբիր :

Ձէնով Յովանն էր ելաւ, ամուր փաքաքեց Դաւիթին .  
Բերեց նւերներ առատ — մեղր ու կարագ ու գազպին .  
Երկու փահլեվան կանչեց — երկու մարտիկներ հօր —  
Տեց երեխան նրանց, տեց խրատ ու յորդոր .

— Մսրա հաքունին կըտաք առիծ Մհերի որդուն .  
Կասէք, — Դու պահիր նրան, կաքովդ մեծացրու, հաքուն,  
Որպէս հարագատ որդուդ, որպէս արգանդի պտղիդ .  
Իրեն քող անտէր չգգա, նրան տուր կաք ու ժպիտ :  
Դուք էլ հսկեցէք նրան, որպէս ձեր աչքի լոյսին :

— Թէ որ ունենանք տա՛ս կեանք — նրան գոհ կանենք, սպին :

2

Մտրա Խաթունը սիրեց Դաւթին իր որդու նման.  
Առիւծ Մհերի սիրուն եղաւ նրա մայր, պաշտպան:

Մելիքն էլ ատեց նրան եկած առաջին օրից.  
— Նրանք հաստակող ազգ են, Սասնա սարերի պէս՝ ցի՛ց.  
Փորձանք կը լինի նա մեզ — այդ որբ, վայրենի լակոտ.  
Յետ, իր հօր տունը նամբիր, նրան մի պահիր մեզ մօտ:

Մտրա Խաթունը գունատ՝ աչքում արտասուք շողաց.  
Խոճոճ՝ Մելիքին նայեց, սաստիկ բարկութեամբ ասաց.

— Մելի՛ք, իմ կաթը քեզ հարամ կանեմ  
Թէ Դաւթի մասին մի վատ բան լսեմ.  
Զէ՛ որ Մհերի որդին է քեզ պէս.  
Թող փոքր եղբայր, ընկեր լինի քեզ:



Դաւիթ մեծացաւ արագ Գարնան ջրերի նման  
Վարար գետի պէս անգուսպ, հեղեղների պէս՝ յորդան:  
Ասես մրրիկ էր ահեղ՝ նրա մարմնի՛ մէջ փակուած.  
Ամպոտ օրսա պէս երբեմն՝ ուժգին պոռկում էր յանկարծ,  
Եւ վա՛յ նրան, որ դէմ գար նրան՝ ցասման այդ ժամին.  
Իսկոյն փշրում էր նրան յանձնում ցաւին ու մահին:

3

Լոյսն որ բացւէր՝ մեր Դաւիթն էր  
Գլուխն առնում, դուրս էր ընկնում:  
Շուրջն էր առնում շատ խաղընկեր.  
Լըփըրտըւում, վէզ էր խաղում:  
Նա դեռ հազիւ հինգ տարեկան  
Աչքեր ունէր բոցի նման.  
Ընկերները՝ իրնից շա՛տ մեծ  
Որն՝ տասներկու, որն՝ տասնեւվեց:

Մի օր գաղտնի խորհուրդ արին՝  
Մի խաղ անեն Սասնա Ծռին.

Իրենց վէզերում լեցրին կապար,  
Եկան Դաւթին խաղ անելու համար:  
Նրանք վէզ նետում եւ նո՛ւկ էր գալիս.  
Իսկ Դաւթի վէզը տարւել էր տալիս:

— Դեռ երեխա ես. գնա, սովորիր  
Ու յետո մեզ հետ դու խաղի ելիր:

Դաւիթ ծիծաղեց. — Է՛հ, խա՛ղ է, ի՞նչ կա.  
Խաղում քէ՛ տանել եւ քէ՛ տարւել կա:  
Գետնից վեր առաւ մի ծանր վէզ յանկարծ.  
Հօր մատներով ջարդ փշուր արաց.  
Վչքերում հոսեց խաւար եւ արին,  
Մոնչաց որպէս վիրաւոր կորին.

— Վա՛յ. դուք խարդալս Մտրա շնե՛ր,  
Ինձ ծաղր անելն ձեր բանը չէր:

Որին ձեռք տւեց, ձեռքերը կոտրեց,  
Որին ոտք գարկեց, ոտքերը ջարդեց.  
Որին աչքն հանեց եւ որին՝ ատամ.  
Որն կաղ տուն հասաւ եւ որն՝ հաշմանդամ:

Հայրերը ելան եւ ժողով արին,  
Մտրա Մելիքին գանգատ գնացին.  
— Դաւիթը որ կա — տղա չէ, գե՛ւ է.  
Դուրսը մի բողնէ՛ք — կապելու խեւ է:

Մելիք վար ատեց հօր բուրբ պատից —  
Արի՛ւն էր կաթում նրա աչքերից:

Դէմ վագեց մայրը. — Գժւե՛լ ես, տղա,  
Այսըր ի՞նչ է նա — մի մատ երեխա:

4

Խաթունն ասաց. — Դաւիթ, որդի՛,  
Մեր պարտիզում դու խաղ արա.

Դուրսը վխտում են անօթի  
Հագար տեսակ շուն ու տղա:  
Քեզ խաղընկեր ես կը բերեմ  
Հարուստ մարդկանց, ջոջի տղերք.  
Բուրբն էլ կիրք ու բարեդէմ,  
Ամենին ունեն շնորհիք ու խելք:

Դաւիթն ասաց. — Եւ, քո սիրուն  
Ես խաղ կանեմ մեծ պարտիզում:

Դաւիթն հաքունը պահակ էր դնում  
Նրա հետ եկած փահլեվաններին,  
Լսում էր Դաւիթն ամեն մէկ պատում,  
Ամեն վէպ, գրոյց հայրենի երկրին:  
Եւ նրա հոգում զնգում էին ջինջ  
Նրգերը հանդի, ձիերի խրխինջ.  
Եւ նրա մանուկ սրտում արեւոտ  
Վառում էր Սասնա սարերի կարօտ:

## 5

Մի օր էլ Դաւիթն այն մեծ պարտիզում  
Տղաների հետ խաղում էր կայտառ.  
Ցատկում էր, հսկա միւղերն էր բռնում  
Եւ նրանց վրա ելնում, նստում քառ:  
— Դաւիթ, ա՛յ Դաւիթ, մղերը ցա՛ծ բեր,  
Ճղերին նստենք ու խաղանք բարան.  
Ձայն տւին ջոջի անմար տղաներ:  
Ցած բերեց մի միւղ ու վրէն նստան:  
Դաւիթն որ ցատկում — միւղն վեր էր ելնում  
Եւ ֆաշում ուժով — գետին հասցնում:

— Բարա՛ն, քոնր, վեր քոնր,  
Մտա արեւը վառիր:  
Իջիր, բարան, իջիր ցած,  
Սասնա արեւն է մարած:  
Նրգում էին Մտա փուտեր՝  
Նստած մղին այն տարուրեր:

Դաւիթ կարծեց գլխին յանկարծ շա՛նք էր պայքեց.  
Ձեռնում ամուր բռնած միւղը մէկ բաց քողեց.  
Եւ քոնիջի մէջ նետահար քոնի մնան  
Մտա տղերք միւղերն ի վար գետին ընկան:  
Որն իր աչքը վրա տեսց, որն՝ իր ձեռքը.  
Որն կորցրեց իրեն ոտքը, որն՝ իր խելքը.  
Որին դէմքը այլանդակեց, որին՝ իրան.  
Ոմանք ընկած տեղից նորից վեր չի կեցան:

Ապրողներին առան իրենց հօր տուն տարան,  
Մեռնողներին էլ դրեցին ջամու դռան:  
Մտա ջոջերն, մոլլան եկան Մելիքի մօտ՝  
Սեւեր հագած, աչքերը՝ չար եւ արիւնտ.  
Ասին. — Ձեր տան մէկ հատ ծուռ կա Սասնա երկրից,  
Մի ծուռ տղա՝ այդ հաստակոյ ժողովրդից.  
Նա դարձել է Մտա երկրին մահ ու փորձանք.  
Կամ ագտոյր մեզ այդ անմար պատուհասից  
Եւ կամ քոյլ տուր որ հեռանանք Մտա երկրից:

Մելիքն իր հօր քուրը ֆաշեց  
Մանուկ Դաւիթ վրա վազեց.  
— Այդ հաստակոյ տղի համար  
Հարամ դարձաւ մեր հացն ու ջուր.  
Ես չեմ ֆանդի Մտա աշխարհ  
Ի՛նչ է մեզ մօտ մնա մի ծուռ:

Եւ քուրն զարկեց որ սպաննի  
Սասնա Դաւիթ հագին առնի:

Մայրը կանգնեց նրա դիմաց,  
Կանգնեց — նրա դէմքին ոչաց.  
— Ի՛նչ ես առել աղեղն ու քուր՝  
Եկել մի մատ տղի վրա,  
Թէ ուժով ես — ուժըդ ցոյց տուր  
Մարտիկներին՝ անյաղք Սասնա:  
Ի՞նչ է նրա օրն ու տարին,  
Որ գիտեմա չարն ու բարին:

— Դու միշտ պաշտպան կանգնիր նրա.  
Անմե՛ղ է նա, մի մատ տղա ...  
Շատ լա՛ւ գիտէ ի՛նչ է ամուս  
Սասնա վարագն այդ արնախում:

— Արի, որդի՛, մի փորձ անենք.  
Բերենք մի մեծ սինի ոսկի.  
Եւ մէկ սինի կրակ բերենք,  
Տեսնենք, որի՞ն ձեռք կը գարկի:  
Թէ ձեռք գարկեց թէ՛ կրակին —  
Անմեղ է նա գառան նման.  
Իսկ թէ նանկեց դեղին ոսկին —  
Մեղաւոր է — պատժիր նրան:

6

Մտրա Մելիքն համաձայնեց մօրն ասածին:  
Բերին փայլուն ոսկով լիքը ծանր սինին,  
Մին էլ բերին լիքը պայծառ, թէ՛ կրակով.  
Դաւթի առաջ տարան դրին իրենց կարգով:

— Դաւիթ, որդի, հիմա այսպէս որ խելօք ես,  
Ցանկանում եմ լաւ նւերով վարձատրելի քեզ.  
Բերել եմ քեզ արեւաշող երկու սինի.  
Ս'ն քեզ համար ո՛ր մէկից որ սիրտդ ուզի.  
Բայց մէկ սինուց միայն պիտի առնես նւեր:

Մայրն ու Մելիքն հսկում էին լուռ, անհամբեր:

Դաւիթն անքարք նայեց ոսկու ծանր սինուն.  
Նրա վրա թափած տեսաւ լաց եւ արիւն.  
Եւ գգուանով ոսկու սինուց դարձրեց երես:  
Մէկայ սինին շող էր տալիս արեւի պէս.  
Եւ ձեռք գարկեց վառ կրակի պայծառ սինուն:  
Ձեռքի կրակն բերան տարաւ, այրեց լեզուն.  
Այրեց լեզուն եւ բերանում դարձաւ բլիթ.  
Այն օրանից անունն մնաց թլոր Դաւիթ:

7

Դաւթի գլխով էլի անցաւ մի ժամանակ արկածալի.  
Հիմա նա մի պատանի էր վարդ այտերով եւ գանգրահեր:  
Մելիքն արդէն տէրն էր Մտրա, տէրը նրա փարթամ գահի.  
Նրան՝ ըստրուկ շատ ժողովուրդ էր հարկատու՝ շատ երկիրներ:

Սասնա երկիրն ազատ էր դեռ. բայց էլ չկար Սասնա Մեք.  
Մեծ էր Սասնա ժողովուրդը — պակասում էր լաւ դեկավար:

Մտրա Մելիքն ասաց.

— Չարկեմ երբ դեռ Սասուն չունի մի տէր:  
Ելաւ այնտեղ բանակ նամբեց՝ սպառազէն եւ անհամար:

Ձէնով Յովան՝ մեծերի հետ՝ նւերներով, աղաչանքով  
Դիմաւորեց Մտրա գորգին. ելաւ, գնաց մեծ պետի քով.

— Ա՛յ պետ, ասաց, քանն է Սասուն եւ բարեգուրք մեր Մելիքին.  
Մի գոհար էլ աւելանա թող սէգ Մտրա անգին թագին:  
Մենք հարկ կտանք ձեզ եօթը պորտ, աղօթք կանենք որ տէրն պահի  
Մտրա Մելիքն ողջ ու հաստատ Սասնա վրա եւ իր գահի:

Ասաց պետը.

— Մին որ եկանք Սասուն անեղ մի առիւծ էր.  
Հիմա կթան կով է դարձել, որ կաթ ունի եւ չունի տէր:  
Մտրա Մելիք տարածում է Սասնա վրա իր հովանին.  
Աղօթք արէք, որ տէր նրան հաստատ պահի միշտ իր գահին:  
Քանի հարկ տաք, խելօք լինէք — հաշտ կը նայի նա ձեզ վրա.  
Թէ դէմ գնաք նրա կամքին — ձեզ կը բերի աւեր ու մահ:

— Վերեւ հօր Աստուածը կա —  
Ներքեւումը՝ տէրը Մտրա:

— Ձեզնից ուզում եմ քանոնք բնա ոսկի,  
Քանոնք կարաս մեղր ու պանիր տիկի.  
Քանոնք գեղեցիկ աղջիկ շարմաղան,  
Քանոնք կարն աղջիկ, որ երկանք աղան,  
Քանոնք երկայն կին, որ ուղտեր բառնան,  
Քանոնք շէկ աղջիկ — աղախին դառնան,  
Քանոնք քաջ տղա, որ պատանդ մնան,  
Քանոնք կարմիր կով — քանոնք էլ կթան,  
Քանոնք նոր երկնք, քանոնք եզ լծկան,  
Քանոնք լաւ ջորի, քանոնք ձի վագան:

— Կը կատարենք քո հրաման,  
Համաձայնեց Ձէնով Յովան:

Քանոնք հողի հետ հաւասար մի քանի բերք, մի քանի վանք,  
Եւ հետն առած առատ գերի, շատ անասուն եւ շատ ապրանք՝  
Մտրա գորգը թողեց Սասուն, դարձաւ, գնաց Մտրա աշխարհ —  
Սասնա վրա դրած մի հարկ — ծանր որպէս տապանաբար:

Մտրա քաղ քում տօն սարքեցին եւ խրախօսանք յաղթանակի,  
Փողոցներում՝ քափոք ու երբ — շողիւն գէնքի ու նիգակի:  
Առանց կուի, առանց արեան Սասուն եղել էր հարկատու.  
Այն որ առիւծ էր մանչող — դարձել էր մի քոստ կատու:

Փահլեվաններն պատմել էին Դաւթին Սասնա դէպքերն այն սեւ  
եւ պատանու դալար սրտում ընկել էր մի ցաւ յարատեւ:  
Մեծացել էր Մտրա Մելիքն — եղել էր մի ահեղ տիտան.  
Գնում էր դաշտ ձիարշաւի, թրախաղի, հողի մրցման:  
Եւ նրա հետ դաշտ էր գնում Մտրա մէն մի ծանօթ մարզիկ,  
Գնում էին Մտրա մեծերն ու քաջերը նրա զարմիկ:

— Մելիք, որդի ցան, եղբորդ հետըդ տար.  
Բաւ է տան նստած ինքն իրան ուտի.  
Որք է եւ անտէր. նրան հոգատար  
Եղբայր ու պաշտպան լոկ դո՛ւ կաս, որդի:  
Վերցրու դու նրան, քեզ հետ դաշտը տար —  
Գուցէ իր հոգու մէջը փարատի:

Դաշտումն արշաւ կար ձիերի՝ քաջերը ծուփ որպէս ալիք.  
Քառասնակի թռչում էին որպէս մրրիկ, անցնող տարիք:  
Յետո եղաւ բուռն թրախաղ, շանթ էր ասես պայքում պայծառ,  
Երբ այն հզօր ձեռքերի մէջ թրերն քաղխում էին իրար:

Մտրա Մելիք վարժ էր ու փորձ մրցումներում այդ մարտական,  
Շահողն էր միշտ եւ առաջին — չկար ոչ մէկ նրա նման:  
Ապա եկաւ հողի մրցում. քոստուն լիդր կշռող հոլեր  
Այնպէս դիւրին էին նետում ասես փետուր եղած լիներ:

Դաւիթ դաշտում նստել էր լուռ եւ աւագի հետ էր խաղում,  
Հոլերը մօտ էին գալիս, սակայն, նրան չէին հասնում:  
Երբ Մելիքին եկաւ հերթը, ուզեց Դաւիթն ելնի տեղից.  
Ի՞նչ որ արին նա չը շարժեց, ձեռք չի քաշեց իրեն խաղից:

Մտրա Մելիքն ասաց. «լաւ է, կսպաննեմ ես նրան հոլով,  
«կասես տխուր մի արկած էր եկաւ, անցաւ Դաւիթի գլխով»:  
Առաւ հոլը ուժով նետեց, գնաց իջաւ Դաւիթի գլխին.  
Ասին. « Սասնա աստղն խաւարեց, հազար ամիսու Սասնա Դաւիթին »:

Բայց մէկ ձեռքով Դաւիթ բռնեց հողն ու նետեց ուժով այնպէս —  
Մելիք նետեց թէ կէս մղան — Դաւիթ նետածն էր Եօթն ու կէս:

Ամենքն ապշած կանգնել էին. ի՞նչ ուժ ունէր այդ պատանին.  
Եւ երբ հասնէր իր արբումքին — վայն էր նրա դէմ կանգնողին:  
Մելիքն այլեւս հող չի նետեց. եղէգի պէս դողում էր նա.  
Խափ խայտառակ արագ նրան կաթից կտրած մի երեխա:  
Հանդիսականքն ու մրցողներն վերադարձան տներն իրանց.  
Ողջ քաղաքը գովում էր քաջ մանուկ Դաւիթ ուժն գերազանց:

Մտրա Մելիք հասաւ տունը, դէմքն իր գունատ կաուի պէս:  
Մայրը հարցրեց.

— Հզօր որդի, ասա, ի՞նչ է պատահել քեզ:

— Մա՛յր իմ, այս անգամ կսպաննեմ նրան.

Ինձ ամբողջ Մտրում խայտառակ արագ.

Քո տուած կաթը դու արաւ հարամ,  
Հարամ՝ քո տարած ե՛ւ խնամքն ու հաց.  
Որ ձեռքիս հարածն անխալ լինի,  
Խմեմ իր արիւնն ոնց նռան գինի:

Մայրը քաղցրութեամբ կշտամբեց նրան.

— Իմ հզօր որդին, Մտրա մեծ Սուլթանն

Ձի անի երբեք այդպէս նստտ բան.

Ուզում ես աշխարհն վրադ ծիծաղի՞

Ասի — տւել ես խելիք մի տղի՞:

Դու մեծ թագաւոր, ահեղ փահլեվան՝

Ձեռքըդ չես խառնի մի տղի արեան:

Որ քաջ է Դաւիթ, ես հպարտ եմ շատ,

Ձէ որ կերել է նա իմ ծծի կաթ.

Ձէ որ Մհերի ծիլն է նա ուժեղ,

Որի հարազատ ընձիւղն ես շքեղ:

Նրան իմ կաթը չեմ անի հարամ

Ոչ էլ խնամքս, որ տւի նրան:

Մտրա Մելիք վնասեց մի կերպ Դաւիթն յանձնել ստոյգ մահին,  
Բաց ոչ մի խօսք չասել իր մօր այնուհետեւ նրա մասին:

Մայրն էլ զգաց որ իր սրտում Մելիֆ Դաւթին վնաս էր մահ,  
Ուզեց նրան շուտ յետ մամբել իր հայրենի հողը Սասնա:

— Մահից առաջ՝ հայրդ Մհեր  
Մեզի բողեց մի թանգ կտակ —  
Դա նորածին մեր Դաւիթն էր —  
Ձեր հոր նման բոց ու կրակ:  
«Պահէ՛ք նրան ինձի համար.  
«Եւ երբ լինի նա պատանի՝  
«Ճամբէ՛ք նրան Սասնա աշխարհ,  
«Որ ժողովուրդն անմահ լինի  
«Գործերի մէջ նրա անմեռ»:  
Այսպէս խօսեց Սասնա Մհեր:  
Մեծ եւ անմահ քո հոր սիրուն՝  
Արի, Դաւթին մամբենք Սասուն:

— Կը կատարեմ, մայր, ես իմ հոր կամքը վերջին.  
Մոռանում եմ Դաւթի խաղերն տղայական.  
Եւ այն փառքով, որ վայել է Սասնա քաջին  
Եւ կուզարկեմ իր հայրենի տունը նրան:

## 12

Բայց Մելիֆի դաժան սրտում միայն քէն կար, դառ ու արիւն:  
Կանչեց երկու յաղթ փահլեվան — վագրի պէս չար եւ արնախում.  
Որ Դաւթի հետ ընկնեն մամբա, բայց երբ հասնին Սասնա սահման՝  
Երկու քաղցած գայլերի պէս ընկնեն անմեղ Դաւթի վրան.  
Պատռեն նրա սիրտն ու արեան մէջ թաթալսեն մի թաշկինակ  
Եւ Մելիֆին բերեն որպէս արիւնագանգ մի յիշատակ:

Դաւիթ գնաց հաթունի մօտ ու կարօտով գրկեց նրան.  
Եւ փղձկացին նրանք յուզած, իրար գրկում շատ լաց եղան.  
Դաւիթն առաւ նրա ձեռքը եւ համբուրեց կրկին, կրկին.  
Հաթուն նրան սեղմեց գրկում ոնց մանկութեան վառ օրերին:  
— Դաւիթ որդի՛, ո՛ւր էլ լինես  
Սիրտըս քեզ հետ դառ տանում ես.  
Ով դէմըդ գա, ո՛ւմ դէմ կուես  
Յաղթանակը միշտ մնա քեզ:

## 13

Բուռն կարօտով Դաւիթ դիտեց Մսրա քաղաքն վերջին անգամ,  
Որտեղ սահել, անցել էին խռով օրերն իր մանկութեան.  
Ո՛ւր, հալածած իշխողների, կրօնաւոր դասի կողմից՝  
Նա գտել էր ժողովրդին ե՛ւ բարեկամ, ե՛ւ կարեկից:  
Թեթեւ սրտով նա ֆայլում էր որպէս այժեանն իր լեռների.  
Եւ յետեւից փսփսալով, դաժան՝ որպէս գոյգ բորենի  
Գնում էին փահլեվաններն մինչեւ հասան Բաթմանի գետ.  
Ուր մի առաւ գետն էր կտրում, միւս ամիսն լինում անհետ:  
Դաւիթ ֆայլեց դէպի կամուրջն, ուր կանգնել էր մի փահլեվան,  
Մէկն էլ գալիս էր յետեւից դէմքը մտայն ամպի նման:  
Ցածը՝ գետն էր հասում վարար — վագրի հագար ձիերի պէս,  
Վերեւ Սասնա լեռները սէգ, կատարների՝ ամպերի դէգ:  
Եւ հասկացաւ Դաւիթն, որ այն փահլեվաններն դա՛ւ եւ սարքում,  
Դարձաւ իսկոյն եւ շեշտակի նրանց արաց փորձ ու հարցում.  
— Այժմ էլ իմ դէմ դառ է՛ք սարքում  
Իմ հայրենի Սասնա երկրում.

— Ձէ, ուզում եմք որ ապահով  
Անցնես անձայր Մսրա հողով:  
Երբ կամրջի կեսին հասան, փահլեվանները կանգ առան  
Եւ կատաղած վագրերի պէս Սասնա Դաւթի վրա ընկան.  
Դաւիթ արագ բռնեց մէկին, մին էլ բռնեց միւս ձեռքով  
Յանձնեց նրանց վարար ջրին — այն արշաւող գետին վրդով:  
— Գնացէ՛ք, ասէ՛ք Մսրա Մելիֆին  
Թէ Սասնա Դաւիթ բարեւում է քեզ.  
Մեզ դէմ նենգօրէն դաւադ անխելին  
Ջէննեթն եմք մամբում անդարձ ջրի պէս:

Յետո մահակն իր շարժելով նա բարձրացաւ դէպի Սասուն:  
Ճաշոցն էր դեռ. հանգչում էին ե՛ւ մշակը, ե՛ւ անասուն:  
Ճամբի եզրը, խոտերի մէջ նստել էին մի խումբ հոտաղ,  
Շուրջը հերկած փխրուն հանդեր եւ լուրթ երկինքն միապաղաղ.  
Դաւիթն անյագ շնչում էր թարմ հոտն մերկիրան, բերրի հողի,  
Հո՛ղն, որ պառկել էր հեշտանքով եւ սպասում շաղի, շողի:  
Մէկ էլ Դաւիթ՝ մահակ ձեռքին՝ եկաւ, կանգնեց նրանց առաջ.  
Նրանց զրոյցն առեց դադար — դարձան նրանք աչք ու ականջ:  
— Բարի օր ձեզ, տղերք, ասաց.  
— Բարին վրէժ, մամբորդ աղբեր,  
Արի մեզ հետ բաժնիր մեր հաց.

Դաւիթ նստեց, շատ փառացած էր.  
Իր նիստն ու կաց Սասունցու չէր:

— Երեւի դու Սասնա մարդ չես.

Շատ աղքատ է մեր սեղանը:  
Մեղիքն եկաւ չար գողի պէս  
Բան չը թողնեց էլ մեր տանը:

Սարից խեց այծն ու մաքին,  
Շոր չի թողնեց էլ մեր հագին.  
Առաւ մեզմից իւզն ու չորթան,  
Տարաւ ջորին, եզը լծկան:  
Ե՞րբ է գալու մեր էն իգիթ  
Մտնում նստող Սասնա Դաւիթ:  
Կա մեզ փրկի Մտրա լծից  
Եւ մեր երկչոտ, փուչ մեծերից:

— Սասնա Դաւիթն որ կա — ես եմ.

Եկա որ ձեզ մէկտեղ բերեմ,  
Հոտաղ, մանկալ, հիւսն ու սայլուր,  
Բրուտ, մշակ, արհեստաւոր.  
Ելնենք նորից ֆաջերի պէս  
Մտրա լծից ազատենք մեզ:

Աղքատ սեղանը դարձաւ խնդուքիւն,  
Վառւեցին դէմքերն արեւի նման.  
Զգիտէին ֆո՞ւն էին թէ՛ արթուն  
Պայծառ արեւով լալազար գարնան:

Վազեցին ֆաղաֆ բարի լուր տալու.  
Զէնով Յովանը նստել էր դռան՝  
Նայն երկչոտ մարդը, մտածկոտ, հլու.  
Աչքերում շողաց լացը խնդուքեան  
Եւ վազեց, կանգնաւ մեծ մանապարհին,  
Որից գալիս էր Մեծերի որդին:

II

1

Դաւիթ եկաւ՝ ձեռքին մահակ՝ իր շուրջն առած մի խումբ հետաղ.  
Մարտական էր տեսքը նրանց եւ գնացքը՝ ժիր ու խիզախ:

Զէնով Յովան մտնովն ասաց.

— Զաւակն այս ծուռ՝ ֆաջ Մեծերի

Մի օր մեր խեղն Սասնա գլխին ցաւ ու փորձանք պիտի բերի.  
Բայց երբ Դաւիթն իր գիրկն առաւ, փղձկաց ամպոտ օրւա նման  
Եւ երկուսն էլ վառ կարօտով, լացով իրար վզովն ընկան:

— Դաւիթ, ա՛յ որդի, դու մեր ծաղիկն ես.

Սասնա աշխարհում դու մէկ հատիկ ես,  
Քոնն է մեր տունը, դո՛ւ ես նրա տէր,  
Ինչպէս որ երբեմն հայրըդ Մեծերն էր:

— Հօրեղբայր, մենք ոչ հող ունենք, ո՛չ տուն.

Քանի դեռ Մտրա հարկ կրտա Սասուն:

— Ի հարկէ մի օր Աստուած կողորմէ  
Եւ նորից Սասնա ֆաղցր կը նայէ:

Զեռքը դրած Դաւիթն ուսին, նրանք մէկտեղ տուն գնացին:  
Դաւիթն ելծում, հացը ուտում, դուրսն էր ընկնում լուսարացին.  
Հետն էր առնում հոտաղ, անգործ ֆաղփի տղերք թափառական  
Եւ նրանց հետ հոյ էր խաղում, կուի խաղեր դիւցազնական:  
Տուն էր բերում ո՛վ անօթի, ո՛վ գրկած էր ու սովաւեար  
Եւ դնում էր միրգ ու գինի, հաց, կերակուր նրանց համար:

Յովանի կինն աչքերում լաց,

Մեծ գայրոյթով մարդուն ասաց.

— Ա՛յ մարդ, թաղեմ ես քո գլուխ.

Կի՞ն ես առել ինձ թէ՛ հացթուխ.

Աստուած տղա ինձ չը տւեց

Որ տուն բերես այսպէս մի ցե՞ց:

Կամ դու նրան դիր մի բանի

Կամ թող Աստուած հոգիս առնի:

Ձէնով Յովան մի ժամանակ ուշք չի տւեց կնոջ խօսքին .  
 Ձէ՛ որ Դաւիթ պետն էր Սասնա, աւանդապահն նրա փառքին :  
 Բայց երբ տեսաւ նրա խաղերն էլ շա՛տ յանդուգն էին դառնում,  
 Սասնա տղերքն է՛լ մեծերին շան տեղն անգամ չէին դնում —  
 Ո՛ւր հանդիպում կանչում էին նրանց երկչոտ ու դաւաճան —  
 Ասաց, պէտք է այս լրբութեան մի կերպ դնել վերջ ու վախճան :  
 Պէտք էր Դաւիթին դնել գործի, որ կեանքն իրանց չի խանգարի,  
 Նորից հօր Մարա դիմաց չեղնի կուր ու պայքարի :

— Դաւիթ, որդի ջան, հացից պակաս եմք,  
 Չբուեց Ասուած մեզ մի բերք առատ .  
 Ծե՛ր եմ. ուժերս ինձ լքում են մէկ, մէկ  
 Կեանքիս աշունքին՝ տկար ու աղքատ :  
 Ե՛կ, մի բան արա՛, մտի՛ր մի գործի,  
 Որ լիքը մնա տաշտը մեր հացի :  
**Քեզ նախորդը անեմ եւ դու համիր սար**  
 Քաղաքի նախիրն, ոչխարն ու տաւար :

Դաւիթ ասաց .

— Լա՛ւ, հօրեղբայր,  
 Քաղաքի նախիրն կը տանեմ սար :

Ձէնով Յովան առաւ մի գոյգ պողպատէ սուլ, պողպատ կոռ,  
 Ասաց. «Ի՛նչը քաղաքի սարն է, մի քիչ հեռու՝ գառ Ծաղկաձոր  
 «Լուսաբացին նախիրըդ առ, հանիր կանաչ, գով արօտներ .  
 «Երբ մուրն ընկնի սեւ ֆօղի պէս — նախիրն նորից քաղաքը բե՛ր» :

Լուռ քաղաքի վրա ծագեց լուսաբաց .  
 Հագաւ Դաւիթն իր պողպատէ սուլեր,  
 Ձեռքն առաւ կոռը, նախիրն էլ՝ դիմաց  
 Շքեղ մեր նախորդն, քաջն այդ գանգրահեր :  
 — Հօ՛, հօ՛, հօ՛, նախիր, սարը կանաչ է,  
 Փռչու ամպն՝ ոսկի, լոյսը՝ կակաջ է :

Երգում էր Դաւիթ՝ տաւարը քշում  
 Դէպի սարերի լանջերը նախշուն :

Տեսաւ մօտակա գիւղից մի նախորդ  
 Հանել էր այնտեղ իր նախիրն ու հօտ :  
 Սիրուն տղա էր բոցէ մագերով —  
 Աչքերը կապոյտ որպէս վանա ծով :  
 — Ասաց. — ո՞վ ես դու .

Ասաց. — Ակոն եմ

Կաթնաղբիւր գիւղի ժամկոչի տղէն :

— Ես էլ Դաւիթն եմ, Մեքերի որդին .

Արի իրար հետ լինենք մենք աղբեր .

Դու աչքդ պահիր իմ կովին, հորքին . —

Ինձ բաժին հանիր մար ու մամբաներ :

Իրար գրկեցին ու աղբեր դարձան :

**Ծաղկել էր սարը ծիլերով գարնան,**  
 Աղբիւրն ու առուն կարկաջում էին  
**Երգերը սիրո՞ վառ ծաղիկներին :**

— Տօ՛, Ակո, աղբեր, անօրի մեռա,  
 Ասես եօթ տարի չեմ կերել մի բան .

— Ա՛յ Դաւիթ, ասաց, ինձ մօտ բան չկա .

Մատաղ են եփում մեր ժամի դռան .

Գնամ սպասեմ ես էլ իմ կարգին .

Երբ ժամն աւարտի — բերեմ մեր բաժին :

— Ձէ՛, կաց ու նախիրն դու մտիկ արա

Ես գիւղ կը գնամ եւ կըգամ հիմա :

Եւ ձեռքին առած իր կոռը պողպատ

Դաւիթ ժամի դուռ հասաւ շնչահատ :

Եօթն օջախ ու եօթ հատ կաթսա կային :

Համով մսի հոտն ողջ գիւղն էր բռնել ,

Բերնից ջուր վազեց Դաւիթ հսկային —

Միքէ հնա՞ր էր ժամին սպասել :

Ելաւ իր կոռը կանթում մտցրեց ,

Հսկա մի կաթսա իր ուսին ձգեց

Եւ բռնեց սարի մամբէն այն դժար :

Հասաւ ու նայեց նախիրը չկար .

Ակոն էլ նստած տխուր լալիս էր .

— Ո՞ւր է նախիրը, ի՞նչ է պատահել :

— Դու որ գնացիր՝ գողերը եկան  
Ինձ լաւ տփեցին, նախիրն էլ տարան:  
— Ո՞ր կողմ գնացին, այն ո՞ր մէկ նամբով:  
— Այն բարձր սարի ծաղկաւէտ լանջով:  
Մատաղի կաթսան ուսից դրաւ ցած,  
— Ակո՛, դու աշտեղ, մատաղի մօտ կաց.

Կր գամ ես նախիրն իմ առաջ ձգած:  
Կողը շարժելով՝ հեռացաւ, գնաց:  
Գնաց, տեսաւ ֆառասուն դեւ, ֆառասուն լիրբ, չար աւագակ՝  
Մի ջրի ափ կարգով նստած՝ անոււմ էին ֆէժ ու կատակ.  
Քիչ վերելոււմ վառել էին կրակ ոնց սիրտն իր բորբոքած.  
Ու թժժոււմ էր նրա վրա համեղ գառան թարմ խորոված:  
Ժայռերի տակ բառաչոււմ էր նախիրն նրա եւ Ակոյի.  
— Ես գրող եմ բերել ձեզի, է՛յ դու՛ գողեր ու հարամի,  
Բաւական չէ որ կողոպտի Մելիք Սասնա ժողովրդին,  
Հիմա դու՛ էլ վիշապի պէս ծանրացել է՛ք նրա վզին:

Ասաց, շարժեց կողն իր պողպատ եւ գողերի վրա ընկաւ.  
Շա՛նթ էր ասես պայթեց յանկարծ, համաճարակ, անդարման ցաւ  
Ոչ ոք պրծաւ նրա ձեռքից, ամեն գլխին իջաւ կողը.  
Եւ ամենքին էլ խաւարեց արեւը վառ, մթնեց օրը:

Յետո գոռաց նախրի վրա — վախից ելան հագար գազան  
Եկան, մտան նախրի կարգին եւ վագն ի վագ սարը հասան:  
Շատ սրտոտ էր թէն Ակոն, բայց որ տեսաւ աշտան գազան  
Ահից պայթեց նրա լեզուն, դէմքը դեղնեց մտի նման:

— Ա՛յ տնաշէն, ի՞նչ եղաւ քեզ.  
Մէկն ունէիր — տասն արի ես:  
Ասաց նստեց Ակոյի մօտ. կերան մատաղն ու խորոված  
Եւ խմեցին ակի ջրից երբոր մաշոցն իսկ չէր եղած:  
Մէկ էլ տեսաւ գազանները նախրի վրա եւ յարձակոււմ,  
Իսկ նախիրն էլ սարսափահար բառաչելով յետ էր փախչում:  
Այնպէս գոռաց գազանների, ահաբեկած նախրի վրա  
Որ տաւարին, գազաններին տիրեց սուկում, անթափանց ա՛հ:

## 5

Ճամբին ֆրոնաթալս, փռչոտ ու խոնջած՝  
Ձէնով Յովանը երեսաց յանկարծ —  
Հացի մի հսկա կապոց իր մէջքին.  
Այն ի՛նչ էր տեսաւ. վա՛յ նրա աչքին:  
— Դաւիթ, արի, քո հացը տար.  
Ծերացել եմ, ուժից՝ տկար.

Օրը շոգ է, նամբէն՝ դիժար.  
Արի՛, որդի, քո հացը տար:  
— Դու ինձ դրել ես շատ դժուար բանի.  
Սա նախիր չէ որ — կրակ ու ֆամի:  
Այնքան եմ վագել նրանց յետելից  
Դուրս եկաւ աննար հոգիս բերանից:

Ձէնով Յովան ֆաղաֆ հասաւ լեղապատառ.  
Կանգնաւ ֆաղի մեծ մեյդանում. կանչեց

« Հ ա ռ ա ՛ ը ... »

Փակը դրէ՛ք ձեր դուռ ու տան.  
Մութը չընկած մտէ՛ք ձեր տուն.  
Դաւիթ առել անթիւ գազան  
Սարից կը գա էս իրիկուն:  
Դուռ մի բանաֆ նախրի առաջ —  
Բերում է գէլ, վարագ ու արջ:

Կողը՝ ձեռքին, սուր՝ մաշած Դաւիթն եկաւ՝ նախիրն առաջ.  
Բարձրանում էր ահեղ մոռունչ, ոռնոց, մաշուն, գոռ ու բառաչ.  
Եւ ամեն ոք տուն էր մտել — դուռն ու երդիքն ամուր փակած.  
Դաւիթն եկաւ, հասաւ մեյդան եւ ահարկու ձայնով գոռաց —  
— Ելէ՛ք, ելէ՛ք, դռներ բացէ՛ք.

Տաւարներին շուտ ներս առէ՛ք:  
Թէ որ մէ՛կն էր — տա՛սն եմ արել,  
Թէ որ տա՛սն էր — ֆսան արել,  
Թէ ֆսա՛ն էր — արի ֆառսուն,  
Թէ ֆառսա՛ն էր — հարիւր-յիսուն:

Բայց ոչ մէկ մարդ դուռ չը բացաւ. նախիրն անտէր փողոց մնաց.  
— Տարօրինակ ժողովուրդ եմ, նախիրն անգամ ներս չեն առնում.  
Ասաց Դաւիթ խիստ բարկութամբ, յօրանջելով թողեց, գնաց.  
Գլխին դրաւ ֆարէ մի բարձ եւ մի խոր ֆուն մտաւ իսկոյն:

## 6

Գէլն ու գազանն սարերն ելան. Սասնա վերել կախուց լուսին  
Դուռը բացին եւ ներս առան այժին, կովին, աւանակին.

Եւ ահարեկ Սասնա ֆաղաֆ՝ գագանների վախից արքուն՝  
Մարեց ամեն լոյս ու ճրագ եւ տներից ներս առաւ քունն:

Երբ ծաղկել էր արեւածագ հաւաքեցին ֆաղֆի ծերեր.  
Տեսան Դաւիթ՝ ֆարը գլխին՝ մեծ մեղմաւում քնում էր դեռ.  
Պողպատ կուռը դրած կողքին, պողպատ սուրն՝ ոտքին մաշած:  
Ասին — Մեղֆ է այս հսկային անել նախորդը կամ գառնարած.  
Նետն ու աղեղ թող ձեռք առնի եւ սարերում գնա որսի,  
Գուցէ հզօր իր գործերով մի օր Սասնա վրա լուսի:

Եկան, հասան Յովանի տուն, նրան քնից հանեցին վեր  
Ծեր Յովանի յոգնած դէմքին դեռ երեկւա վախն էր նստել:  
— Զէնով Յովան, տո՛ւ, հէր օրհնած,  
Գթա դու մեր տանն ու տեղաց.  
Փրթաւ մեր սիրտ, վախից մեռանք,  
Էդ ի՛նչ խա՛ղ էր, էդ ինչ՝ հանաք:  
Թող չի գնա տաւարի հետ,  
Նրա ձեռք դիր աղեղն ու նետ  
Ու թող դառնա մի փորձ որսկան —  
Մհեր հօր պէս՝ մեծ փահլե՛վան:  
Օ՛ր է, կելնի հօր պէս, նորից,  
Մեզ կագատի Մարա լծից:

7

Զէնով Յովան Դաւիթի համար առաւ մի հին նետ ու աղեղ,  
Տւեց նրան. ասաց երթա ֆաղֆից հեռու, մի յարմար տեղ  
Իրեն համար լաւ որս անի — զարկի ննդուկ, կաֆաւ ու լոր,  
Մինչեւ գուցէ նա մի բանի, մի լաւ գործի ընկնի մի օր:

Դաւիթն առաւ նետն ու աղեղ, գնաց, գտաւ ընկերներին.  
Եւ մեծ ֆէճով, գոռ երգերով ֆաղֆի դռնից դուրս գնացին:  
Տեսան մօտիկ բլրի լանջին մի գմբխտեա կորեկի արտ.  
Եկել էր մի լորի երամ եւ արտի մէջ իջել հանդարտ:  
Տղերքն առան աղեղն ու նետ եւ լորերի յետեւն ընկան.  
Նրանց հզօր ոտների տակ թռչնեց ցանքը վարդի նման:  
Մագերն ձիւնի պէս սպիտակ՝ տնից ելաւ մի պառաւ կին,  
Ճչաց խոցած վագրի նման եւ ձեռները խփեց գլխին.

— Դաւիթ, գրող քեզի տանի, մահը տանի.  
Մարա չարածն միթէ հա՞յը պիտի անի.  
Ունեմ, չունեմ այս մի փոքր կորեկի արտ,

Այնտեղ շատ կան այծեամ, եղնիկ, վայրի ոչխար:  
Լո՛ր եւ ուզում, լորը վրէժ լինի սեւ դարդ:  
Ո՛րս եւ ուզում — գնա՛ քո հօր մեծ որսի սար.  
Ի՞նչ եւ ոտով տալի յայտը խեղճ պառաւի,  
Ի՞նչ եւ յանձնում անտէր մի կին հոգսի, ցաւի:  
Դաւիթն քուց գլխին մի մեծ ֆար զարկեցին.  
— Մայրիկ, ասաց, մեռնեմ քեզի, քո արեւին,  
Ո՛ւր է, ասա, Սասնա երկրի որսի սարը:  
— Գեղ թող ցայց տա քո այն երկչոտ հօրեղբայրը:

Զեռֆին աղեղ՝ Դաւիթ գնաց հօրեղբօր մօտ.  
— Թէ որ մեռնէ էլ ունեմք Սասնում մի որսի սար  
Ինչո՞ւ փակւած դրախտ է այն մեզի համար:  
— Ինձ էլ յաճախ չարչարում է որսի կարօտ.  
Բայց երբ մեռաւ հզօր հայրդ — Սասնա Մհեր,  
Եւ մեր աշխարհն մնաց անդեկ, մնաց անտէր՝  
Մարա Մելիքն եկաւ, խփեց սարն այն որսի —  
Այն օւանից փակւած դրախտն է այն մեզի:  
— Ասա, ո՞ւր է սարը որսի, է՛՛յ հօրեղբայր,  
— Այնտե՛ղ է այն — բարձր ու կանաչ էն Ծովասար:

8

Ելան Դաւիթն ու հօրեղբայր եւ գնացին որսի սարը.  
Ուշ էր արդէն. վերմակի պէս իջան գիշերն ու խաւարը.  
Եւ հոտաւէտ անտառն այն քաւ եւ Դաւիթն ու Զէնով Յովան  
Այն աստղահիւս եւ մետաքսէ վերմակի տակ խոր քուն մտան:

Ուշ գիշերին Դաւիթ զարթնեց. ասես մէկը ձայն էր տւել.  
Պառկած տեղում մտածում էր թէ աշխարհքը ո՛նց էր փոխւել.  
Երէկ՝ Սասուն հարկից ազատ մի կենսուրախ ժողովուրդ էր,  
Հիմի՛ վզին մի ծանր լուծ, ձեռքին՝ կապ ու շղթա ունէր:

Մէկ էլ տեսաւ ծառերի մէջ շողաց պայծառ լոյսի մի սիւն  
Եւ հրեղէն շուշանի պէս բողբոջեց այն թանձր մթում,  
Ելաւ, գնաց, մօտից նայեց գեղեցկութեան սյոյ լուսավառ  
Որ նոր ձեւ էր առել արդէն եւ կապել էր շփեղ կամար՝  
Մի աւերակ շէնֆի վերեւ ֆանդած Մարա գորֆի ձեռքով:  
Վերադարձաւ. հօրեղբայրը դեռ պառկել էր խաղաղ քնով.

— Հօրեղբայր, դէ՛հ, վեր ելիր.  
Ա՛յ հօրեղբայր, շուտ վեր ելիր.  
Բացել է մարմար ֆարը,  
Կապել է լոյս — կամարը:

Ձէնով Յովան աչքն որ բացաւ, տեսաւ լոյսի այն վառ կամար,  
Խաւարի մէջ կռկռն բացած որպէս կախարդ մի նունուֆար.  
Վազեց, տեսաւ կաթել էր այն հիմքի վերեւ հին դպրատան,  
Ո՛ւր գուսաններն երկնում էին երգեր հացի ու ֆաշուրեան,  
Տաղեր սիրո եւ վաստակի եւ փառապանծ յաղթանակի.  
Ուր գիտուններն պեղում էին դաշտն լուսածու, լուրք երկնքի,  
Քննում էին արմատ ու բոյս, ծիլ ու ծաղիկ, խեժ ու կեղեւ,  
Որ մարդկանց կեանքն անցաւ լինէր, օրը նրանց՝ երկարատեւ.  
Կամարների ներքեւ բարձր՝ նոյս գրատան մատենակիր՝  
Դպիրները գրում էին մագաղաթ ու գիրք ծաղկագիր.  
Եւ խնկախոտ, աղօտ ժամում ե՛ւ միաբան, ե՛ւ արեղան  
Հանդարտ ձայնով կարդում էին եղբայրութեան աւետարան:

Մտա գորքը կործանել էր հարուստ վանքն ու գրադարան,  
Եւ գուսանին, դպիրներին արել ցրիւ, անդաստական:  
Բայց անում էր դեռ արւեստի, եղբայրութեան հուրը պայծառ.  
Ժողովրդի հոգում որպէս կախարդ լուսէ մի նունուֆար:

## 9

Չը քնեցին նրանք այլեւ. չֆացել էր լոյսն այն շքեղ,  
Նրանց հոգում բարձրանում էր խառն մտքերի մի յորդ հեղեղ:  
Երբոր նորից Մովսարին ծագեց ոսկի մի առաւօտ՝  
Ձէնով Յովան նստեցրեց Դաւթին մարմար այն ֆարի մօտ.

— Չարինք, ասաց, ինչոր հայրըդ մահաւ ժամին մեզ ասել էր  
Երբ հայրդ մեռաւ՝ Մասուն մնաց առանց դեկի, մնաց անտէր.  
Մեղիքն եկաւ ֆանդեց շուրջի բարձր պարիսպն ու պատարը,  
Քանդեց բերդը, Մարութա վանքն ու դպրատունն ու տաճարը.  
Եւ հարկատու արեց իրեն հօր Մասուն:

Բոցավառեց Դաւթի հոգին, իր աչքերից կա՛յծ էր ժայթֆում —  
Որքան պիտի մնա Մասուն այսպէս աւեր ու անխնդում:  
— Ինչ որ Մեղիք ֆանդեց՝ նորից պէտք է շինենք.  
Պարիսպ ու բերդ, վանք ու պատար, դպրատան շէնք:

Հօրեղբայր, ես ուզում եմ հարիւր ֆարհան, որ ֆար կտրեն

Հօրեղբայր, ես ուզում եմ հարիւր ֆարտաշ, որ ֆար տաշեն,  
Հօրեղբայր, ես ուզում եմ հարիւր հատ սայլ, որ ֆար կրեն,  
Հօրեղբայր, ես ուզում եմ հագար սարակ որ հող տանեն,  
Հօրեղբայր, ես ուզում եմ հագար աշկերտ, որ ֆար քալեն,  
Հօրեղբայր, ես ուզում եմ հարիւր վարպետ, որ պատ շարեն,  
Հօրեղբայր, ես ուզում եմ հարիւր լաւ հիւսն, որ դուռ շինեն:  
Մասնա հոգին պէտք է կրկին մոխիրներից ելնի պայծառ՝  
Ինչպէս գարունն է բողբոջում մեր սարերում հրաշափառ:  
Ձէնով Յովան ելաւ, կանչեց.

— Ականջ արէ՛ք, Մասնա աշխարհ,  
Նորից պիտի շինենք պարիսպ, պիտի շինենք բերդ ու պատար,  
Պիտի շինենք նոր դպրատուն, պիտի շինենք վանք ու տաճար.  
Ուզում եմ մենք հարիւրական ֆարհան, ֆարտաշ ու որմնադիր,  
Ուզում եմ մենք հարիւրական հիւսն ու սայլուր, սայլ բեռնակիր:

## 10

Յովանի ձայն ոնց խնդութիւն զնգաց ամբողջ Մասնա երկրում,  
Եւ գիւղէ գիւղ եւ հանդերում հնչեց ծիծաղ, երգ ու ցնծում:  
Թէ ուզել էր հարիւրական — եկան պատրաստ տասնեակ հարիւր.  
Մեծ կառուցման երգից քնդաց լեռն այն գլորուխտ, եղեւնաբոյր:  
Ելան պարիսպն ու պատերը, ելաւ բերդը, ելաւ պատար՝  
Առաջւանից շատ հոյակապ եւ փառակերտ ամեն մի ֆար:

Դաւիթն առնում էր մեծ ֆարեր, հանում բարձր պատերն ի վեր,  
Ո՛ւր որ դժուար գործի կանչ կար այնտեղ ծիծղուն նա կանգնել էր:  
Եւ լրացաւ ամեն մի շէնք, ամեն պարիսպ, բերդ ու պատար  
Սեսս հօր մի մեծ մոգի գաւազանի ներքեւ նարտար:

Պահակ դրաւ նա բերդերում, պարիսպների մէն մի դասն.  
Կանչեց Մասնա մարտիկներին, որ զէնք առնեն ու որսի գան:  
Գնաց մտաւ Մարութա բերդ, գնաց մտաւ նոր դպրատուն —  
Այսպէս խօսեց իր հօրեղբոր՝ լացն ու ծիծաղն իր աչքերում.

— Կանչիր քոզ գան եօթը ֆերթոզ  
Վառ երգերով եւ լուսաշող.  
Եօթն իմաստուն, լաւ գիտնական,  
Որ բնութեան գաղտնիքը տան.  
Քառսուն նաղաշ, ֆառսուն դպիր՝  
Գրեն գրքերն մեր ծաղկագիր.  
Քառսուն երէց ու միաբան,  
Որ ֆարագեն ժողովրդեան  
Եղբայրութեան Աւետարան:

Սասնա ջոջերից մի մատնիչ, մի ցեց  
Մսրա Մելիֆին իսկոյն լուր քամբեց.  
Թէ Դաւիթ շինել է բերդ ու պատար,  
Հաստ պարիսպներով պատել Ծովասար,  
Վանքն ու դպրատուն կանգնել է պայծառ,  
Հանել է Սասունն էլի զինավառ՝  
Մսրա զօրքի դէմ կուելու համար:

Մելիֆն իրեն մօր գնաց ու ասաց.  
— Տե՛ս Դաւիթըդ ի՞նչ ապուր է կերած.  
Շինել է նորից բերդեր ու պատար,  
Հաստ պարիսպներով պատել Ծովասար,  
Վանքն ու դպրատուն սարքել է պայծառ,  
Հանել է Սասունն էլի զինավառ՝  
Մսրա զօրքերի դէմ կուելու համար:  
— Ի՞նչ, ուզում ես նա սողա՞ ռաֆիդ տակ,  
Լինի հարկատու, անխօս հպատակ:  
Դու քո տեղում կաց, նա էլ՝ իր տեղում  
Թէ որ չես ուզում արցունք եւ արիւն:

Բարկացաւ մօրը, ելաւ ու գնաց  
Եւ իր մեծերի հետ խորհուրդ արաց:  
Խօսեց Կուր Բաղին՝ մի գոռ զօրավար.  
— Թող ապրած մնա արքան բարերար,  
Թէ ինձ ընկեր տա զօրք ու փահիվան  
Կը գնամ Սասուն կը բերեմ թալան:  
Կը քանդեմ բերդը, կը քանդեմ պատար,  
Կը քանդեմ վանքը, պարիսպն ու տանար,  
Կը ջարդեմ Սասնա քաղաքին հազար,  
Սասնա նրազը կանեմ ես խաւար:  
Ինձ հետ կը բերեմ քառասուն բեռ ոսկի,  
Քառասուն կարաս մեղր եւ պանիր տիկի,  
Քառասուն գեղեցիկ աղջիկ շարմաղան,  
Քառասուն կարն աղջիկ, որ երկանք աղան,  
Քառասուն երկայն կին, որ ուղտեր բառնան,  
Քառասուն շէկ աղջիկ, աղախին դառնան,  
Քառասուն քաջ տղա, որ պատանդ մնան,  
Քառասուն կարմիր կով — քառասունն էլ կթան,  
Քառասուն նոր երինջ, քառասուն եգ լծկան  
Քառասուն լաւ ջորի, քառասուն ձի վազան:

— Քաջ Կուր Բաղին,  
Որքան ուզես ա՛ն փահիվան,  
Մէկ լաւ դաս տուր էդ ծոերին  
Որ դէմ չերթան էլ մեր կամքին:

Կուր Բաղին առաւ զօրք ու փահիվան,  
Եկաւ Սասնա դէմ զարկեց իր վրան.  
Ելաւ ու ջոկեց քառասուն քաջ մարդ,  
Քառասուն ուղտեր — ամենքն երկսապառ.  
Գնաց ու կանգնեց Յովանի դռան:  
Վախից կոզալեց Յովանի բերան:

— Մոռացե՛լ ես դու հարկը եօթ տարւան,  
Մոռացե՛լ ես դու մեր խօսքն ու պայման:  
Հարկը տալու ես — թէ՛ զօրով առնեմ,  
Ու ելնեմ Սասուն հիմֆից կործանեմ:

— Մեր խօսքից երբեք մեկ յետ չեմք դառնա —  
Պատրաստ է հարկը ողջ եօթը տարւա:

Ելաւ ամեն կողմ մարդիկ ուղարկեց.  
Սասնա գիւղերից զօրով հաւաքեց  
Կարագն ու մեղրը, կով, եգ ու ջորի,  
Ձիեր ու ապրանք, զարդերը շարի,  
Քառասուն գեղեցիկ աղջիկ շարմաղան,  
Քառասուն կարն աղջիկ, որ երկանք աղան,  
Քառասուն երկայն կին, որ ուղտեր բառնան,  
Քառասուն շէկ աղջիկ աղախին դառնան,  
Քառասուն քաջ տղա, որ պատանդ մնան:  
Յետո Կուր Բաղուն իր տունը տարաւ,  
Քառասուն չաղ գառներ խորոված արաւ.  
Շինեց ձագեղ ու բերաւ գինի  
Եւ մեղր ու շաքարք սինի առ սինի,  
Որ չի բարկանա ահեղ Կուր Բաղին,  
Որ խոռ չը ճայի Սասնա աշխարհին:

Դաւիթ դարձաւ Մովսարից, գնաց, իջաւ պառաւի մօտ.  
 — Նանի — ասաց, անօթի եմ. տանդ է բռնել շողգամի հոտ:  
 — Թլուր Դաւիթ, ասաց պառաւն, գրողը գա քեզի տանի,  
 Մարից եկել հարկ են տանում — խօսքս ես անում դու շողգամի  
 — Ո՛վ է եկել, հարկ է տանում, որի՞ն է հարկ տալիս Սասուն,  
 Սրտումն ասես կրա՛կ ընկաւ, տունը հասաւ, բոցը սրտում:

Եկել էին ընկերները եւ գայրոյթից իրանց ուտում:  
 Դուրսն էր կանգնել Մարա գորքը — ներսը՝ հսկա իրարանցում:  
 Տանը տեսաւ Ձէնով Յովան մի դէզ ոսկու վերեւ կանգնած՝  
 Չափում էր ոնց ծախու կորեկ՝ ջվալներում լեցնում կամաց:

— Ա՛յ, հօրեղբայր, դու ծեր մարդ ես, ոսկին այդպէս խոսք չես  
 չափում:

Չափը առաւ նրա ձեռքից — մայեց կուտուած սրտուռ ոսկուն.  
 — Ի՞նչ ես տալիս Մարա մարդկանց — ժողովրդի լացն ու արիւն.  
 Ի՞նչ է տւել Մարը մեզի, որ մեզանից հարկ է ուզում.  
 Հարկերի տեղ մահ ենք տալիս մեր քշնամուն.

Ասաց. չափը գարկեց նրանց. եօթ փահելվան գետին ընկան.  
 Չափը պատից մտաւ, գնաց եւ գնում է դեռ յաւիտեան:  
 Այս որ տեսան Սասնա տղերք Մարա գորքի վրա ընկան  
 Եւ փշրեցին, արին փռելի — յետո քամուն տւին, պրծան:

Գոռ Կուր Բաղին մի քունջ նստած դողում էր ոնց շղան տերեւ.  
 — Մի վախենար, ա՛յ Կուր Բաղին, քեզ բաշխում եմ ես քու արեւ  
 Գնա գոռոզ ձեր Մելիքին պատմիր ի՛նչ որ տեսար այստեղ.  
 Ասա՛ — Սասնա Ծռերն որ կան ինչքա՛ն հզօր են ու անեղ:  
 Թող նա նստի իրա տանը, մեզ էլ հանգիստ քողմի մեր տան.  
 Իսկ քէ արիւն, հարկ է ուզում — հազար վա՛յն է եկել նրան:

Ա՛ն, հօրեղբայր, դու այս ոսկին բաժնիր Սասնա ժողովրդին,  
 Չեմ հաւատում էլ իրեն հետ տանել ուզի քաջ Կուր Բաղին:  
 Բաց մարագը, քող կիները, տղերքն իրենց բանին գնան —  
 Մարա երկրումն էլ գեղեցիկ, կարն ու երկայն կիներ շա՛տ կան:  
 Ինչ բերել ես ապրանք, տաւար — ել, յետ քամրիք դու տերերին —  
 Մարա երկրում համրանք չկա ոչ ապրանքին, ոչ տաւարին:

Յետո բերին գոան մի էշ, Բաղուն վրա նստեցրին —  
 Պոչը ձեռքին, խափ խայտառակ՝ Մարա երկիր յետ քամրեցին:

Եւ կիները Մարա քաղիւն  
 Եկան, կանգնան եզրը քամրին.  
 Որ երբ անցնի գոռ Կուր Բաղին  
 Մարա անյաղք գորքի գլխին՝  
 Գովք ու երգեր ասեն նրան,  
 Տեսնեն բերած հսկա քալան:

Մէկ էլ եկաւ խեղճ Կուր Բաղին  
 Էշի պոչը բռնած ձեռքին:  
 Կողքին ո՛չ գորք, ո՛չ փահելվան,  
 Ո՛չ մէկ գերի, ո՛չ էլ քալան:  
 Փրքաւ ծիծաղ եւ աղաղակ —  
 Ո՛րն էր Բաղին, ո՛րն՝ արանակ:

— Ա՛յ Կուր Բաղին, լակաշքերան,  
 Ո՞ւր ես գալիս լերան, լերան.  
 Ո՞ւր է Սասնից բերած քալան,  
 Ձի ու ջորի, կովեր կքան,  
 Մեղր ու կարագ, չիր ու չորքան,  
 Քառսուն խորոտ կոյս շարմաղան,  
 Քառսուն կարն կին երկանք աղան,  
 Քառսուն երկայն կին ուղտ բառնան,  
 Քառսուն տղա — պատանդ մնան,  
 Ա՛յ Կուր Բաղին, լակաշքերան,  
 Ո՞ւր ես գալիս լերան, լերան:  
 — Ա՛յ անամօթ քածեր հաջան,  
 Ինչ էք ոռնում քանց անշահ շան:  
 Սասնա հզօր մարդիկ որ կան  
 Ձեռքեր ունեն — մէկ մէկ գերան.  
 Ովքեր ելնեն նրանց դիմաց  
 Վա՛յն ու մահն եկել նրանց:

Մարա Մելիքն որ իմացաւ ի՛նչ ձիւն եկաւ իր բանակին,  
 Ոնց խայտառակ յետ էր եկել հաւատարիմ իր Կուր Բաղին,  
 Ելաւ գնաց իրեն մօր մօտ եւ բարկութեամբ նրան ասաց.

— Հարամ լինի ծծիդ կաքը, հարամ լինի խնամքդ ու հաց.  
 Որ դու տւիր այդ հաստակող եւ ապերախտ Սասնա Դաւթին.

Գիտե՞ս ինչպէս մուխը մարեց մեր բանակին այն լիարին, ինչպէ՛ս էշին ծուռ նստեցրած յետ ուղարկեց մեր Կուզ Բաղուն:

— Նենգ Կուզ Բաղուն լսեցիր, չը լսեցիր դու քու մօր, Բեզ կարծեցիր անուան, քեզ կարծեցիր մեծագօր: Ի՞նչ ես տւել դու Դաւթին, ի՞նչ ես ուզում նրանից. — Տւել ես մի պատառ հաց եւ վար բերել բերանից. Նրա գլ՛մբին քուք ու մուր եւ կոնակին՝ քո դաշոյն — Դու մի՛շտ պատրաստ լսմելու արիւնն նրա նոնագոյն: Երբ դաշոյնդ բռնեցի — ձեռքդ նրան հալածեց. Նոյնիսկ հողումն իրեն հօր՝ նրան հանգիստ չը բողեց: Դաւիթ տեսաւ լուծը քո՝ իջած ծանր ու դաժան Որպէս հսկա ապառաժ կախւած վերել Սասնա Տան: Չը գնացիր նրան տես, չուղարկեցիր մի սալա՛մ. Չասիր որդիքն ենք նոյն հօր — լինենք հօր բարեկամ: Նա առի՛ւծ է լեռների, դու՛ ժառանգը նոյն փառքի — Չօրք մամբեցիր, որ բերեն քալան, ե՛ւ կին, ե՛ւ ոսկի: Իսկ նա քա՛ջ էր — քաջի պէս տւաւ քեզի պատասխան — Արիւն էիր ուզում դու եւ համն առիր դու արեան: Ինչո՞ւ բանակ մամբէիր, հարկն ուզէիր եօք տարւան, Ի՞նչ անէիր կարն կնիկ, ինչ անէիր դու երկայն, Ի՞նչ անէիր քառասուն վարդ աղջիկներ շարմաղան. Յետո, ինչո՞ւ քանդէիր վանք ու պարիսպ, դպրատուն. Ի՞նչ էր արել քեզ Դաւիթ, ի՞նչ էր արել քեզ Սասուն: Թէ՛ դու կրակ էլ լինես, Սասունն էլ՝ չոր խոտի գէղ Դարձեալ նրան վնասել եւ կործանել կարող չես. Փռչի լինի քե՛ Սասուն — գօրքդ՝ քա՛մի աւերող — Չօրքիդ շունչը կսպառւի — պինդ կը մնա Սասնա հող:

— Դու միշտ Դաւթի կողմը տաշիր — արիւնտ է քո գաւակր. Չը լսէի քեզ առաջուց հիմա չկար այդ փորձանքը. Ասաց գոռոզ Մարա Մելիք ու հետն առած նենգ Չարխաղուն Գնաց մտաւ մեծ բազարը եւ ման եկաւ Մարա քաղաքում: Կանչեց երկրի խելօք մարդկանց եւ միասին խորհուրդ աշին. Ամենքն էլ լուռ եւ յարգանքով լսում էին քաղաւորին:

Երբ աւարտեց Մարա Մելիքն յորդորն իր չար պատերազմի՝ Իմաստուններն խօսք ուզեցին ոմանք՝ խմբով, որն՝ մի առ մի՝

Շատերն ասին. — Աւերութիւնը լաւ բան չի —

Սուրն առնողը մի օր սրով պիտի կորչի:

Ոմանք ասին. — Սասուն մեզ չէ տւել վնաս —

Սասնա վրա ինչո՞ւ կուի պիտի գնաս:

Մին՝ քե՛ նրանք չեն պահանջում մեզնից մի բան — չանգիստ քողմենք նրանց իրենց հանդումն ու տան:

Մին հարց տւեց քե՛ հարկերից այդ անհատնում ժողովուրդը ի՞նչ մաս, բաժին է ստանում:

Ասաց մի ծեր. — անքիւ որբեր, շատ այրի կին եւ գրկանքն է մնում բաժին ժողովրդին:

Մելիքն ելաւ խիստ գայրացած եւ իմաստուն մարդկանց գոռաց — Իգուր Մարը պատւել է ձեզ, ձեզ բաշխել է յարգանք ու հաց. Եթէ մի օր մենք աստղերի, ցնորքների մասին խօսենք, Այն ժամանակ գուցէ նարից ձեզ խորհուրդի, խօսքի կանչենք:

Իսկոյն փակեց այդ ժողովը, իմաստուններն տուն գնացին. Կանչեց յետո իր ջոջերին, հօրներին էլ առանձին: Ոտքի ելաւ մեծ վեզիրը եւ ժողովին խօսեց այսպէս.

— Ապրած մնա մեր քաղաւորն ամմար փառքով արելի պէս, Նրան հլու հարկ են տալիս շատ ժողովուրդ եւ շատ երկիր. Ծովի մման գալիս է փող, արջառ եւ բերք, ապրանք ընտիր, Ուղարկում է ամեն մի ցեղ վարդի պէս քարմ աղջիկներին, եւ ողորմած մեր քաղաւորն մեզ էլ հանում է մի բաժին — Ամեն մէկին իրեն չափով, ամեն մէկին իրեն կարգին:

Սասուն ի՞նչ է որ դէմ գնա մեր փառապանծ տիրոջ կամքին. Պէտք է անել նրանց փռչի եւ տալ քամուն առնի, տանի, Որ ոչ մէկ ազգ էլ դէմ չերթա նրա անեղ հրամանի:

Եւ կանչեցին բոլորը մէկ — իշխան եւ ջոջ եւ գորական — Ամհաշտ կռի՛ւ ... մինչեւ անենք Սասունը մեր ոտքի կոխան:

Մարա Մելիք կտրեց մի մատ — արնով գրեց մի հրաման — Եկան հարիւր հազար զինուոր ոսկի ծագից արեւելեան — Նոր պատանի բոլոր նրանք — երեսներին մագ չը բուսած: Մի մատ կտրեց — գրեց նամակ, մամբեց ոսկի կնքով կնքւած. Եկան հարիւր հազար արար կէզ հարաւի երկիրներից — Երիտասարդ — դէմքերն նրանց այրւած տօքից եւ աւազից: Կտրեց մի մատ — մի բուրդ գրեց մագաղաթի վրա ոսկեգիծ — Եկան հարիւր հազար ասպետ հեռու երկրից արեւմտեան — Շիկամորուս եւ ձիաւոր՝ ձեռքին նիզակ եւ կուռ վահան: Եւ իր արնով գրեց վերջին նամակն ամեն մի իշխանի

Հեռու եւ մօտ ամեն երկրի. ասես փրթաւ բուք ու քամի  
Եկան դաշտից ու ծովերից, չորս ծագերից այն հեռաւոր,  
Եկան փոշու ամպի տակին, որն՝ ձիւտոր, որն՝ ոտաւոր:  
Եկան հազար փողահարներ — ոսկի փողի ձայնով եկան.  
Եկան հազար սագանդարներ — սագի տխուր հեծճով եկան,  
Եկան հազար քմրկահարներ — քմրկի հնչուն զարկով եկան,  
Եկան հազար գուռնա ածող — ուրախ ու շէն տաղով եկան,  
Եկան հազար պար բռնողներ — զեփիւտի պէս խաղով եկան:

17

Մեղիքի մայրը վազեց որդու մօտ՝  
Մազերը՝ նման, աչքերն՝ արցունքոտ.

— Որդի, ջան որդի, կուրի մի գնար —  
Երազ եմ տեսել շատ տխուր ու չար:  
Տեսա Սասնա գետն հասում էր յտակ,  
Իսկ Մսրա գետն էր պղտոր ու անտակ:  
Սասնա նրազը վառուում էր պայծառ.  
Մսրա նրազը՝ մարած ու խաւար:  
Սասնա խոյն եկաւ, զարկեց մեր խոյին —  
Մեր խոյին նետեց մի անդունդ մթին:  
Շատ յեղեղուկ է բախտը մարտերի —  
Այսօր յաղթողն ես եւ վաղն էլ՝ գերի:

— Մայր, իգուր ես դու քո շունչը վատնում.  
Դաւիթ չի պրծնի այլեւս իմ ձեռքից.  
Բանակըս արդէն նամբա է ընկնում —  
Ձայնըս կը լսես Սասնա լեռներից:

18

Մսրա Մեղիքն առաւ բանակ, եկաւ, նստաւ Բաքմանի դաշտ.  
Ձարկեց այնտեղ անթիւ վրան, բանակ դրաւ նա վաշտ առ վաշտ:  
Բաքմանի գետը յորդել էր եւ վարարել իր ափերից,  
Հէնց որ գորքը նստաւ ափին — ցամաքեց գետն իր յատակից:  
Ելաւ հզօր Մսրա Մեղիք, մարդ ուղարկեց Յովանի մօտ:

— Եկել եմ ես քեզ հետ կուրի — դուրս եկ քէ որ քաջ ես, սրտոտ.  
Քեզ տալիս եմ լոկ երեք օր — քէ որ քեզմից խօսք չը լսեմ —  
Կը գամ անթիւ գորքիս գլխին — Սասուն հիմքից կը կործանեմ:  
Ձէնով Յովան, որ այս լսեց, ելաւ, գնաց Դաւիթին պատմեց.  
— Հիմա կերած ապուրըդ տես. մեր խեղճ Սասնա տունը քանդուց.  
Ել ու քֆածդ լզիր հիմա — քէ ոչ Սասնա եկել է մահ.  
Երկչուտ էիր կանչում դու մեզ — դէ՛ ել հիմա, կուր արա:  
Ասաց Դաւիթ.

— Ես ձի չունեմ, ես զէնք չունեմ,  
Ինչո՞վ պիտի կուր անեմ:  
Ինձ զէնք տւէ՛ք, ինձ ձի տւէ՛ք  
Ու ձեր տեղում հանգիստ նստէ՛ք:  
— Գնա ախտո քեզ մի ձի ա՛ն.  
Ձէնք առ, ընկիր դու նանապարհ:

Դաւիթ գնաց, մտաւ ախտո, ուր շատ ձիեր կապել էին  
Կարմիր եւ սեւ եւ սպիտակ եւ կապուտակ եւ ամպային.  
Որ մէկ ձիու մէջքին դիպաւ, ձիու պարտը առաւ գետին.  
Եւ դուրս պրծաւ նա յուսահատ — ցաւն ու զայրոյթն իրեն դէմքին:

19

Ելաւ գնաց պառաւի մօտ հարց, փորձ անի —  
Գուցէ իրեն յարմար զէնքեր ու ձի գտնի:  
Մեծ յուզումնով պառաւ կիրը լսեց Դաւիթին,  
Յետո դարձաւ, ասաց նրան արտասուագին.  
— Ես մեռնէի, այս ինչ օրի տեսնում եմ քեզ.  
Մեծ կուր կա, բայց դու ոչ զէնք, ոչ ձի ունես.  
Կարեմ նրա պատանքն, որ սուտ խօսեց քեզի —  
Հայրըդ ունէր կայծակէ քուր, հրեղէն ձի.  
Գնա, Դաւիթ, գնա, ասա քո հօրեղբօր  
Որ քեզ յանձնի քո հօր զէնքերն ու ձին քո հօր:

Ասա — ուզում եմ, հօրեղբայր,  
Հօրըս գրահէ շապիկն այն վառ,  
Ուզում եմ հօրս պողպատ քամար,  
Հօրըս գրահէ մոյկը ոտին,  
Հօրըս գլխի քաղախ կոտին,  
Հօրըս հզօր քուր — կայծակին,  
Հօրըս վահան, գուրզը ձեռքին,  
Հօրըս ձիու քամր սաղափին,  
Ուզում եմ հօրս հրեղէն ձին:

Դաւիթ գնաց իրենց շեմքին —  
Գոռաց ձայնով որոտագին.

— Ա՛յ հօրեղբայր,  
Ուզում եմ հօրս շապիկն այն վառ,  
Ուզում եմ հօրս պողպատ ֆամար,  
Հօրըս գրահէ մոյկը ոտին,  
Հօրըս գլխի ֆագալս կոտին,  
Հօրըս հօգօր թուր — կայծակին,  
Հօրըս վահան, գուրգը ձեռքին,  
Հօրըս ձիու թամբ սաղափին,  
Ուզում եմ հօրս հրեղէն ձիւն:

— Կոտրէր բերանն, որ ֆեզ բանն այդ սովրեցրեց  
Այդ ամենը հայրըդ ինձի աւանդ թողեց:

— Ձէ, հօրեղբայր, հօրս աւանդն էր Ազատ Սասուն,  
Որ Մելիքի ոտների տակ ձգեցիր դուն:

Հօրեղբայրն գնաց, բերաւ  
Զրահէ շապիկն առաւ, բերաւ,  
Պողպատ ֆամարն առաւ, բերաւ,  
Քագալս կոտին առաւ, բերաւ,  
Մոյկը ոտին առաւ, բերաւ,  
Գուրգն ու վահանն առաւ, բերաւ,  
Թուր — կայծակին առաւ, բերաւ,  
Թամբ սաղափին առաւ, բերաւ,  
Մի ուրիշ ձի առաւ, բերաւ:

Դաւիթ ձեռքն որ դիպաւ մէջքին  
Ձիու պարտը առաւ գետին:

— Ո՞ւր է սա, ա՛յ հօրեղբայր,  
Հօրս հրեղէն այն երիվար:

— Հօրըդ մեռած օրերից ի վեր  
Մի մարդ նրան ձեռք չի տել.  
Գնա, որդի, թէ դուրս բերես,  
Նրան բարով դու վայելես:

Մեծ ախոռի մի այլ բաժնում  
Լուռ կանգնել էր մի ձի տրտում.  
Կանգնել էր նա թառի տակին.  
Եւ երբ դրեց ձեռքը մէջքին՝  
Ձին ոտ գարկեց ֆարէ պատին.  
Պատից կրակ ելաւ, գնաց.

— Հրեղէն ձիւն սա՛ է, սաաց:

Ձին ախոռից նա դուրս հանեց —  
Վրա — գլուխ ծիրտ ու կեղտ էր.  
Տաֆ ջուր բերաւ մի լաւ մաքրեց.  
Յետո տաւ գարի ու կեր:

Ձի չէ՛ր ասես — լոյս ու պատկեր.  
Ճակատին մի ձիւն վարդ ունէր.  
Ոտներն ասես՝ լուսաթաթալս,  
Բաշը՝ վզին ջրվէժն առկալս.  
Գոյնը նրա բոցի պէս վառ.  
Վիզը՝ ժամու շֆեղ կամար:

Նրա խրխիւնջն անեղ ու գոռ  
Հնչեց որպէս մարտի շեփոր:  
Եւ պատրաստեց Դաւիթն արի  
Հօգօր մարտի եւ պայֆարի:

Եօթ լիդր բամպակ դրաւ գրահէ շապիկի մէջ  
Հագիւ եկաւ նրա հագին.

Եօթ լիդր բամպակ դրաւ պողպատ ֆամարի մէջ —  
հագիւ եկաւ մէջքի բոլոր.

Եօթ լիդր բամպակ դրաւ ֆագալս էն կոտնու մէջ —  
Նոր յարմարեց նրա գլխին.

Եօթ լիդր բամպակ դրաւ գրահէ մոյկերի մէջ —  
Հագիւ եկաւ ոտքի բոլոր:

Եւ երբ կապեց թուր — կայծակին —  
Այն ֆարջ եկաւ գետնի վրա.

Յետո դրաւ թամբ սաղափին ձիու մէջքին,  
Ելաւ, նստաւ թամբի վրա:

Ձէնով Յովան այս որ տեսաւ՝ լացեց, սաաց.  
— Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից շապիկ գրահին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից ֆամար մէջքին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից կոտին գլխին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից մոյկը ոտին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից թուր — կայծակին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից թամբ սաղափին,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից հրեղէն ձիւն,  
Հագար ափսո՛ս, գնաց Սասնա տնից Դաւիթն անգին ...

— Թուրը գլխիդ կիջնէր իսկոյն չը յիշէիր քէ իմ անունն :  
— Դաւիթ, որդի, ես քեզ մատաղ, քեզ համար է լաց եմ լինում :  
Երբ դու գնաս սարի նամբով դէմդ է գալու կաթնով Աղբիւր :  
Մի մօր կաթի նման քաղցր է նրա վնիտ, դիւքական ջուր :  
Այնտեղ իջիր ձիուցդ ցած, լւա ձեռներդ ու քո երես,  
Հանիր ձիուցդ նաշխուն սանձը — քոզ արածա ուզածին պէս :  
Որ հաց կերար — ընկիր, քնիր, որ քնեցիր — նորից վեր կաց,  
Ելիր հեծիր քո Մուրադ ձին — քէր կուի դաշտն՝ սրբնքաց :

— Ել, հօրեղբայր, կանչիր Սասնա մարտիկներին :  
Ասա եկել է մեծ օրը — օրը մեր վառ յաղթանակին :  
Ես կը կուեմ Մելիքի հետ, բոլորս մէկ գօրքի դիմաց :  
Որ ազատենք Սասնա հողը, որ ազատենք մեր օրն ու հաց :

Ձէնով Յովան ելաւ, կանչեց, Սասնում քնդաց նրա ձայնը :  
— Հէ՛յ, Սասունցիք, ելէ՛ք, ելէ՛ք, վա՛յն է եկել Սասնա տանը :  
Թէ Մելիքին մենք չը յաղթենք — էլ հող ու հաց, էլ կեանք չունենք :

Ո՛վ հերկում էր քոզեց արօր, քոզեց գուքան դաշտի միջին,  
Սայլուրն քոզեց սայլը նամբին, քէ ձի ունէր հեծաւ իր ձին,  
Ո՛վ բահն ունէր ձեռքն առած, քոզեց բահը, առաւ նիզակ,  
Ո՛վ որ տափ էր անում հանդում, քոզեց տափը, վագեց քաղաք,  
Ո՛վ դագգեհանին շալ էր բանում, քոզեց դագգեհանն ու առաւ քուր,  
Եկան հովին ու գառնարածն, եկան հոտաղ հարիւր, հարիւր :  
Արհեստաւոր ու խանութպան, եկան բրուտն ու ջաղացպան  
Որը հօր առիւծի պէս, որը հսկա սարի նման :

Սասնա կիներն քոզին տներն ու ձեռք առան բահն ու գուքան,  
Սայլերն դարձեալ նրնուցին, հօտն ու նախիրն սարը տարան :  
Նորից դարձաւ ջաղացքարը ու դագգեհանը բանեց կրկին —  
Ասես Սասնում մարդ չէր եղել, ասես այնտեղ կար միայն կին :

## 22

Հին մարտիկներն ասին. — «Դաւիթ քաջ որդին է մի արի հօր» :  
Նորերն ասին. «Մենք Դաւիթի հետ անպարտելի ենք ու հօր» :  
Դաւիթ խօսեց հազար հազար Սասնա անյաղք մարտիկներին  
— Սասնա քաջեր ձեզ եմ առում, ականջ արէք իմ խօսքերին,  
Ինչո՞ւ Մելիքն անբիւ գօրք է առել, եկել Սասնա վրա :  
Ինչո՞ւ նա մեզ սպառնում է կապ ու շղթա, աւեր ու մահ :  
Որովհետեւ կարծում է նա մեր երկիրը չունի պաշտպան,  
կարծում է որ տէր չենք կանգնի մեր քանկազին ազատութեան» :

— Մէկ կեանք ունենք — հազար անգամ մատաղ կանենք Սասնա  
Իրկրին :

Ասին Սասնա անպարտելի քաջերն անվախ՝ որոտագլին :  
Գնում եմ ես, հետեւէք ինձ Բաքմանի այն դաշտումը մեծ,  
Ասաց Դաւիթ. ու Մուրադ ձին դէպի կաթնով Աղբիւր քէց :

— Հէ՛յ, Ծովասարի պաղ պաղ աղբիւրներ,  
Մնացէք բարով, բարի մնացէք :  
Գնում եմ կուի — ես կը ծարաւեմ —  
Դուք պաղ մնացէ՛ք :

Հէ՛յ, Ծովասարի գով գով քամիներ,  
Մնացէք բարով, բարի մնացէք :  
Գնում եմ կուի — ես կը շոգանամ —  
Դուք հո՛վ մնացէ՛ք :

Սասնա աշխարհի հայրե՛ր ու մայրեր,  
Մնացէք բարով, բարի մնացէք :  
Գնում եմ կուի, գուցէ յետ չի գամ —  
Դուք ո՛ղջ մնացէ՛ք :

## 23

Ժայռի տակից ջուրն էր բղխում՝ կաթի նման փրփուր տալով :  
Ծաղիկների, խոտերի մէջ պար էր գալիս գարթ տաղով :  
Յետո յանկարծ անհետ լինում հսկայական մի ժայռի տակ :  
Դաւիթն իջաւ, հանեց ձիուց նրա սանձը ոսկեֆանդակ :

Նրա շուրջը ծաղիկների մի բուրմունք էր անմահական,  
Նրան պատեց մի խնդուքիւն, մի զգացմունք էր անական :  
Լւաց իր ձեռքն ու երեսը, կերաւ իր հացն ու խմեց ջուր,  
Մի քուն իջաւ նրա վրա հեշտաքմբիւր, անուշաբոյր :

Երբոր զարթնեց անուշ քնից արեւն պայծառ վառում էր դեռ,  
կարծեց իրեն զնդան դրած մէկը նրան չարչարում էր :

Հանեց գլխից փայլուն կոտին — հանեց եւ եօթ լիդր բամպակ —  
Հագիւ եկաւ գուրգ գլխին :  
Հանեց գրահէ շապիկն իր վառ, հանեց եւ եօթ լիդր բամպակ —  
Նոր յարմարեց նրա հագին :  
Մէջքին կապեց պողպատ գօտին, որ կապել էր նա եօթը տակ —  
Զօրով եկաւ հօր մէջքին :

Հանեց գրահէ մոյկը ոտին — հանեց եւ եօթ լիդր բամպակ —  
Դժուար մտաւ նրա ոտքին:

Ելաւ, կանգնաւ, լցել էր նա եւ քաշել էր շքեղ հասակ —  
Թուրը կարն էր գալիս կողքին:

Ելաւ, հեծաւ իր Մուրադ ձին, քշեց, հասաւ սարի կատար.  
Ցածը, դաշտում տարածուել էր անեղ Մսրա գորքն անհամար.  
Վրաններն անվերջ ծովը՝ հորիզոնից դուրս էր հասում.  
Բոցավառու էր դաշտն անծայր՝ անմարելի մի հրդեհում  
Զրահներն, նիզակներն եւ քրտերն պայծառ փայլից:  
Թնդում էր ողջ շրջակայքը շատ կառքերի խուլ շահնդից:

Դաւիթ տխրութեամբ դիտեց ու ասաց.

— Թէ այս գորքն լինի առոյտի մի արտ  
Եւ մենք էլ հօր, հնձուր տղամարդ՝  
Ձեռք քաղի այդ արտն ամբողջ եօթ տարի:  
Որ քաղենք — մենք խուրձ չենք կարող կապել.  
Թէ խուրձ կապեցինք — չենք կարող կրել,  
Թէ որ կրեցինք — չենք կարող դիզել —  
Թէ բարդ շինեցինք բարձր սարի պէս —  
Եւ մենք էլ դարձանք հրդեհ ու կրակ  
Ձեռք կարող այրել այդ վիթխարի դէպ:  
Եւ քէ այրեցինք, արինք մոխրատակ  
Եւ մենք էլ դարձանք սաստկաշունչ փամի -  
Մոխիրն այդ՝ երբէք տեղից չենք շարժի:

25

Եկել, հասել էին արդէն Սասնա ֆաջերն բազմահագար,  
Եւ մտածկոտ Դաւիթ բոլոր շարւել պատրաստ ու զինավառ.  
Նայեց Դաւիթ այդ ֆաջերին — հոգում էլաւ բերդ ու պատար.  
— Սրանցից մէկն մի ջոկատ է, մի բանակ է ինձի համար:  
Ես վախ չունեմ քէ մեր դէմ գա Մսրա գորքի թւի կրկինն —  
Գանի ձեռքումս բռնել եմ ես Սասնա հօր թուր - կայծակին.  
Ո՛վ ազատի թուր - կայծակից — կընկնի ձիուս սմբակի տակ,  
Ո՛վ որ պրծնի սմբակներից — նրան կիջնի տէգն ու նիզակ,  
Ո՛վ քագնի մեր տէգերից — մեր գերանդուն կը հանդիպի,  
Ո՛վ որ փախնի մեր գերանդուց — գուրզը նրան պիտի գտնի,  
Ո՛վ գուրզերից մեր փրկի — կուտի հսկա մահակը մեր,  
Ո՛վ մահակին չը հանդիպի — նրան կիջնի բռունցքը մեր,

72

Ո՛վ որ չուտի մեր բռունցքը — նրան շունչը մեր կսպաննի —  
Մահ ենք բերել Մսրա գորքին — ովքեր Սասնա են քջամարի:

Նորից նայեց իր ֆաջերին եւ խնդութիւն պատեց նրան.  
Հանեց հօր թուր - կայծակին — գոռաց անեղ ամպի նման.

— Մսրա գորքեր, ակամջ արէք,  
Թէ քնել էք — արթուն կացէք,  
Թէ արթուն էք — ելէ՛ք, կայնէ՛ք,  
Թէ կայնել էք — գէնէ՛ք կապեցէ՛ք,  
Ձէնէ՛ք էք կապել — ձի քամբեցէ՛ք,  
Ձի էք քամբել — ելէ՛ք, հեծէ՛ք  
Չասէ՛ք Սասնա ծոերն եկան  
Մեզ գարկեցին գողի նման:

Երբոր Դաւիթ նշան տուա՝ Մսրա գորքի վրա ընկան  
Իր աներից դուրս վարարած երագահուս գետի նման,  
Յանկարծ սարի կողքից փրթող սուկավիթխար ժայռի նման,  
Մեծ անտառը հիմքից լափող հրդեհի պէս հսկայական:  
Կուր չէր այն — կոտորած էր, շողջողում էր թուր - կայծակին  
Ինչպէս հանդում փայլատակող ժիր հնձուրի սուր գերանդին.  
Եւ Սասունցոց հարածներից տապալում էր գորքը Մսրա  
Ինչպէս ոսկի հունձն է ֆաղում եւ փուում է գետնի վրա:  
Մսրա գորքը յետ էր փախչում. բայց յետեւից հրով, սրով  
Նրանց առաջ էին քշում ոնց հողմավար, յուզած մի ծով.  
Գալիս էին եւ անսասան Սասնա գորքին էին խփում  
Եւ խորտակած, փշուր, փշուր նրա ոտքի ներքեւ փուում:

26

Մսրա գորքից մի պետը վագեց, կանգնաւ Դաւիթի առաջ,  
Փռւել էին դիակները արմաշաղախ ե՛ւ ձախ ե՛ւ աջ.

— Ի՞նչ ենք արել մենք, որ մեզ ջարդում ես  
Ձեր խոտնոցների դալար խոտի պէս.  
Մեզ Մսրա տէրն է հաւաքել, բերել —  
Մեզ խարագանով, թրով է քշել:  
Որն էք, բերաւ օրւա վաստակից,  
Որն՝ իրեն հանդից, որն՝ իր դագգեանից.  
Որը՝ մօրից մէկ, որը՝ մի տան հայր,  
Որն՝ իրեն կեանքից, աշխարհից՝ բեգար:

73

Բոլորս էլ՝ մշակ, ազատ գիւղացի,  
Բոլորս էլ՝ կարօտ մի պատառ հացի.

Որը՝ հողագուրկ, որը՝ պարտքի տէր —  
Ցաւի, գրկանքի անբաժան ընկեր:

Թշնամիդ որ կա — Մտրա Մելիքն է.  
Զօրքը լոկ նրա ձեռքի գործիքն է.  
Ինչո՞ւ գործիքին ես ուղղում քո նետ —  
Հաշիւ քէ ունես — մաքրիր նրա՛ հետ:

Սասնա փաջերը կանգ առին իսկոյն:  
Դարձաւ հարց տեց անբախտ ծերունուն —

— Այդպէ՞ս է գգում ողջ բանակը ձեր:  
— Ասելու համար լոկ չունեն խօսքեր:  
— Մենք կռիւ չունենք ազատ մարդկանց հետ,  
Մենք հաշիւ չունենք ձեզ պէս մարդկանց հետ:  
Մեր դասը որ կա Մելիքի հետ է,  
Մտրա արնախում ջոջերի հետ է:  
Ասէ՛ք. Մելիքը ո՞ր ծակն է մտել —  
Ես նրան գրողն ու մա՛հ եմ բերել:

## 27

Ասաց քեզ իր Մուրադ ձին, գնաց, կանգնաւ վրանի դռան.  
Քնից նոր էր գարքնել Մելիք — շուրջը իշխան ու գորական.  
Լեզուները վախից կապւած՝ քոթով վանկեր էին խօսում,  
— Կորանք, արքա՛, ահաբեկւած գորքը մեզի էլ չի լսում:

— Ի՞նչ պատահեց — հարցրեց Մելիք կորովագուրկ իր պետերին.

— Անմահ են այդ Սասնա Ծոներն — ասում էր մեզ խեղճ կուզ  
Բաղիմ.

Բայց մենք նրան չը լսեցինք — կռիւ եկանք Սասնա վրա.  
Հիմա Դաւիթ նրանց գլխին՝ մեզ բերել է սարսափ ու մահ:

— Յետ գնացէ՛ք նորից կռիւ, ա՛յ դուք երկչուտ, անպետ շներ,  
Կանչէ՛ք հազար լաւ քմբկահար, հազար էլ որ հնչեն փողեր,  
Հազար մարդ որ ածեն գունդ, հազար երգիչ ու սագանդար.  
Կռիւ անենք քանի Սասնում դեռ կանգուն է մի հատիկ փար:  
Դուք ջարդ տէ՛ք Սասնա մարդկանց, ես էլ Դաւիթի հոգին առնեմ,  
Մտրա գորքը տուն չի գնա մինչեւ Սասուն չը կործանեմ:

— Դու հանգիստ քող, գոռաց Դաւիթ, անտուն, անտէր այդ  
խեղճ մարդկանց.

Խարազանով քեզ, բերել ես երկրի չորս ծագից նրանց —  
Որ մեր չքնաղ Սասնա երկրում փարի վրա փար չքողենն.

Բայց դու տեսար Սասնա հօր մեր փաջերը դեռ մեռած չեն:

Մտրա գորքդ էլ չի կռիւ — ինչքան ուզես բե՛ր քմբկահար,  
Եւ փողահար, ե՛ւ սագանդար, պարող, երգիչ հազար, հազար:  
Թէ որ փաջ ես ինքդ արի եւ կռիւ էլ ինձ հետ մեռակ.  
Թէ յաղթեցիր — մենք հարկ կտանք Մտրա գահին շատ ժամանակ:

Բայց քէ շրջեց բախտըդ յանկարծ, եղաւ որ ես քեզ յաղթեցի —  
Մենք չենք ուզի քո աշխարհից յարդի մի շիւղ, ոչ մի խեցի.  
Թոյլ կը տանք որ ամեն զինուոր քողնի գնա իր հանդն ու տուն,  
Կը պահենք քո գոռ պետերին, որ էլ չգան, քափեն արիւն:

## 28

Մտրա Մելիք ելաւ հպարտ, եկաւ, կանգնեց Դաւիթի դիմաց.  
Որպէս չինար հասակ ունէր, քիկունքը՝ լայն, մակաւոր՝ բաց:  
Ցաղթ ուսերին՝ գոռու մագեր, որպէս բարդի ձիւղ ու շքեղ՝  
Կանգնել էր լուռ դաշտի մէջին Սասնա Դաւիթն էն նորաբեխ:  
Եւ հաւաքեց Մտրա գորքը՝ կեցաւ նրանց հանդիսատես.  
Սասնա փաջերն էլ ժայռերի կատար քառան հաւքերի պէս:

Նրանք երկու տիտան էին, երկու մարտիկ ու փահիվան.  
Դարեր ամբողջ քիչ են ծնում այդպէս մի գոյգ նրանց նման.  
Նայում էին հիացմունքով նրանց զինուոր ու գորավար,  
Նայում էին եւ պարծանքով Սասնա փաջերն բազմահազար:

Ընկան նրանք իրար վրա մի գոյգ հօր խոյի նման.  
Թնդում էր դաշտն հարւածներից նրանց ուժգին այդ ընդհարման:  
Յետո կռիւ արին նրանք գամէշների նման կուսան,  
Որ նետում են իրար վրա արեւի տակ գմբուխու գարնան:

Զարկում էին բռունցքներով, զարկում էին իրար ուժգին  
Եւ զարկերից դրդում էր դաշտը նրանց ոտքի տակին:  
Այսպէս տեւեց տիտանական այդ կռիւը մինչեւ կէսօր.  
Երբ կանգ առան նրանք էին ե՛ւ հաւասար ե՛ւ համագոր:

Լացը աչքին՝ սարսափահար նրանց խօսեց Մտրա Խաթուն.  
— Ա՛յ որդիներ իմ գովական, ձեզի տած կաթիս սիրուն,  
Իմ խնամքին գորովալի, Մեծ Մեծերի սիրո համար  
Թողէ՛ք անգուր կռիւը ձեր եւ այս պայքարն արիւնավառ:

— Մա՛յր, ասացին երկուսը մէկ, մա՛հն եմք ընտրել մեզ  
դատաւոր,  
Երկու անհաշտ աշխարհների դատը պիտի վնտենք այսօր:

Մտա Մելիքն ասաց Դաւիթին.

— Արի գուրգով կոխ անենք,

Դաւիթ ասաց.

— Համաձայն եմ, անեղ գուրգով կոխ վարենք:

Մեծը դո՛ւ ես, հերքը բոն է, դու գարկ առաջ երեք հարած.  
Թէ յաղթեցիր ու ես մեռա — գա՛հիդ վրա դու հաստատ կաց.  
Իսկ թէ պրծա, հերքն ինձ եկաւ — գահըդ պիտի անեմ փշուր  
Որ լուծը քո էլ չը մնչի շատ ազգերի վզին տխուր:

29

Մտա Մելիքն անեց գուրգը, ելաւ, հեծաւ իր արար ձին.  
Բշեց իր ձին մինչեւ Բարվար եւ մեծ թափով՝ վերադարձին  
Նշան անեց եւ մեծ ուժով գուրգը գարկեց Սասնա Դաւիթին:

Մի ամբողջ ժամ ելաւ փռչին — ծածկեց դաշտը եւ ձորն ու սար:

— Դու հո՛ղ էիր ու հող դարձար.

Կանչեց գոռոզ տէրը Մտա:

— Մի քիչ շիտակ քո նշանն առ,

Դեռ ողջ եմ ես թամբիս վրա:

Մտա Մելիքն առաւ Գուրգը մինչեւ Աղերդ բշեց իր ձին.  
Եկաւ թափով առաւ նշան, գուրգը գարկեց Սասնա Դաւիթին:  
Բոլոր օրը փռչին ելաւ — ծածկեց Սասուն եւ Ծովասար.

— Դու հո՛ղ էիր ու հող դարձար.

Կանչեց ուրախ տէրը Մտա:

— Վերջին գարկիդ լաւ նշան ա՛ն.

Դեռ ողջ եմ ես թամբիս վրա:

Մտա Մելիքն առաւ գուրգը, բշեց իր ձին մինչեւ Բաղդադ.  
Եկաւ արագ որպէս կայծակ — Դաւիթին գարկեց գուրգը պողպատ:  
Օր ու գիշեր ելաւ փռչին, մթնեց եւ դաշտն ու ողջ աշխարհ:

— Դու հո՛ղ էիր ու հող դարձար.

Կանչեց գարթ տէրը Մտա:

— Հերքն ինձ եկաւ, վա՛յ քո քայտին,

Սե՛ւն է եկել Մտա թախտին:

76

Ասաց Դաւիթ եւ հեծաւ ձին՝ հսկա գուրգը բռնած ձեռքին:

Դէմքին քաշած սուգի սեւ ֆոզ՝ Մտա հաթունն եկաւ լացով.  
Բացեց կուրծքը Դաւիթի առաջ — աչքերը յորդ արցունքի ծով:

— Մեծացրել եմ ես քեզ, որդի, ստիճակներս մաքուր կաթով,

Եկ, մէկ հարածդ դո՛ւ ինձ բաշխիր, մեռնիմ կանաչ քո արեւին:

— Մէկ հարածըս քեզ եմ բաշխում — քո մայրական վնիտ կաթին:

— Որդի, չէ որ խնամել եմ քեզ հարազատ որդու նման,

Արի, երկրորդ հարածդ բաշխիր ջերմ խնամքին իմ մայրական:

— Երկրորդ հարածս նւիրում եմ քո խնամքին, Մտա հաթուն.

Որդուդ երեք հարածի դէմ մէկ հարածս էլ ինձ եմ պահում:

Խաթունն նրա ոտներն ընկաւ, որ էդ հարածն էլ խնայի  
Եւ Մելիքին իր հարազատ եւ մեծ եղբոր նման նայի:

Դաւիթն ասաց. — Աստուծն էլ գա — ես չեմ բաշխի էս մէկ  
հարած.

Ես ոխ չունեմ ոչ ոքի դէմ — ես ոչ ոքից քէն չեմ արած:

Ժողովրդի բշնամին է նա թէ Սասնա եւ թէ Մտա.

Նրա ձեռքին հագարաւոր անմեղ մարդկանց արիւնը ես:

Սա մէկ հարածս արեան գինն է բազմահագար մեռածների,

Բռունցքն է սա դարերի յամր եւ անբաժան գրկածների:

— Դաւիթ, որդի, իմ Մելիքին դու մի գարկի քո մեծ գուրգով.

Որդուս վրա թափել եմ ես գորով՝ անտակ որպէս մի ծով:

— Այս հարածը յետ չեմ առնի — դա վնասական եւ անդարձ է

Այն խեղճերի կեանքի նման, որ նա յաւէտ կործանած է:

Ինչո՞վ գարկեմ — տէգո՞վ, թրո՞վ, նետ-աղեղո՞վ թէ՛՞ նիգակով.

Այս մէկ բանում գիտում եմ քեզ հիացումնեմով եւ յարգանքով:

— Գիտեմ Դաւիթ, բարի ես դու, հորդը նման մեծ ու արդար.

Իսկ նա քեզի հոր է փորել, հայածել է քեզ անդադար.

Տարէք նրան մի քառասուն կանգուն հորում իջեցրէք,

Քառասուն գունդու թանձր կաշի բերէք նրա վրա դրէք.

Բերէք քառասուն մեծ ցաղացքար՝ խոնամանքի պէս ծանր ու սեւ

Եւ մէկ առ մէկ դիզեցէք դո՛ւք հորի բերան, նրա վերեւ:

Յետո՞ւ ա՛ն քո թուր — կայծակին եւ գարկ միակ քո հարածը,

Թէ որ մեռաւ — Աստուծուց էր — այդ էր նրա կամեցածը:

Իսկ թէ ապրեց — այդ կը լինի Տիրոջ կամքը անքննելի:

Խաթունն ուզեց գուցէ այսպէս իր Մելիքին մահից փրկի  
Ո՛ր թուրն պիտի կտրէր, անցնէր քարի շեղջն այդ գարհուրելի:

Դաւիթն ասաց. — Մտա խաթուն, այդ մէկ ուզածդ էլ թող լինի:

77

Էն Մելիֆի հսկա մէջֆից կապեցին մի քանի պարան —  
 Հագիւ նրան հորն իջեցրին քսան ուժով, մեծ փահլեվան:  
 Բերին քառսուն գովշու կաշի — մէկ մէկ նրա վրա դրին,  
 Բերին քառսուն մեծ ջաղացֆար իրար վրա բարձրացրին:

Դաւթի ձեռքում քուր — կայծակին շողաց որպէս հուր ու փայլակ.  
 Ճեղֆեց քառսուն մեծ ջաղացֆար, գովշու կաշին քառսուն տակ:  
 — Կենդանի՛ եմ — հորից լսեց յաղթ Մելիֆի ձայնը մարած:  
 Դաւթն ասաց. — Մտա Մելիֆ, մէկ քեզ հուպ տուր, շարժուի՛ր  
 կամաց:

Մտա Մելիֆ հէնց որ շարժեց մարմինն եղաւ երկու կտոր.  
 Եւ ոչ մի ձայն ու պատասխան էլ չի տուա իր անբախտ մօր:

Շատ քննչութեամբ գրկեց Դաւթ՝ գրկեց Մտա հէզ Խաթունին —  
 Նրա աչֆից լացի շիքեր մարգարտի պէս քափուում էին:

— Քո Մելիֆն ընտրեց արիւնի ուղին՝  
 Ժողովուրդն առած իր ոտի տակին.  
 Ուր գնաց — սփռեց լաց ու գերեզման՝  
 Ահեղ ու քանդող մի ժածֆի նման.  
 Եւ անցաւ, գնաց նոյն արևոտ քամքով  
 Յետեւից քողած ցաւ, դիակ ու սով ...  
 Գնա՛, մայր եղիր Մտա ընդհանուր,  
 Մի քիչ էլ գորով քշառներին տուր.  
 Մի քիչ էլ նրանց ցաւերով տանջուի.  
 Եւ պայծառ մի օր այդ անբախտ երկիր  
 Քեզ պիտի ժպտա բացւած վարդի պէս  
 Ու վառ երգերով պիտի օրհնի քեզ:


Ելաւ ու նստեց սաղափէ քամքին  
 Եւ այսպէս խօսեց Մտա բանակին.  
 — Մտա Մելիֆը մեռաւ — էլ չկա —  
 Մտա ժողովուրդն քող պայծառ մնա,  
 Եւ ազատ մնա երկիրը Սասնա  
 Հպարտ, արեւոտ լեռների վրա:

Դարձէֆ ձեր հանդը, դարձէֆ դուք ձեր տուն,  
 Ուր դառն արցունքով ձեզ են սպասում  
 Մայրերը Մտա, երեխա ու կին՝  
 Ցաւն ու կարօտը դեռ իրենց սրտին:  
 Քաղցած են — տանը նրանք չունեն հաց.  
 Բռբիկ են — հոգի շորերն են մաշած.

Գնացէֆ հալալ ձեր աշխատանքին,  
 Ձեր տանն ու գործին, ձեր ազնիւ ջանքին:

Բայց եթէ դարձեալ կուի գաֆ մեզ դէմ  
 Քանդելու մեր տունն, մեր երկիրը շէն.  
 Թէ քառսուն կանգուն խոր հորում մտնէֆ,  
 Քառսուն ջաղացֆար ձեր վրա դնէֆ —  
 Ձեր դէմ դուրս կը գան ծոերը Սասնա,  
 Սասնա ժողովուրդն ազատ եւ անմահ,  
 Քաջերը քնած, մեր հողի տակին —  
 Ձեր դէմ դուրս կը գա մեր Թուր — կայծակին:

Ասաց, խաթունի ձեռքը համբուրեց.  
 Եւ քամքա հանեց Մտա գորքը մեծ.  
 Ու քամք, յաղթական երգերով ցնծուն՝  
 Իր ծոերի հետ բարձրացաւ Սասուն:



ԴԱԻԻԹՆ ՈՒ ԽԱՆԴՈՒԹ

Զրբնգում էր Դաւթի անունն որպէս մի երգ յաղթանակի,  
 Երգում էին նրա գովքը ժողովուրդներն ողջ աշխարհքի.  
 Անունն նրա դարձել էր նոր կեանքի խոստում, մի արծուի քել,  
 Ողջ աշխարհում շոյ էր տալիս — մէկ քաջ Դաւիթ եւ մէկ արեւ:

Արեւաշոյ մեծ իրանի խոյ քաղաքում կար մի աղջիկ.  
 Շիրազի ալ վարդի նման անուշաբոյր եւ գեղեցիկ.  
 Նրա հասակն իսրահանի ուտիների պէս դալար էր,  
 Յոնքերն նրա՝ մէսքիքների արարական գոյգ կամարներ:

Եկել էին նրա ոտքը հարիւր կտրին ու փափկվան  
 Որ քրեքով եւ արիւնով նրա սիրուն արժանանան.  
 Իսկ այն կոյսը — նագան հանդուք ծիծաղում էր նրանց վրա —  
 Ասում էր քէ իր սիրածը հրեղէն ձին հեծած կը գա:

Երբոր լսեց Դաւթի հռչակն՝ ելաւ հանդուքն, իր մօտ կանչեց  
 իրանի էն մեծ աշուղին — նրան մինչեւ Սասուն նամբեց  
 Որ իր անհուն գեղեցկութեան դիւքիչ գովքը երգի նման,  
 Եւ նա հեծած հրեղէն ձին գա եւ կանգնի իրա դռան:

Առեց սազը աշուղն այն մեծ, եկաւ, հասաւ Սասնա քաղաք,  
 Երգեց գովքը Ռոստամ — Զալի, վշտի տաղեր, վարդն ու սոխակ,  
 Ապա նրա սազը քրքոսաց հանդուքի այն գովքից պայծառ,  
 Որ ինքն աշուղն էր յօրինել եւ երգում էր այնպէս նարտար:

— Խանդութի հասակն ասեմ  
Զինարի ծառ նման է:  
Կարապի վզիկն ասեմ  
Մարմարէ քար նման է:

Ճակատի լայնքն ասեմ  
Լուսնակի բա՛կ նման է:  
Աչքերի փայլըն ասեմ  
Ջավահիր, ա՛կ նման է:

Խանդութի բերանն ասեմ  
Կիսարաց վա՛րդ նման է:  
Անարատ ծոցիկն ասեմ  
Բամպակի ա՛րտ նման է:

Մագերի գանգուրն ասեմ  
Հերկած հո՛ղ նման է:  
Աչքերի քարքիչն ասեմ  
Արեւի շո՛ղ նման է:

Էն կամար յոնքերն ասեմ  
Արարի Թո՛ւր նման է:  
Նարահա ծծերն ասեմ  
Շամամ ու նո՛ւն նման է:

Ատամի շարըն ասեմ  
Մարգարիտ, լա՛լ նման է:  
Ո՛վ հասնի նրա սիրուն  
Քաջ Ռոստամ — Ջալ նման է:

— Վարպետ, ասա՛, Խանդութն այդ հուր երա՞գ է լոկ թէ՛ իրական.  
Աշխարհումն է ապրում արդեօք թէ՛ մի երկրում կախարդական:

Աշուղն ասաց. — Արեւաշատ մեծ իրանի խոյ ֆաղաֆում  
Մի հագագիւտ ծաղկի նման չքնաղ Խանդութն է բողբոջում:

— Վարպետ, գնա՛ եւ Խանդութին իմ բոցավառ բարեւը տար.  
Ասա, հեծած հրեղէն ձին գալիս է մի նոր սիրահար:

2

Դաւիթն ելաւ, հեծաւ իր ձին, կողքից կախեց թուր — կայծակին.  
Վերջին անգամ նայեց հպարտ ու յաղթական Սասնա ֆաղէին.  
Քշեց նժայգն, հասաւ հլաթ, անցաւ Արնէշ, հասաւ Բերկրի,  
Գնաց, հասաւ Գործոթա դաշտ տափ արեւով մէջօրէի:  
Տեսաւ որ շոգ արեւի տակ ծանր բանում էր մի գուրբան.  
Կո՛րթ էր հողը, քրտնել էին գոմէշներն ու եզներն լծկան:

— Բարի յաջողում, շինական տղերք,  
Հեշտ լինի վարը եւ առատ՝ ձեր բերք:

— Բարին քո վրէն, կտրին ձիաւոր,  
Փափագիդ հասնես, լինես բախտաւոր:

— Քանի՞ օրս վարն ունեք անելու:  
Ասին դեռ ունեն մի տասն, տասներկու:

Ասաց. — Տաւարին մէկ հանգիստ թողէք,  
Դուք էլ գնացէք շաֆում մտէք:

Ելաւ եւ իր ձին գուրբանին կապեց.  
Նրանք չը նստած — նա արտը վարեց:  
Մշակներն ապշած եկան քամաշի —  
— Շնորհքը որ կա — ձիուն է, քոն չի՛:

Դաւիթ ֆակեց ձին, ինքն առաւ Գուրբանն  
Ու արտը վարեց կայծակի նման:  
Մի ծամում վարել, պրծել էր հերկը:

— Արեւդ միշտ վա՛ն, կանաչի ձեռքը  
Որ ունի այսֆան կորով անսպառ:  
Քո նամբէն՝ յաջող, փափագդ՝ ի կտուր.  
Ասին Դաւիթի հետ նաչի նստեցին:

Դաւիթն էր կերաւ, նրանք խօսեցին.  
Եօթը մշակի եօթն օրս հա՛ցն էր.  
Մէկ որ նայեցին — բան չէ՛ր մնացել:

— Ա՛յ մարդ, մեզ մի բան չի թողիր, ասին:  
— Բանը՝ անողին, հացը՝ դատողին.  
Ասաց ու հեծաւ իր հրեղէն ձին.  
Քշեց ու հասաւ Խանդութի շեմքին:

Դռան շեմքին լուռ կանգնել էր յաղթ ու խոժոռ մի դռնապան.  
 Օրն էր մեռնում, ընկել էին հսկա շուքերն երեկոյեան:  
 Սասնա Դաւիթ ձիւն իջաւ, նայեց հսկա դռնապանին,  
 — Դու լաւ տղա ես երեւում. երբ հանդուրթին առնեմ ինձ կին  
 Գեղ էլ ինձի քաւոր կանեմ — Դաւիթն ասաց դռնապանին:  
 — Անունդ ի՞նչ է, ա՛յ քաւոր ջան.  
 — Համդուլն եմ ես, քա՛ջ փահելվան:  
 — Քաւոր Համդուլ, թող ձին այստեղ, բակում մնա:  
 — Ջան Սանահէր, վախեմ բակում մի տեղ չկա:  
 Հաւաքել եմ այնքան կտրին ու փահելվան,  
 Որն պայագատ, արքայորդի, որն էլ՝ իշխան.  
 Իրենց բերած, իրենց թխած հացն են ուտում  
 Եւ հանդուրթին են ծառայում լոյս ու մթուն:  
 Սպասում են մի օր մէկին նա հաւանի —  
 Նրան իրեն սրտի սիրածն — էրիկն անի:  
 Բակումը կա մի հարիւր ձի, հարիւր՝ մսուր.  
 Ո՞ր կապեմ ձիդ. ո՛չ տեղ ունեմ, ոչ խոտ, ոչ ջուր:

Դաւիթն ասաց. — Քաւոր Համդուլ, ձին բակը տար,  
 Նա կը նարի խոտ ու մսուր իրեն համար:  
 Գնա, ասա շուշանագեղ էն հանդուրթին —  
 Սասնա Դաւիթն եկաւ հեծած հրեղէն ձին:

Հսկա Համդուլն հէնց որ լսեց Սասնա Դաւիթի անունը վառ,  
 Արագ վազեց հանդուրթի մօտ՝ սաստիկ շփոթ, լեղապատառ.  
 — Սասնա Դաւիթն սպասում է տանդ շեմքին.  
 Բակումն արդէն վրնջում է հրեղէն ձին.  
 Ի՞նչ ես ուզում — իր ձին հեծնի, թողնի, գնա —  
 Թէ՛ քո դռան մի ծառա էլ աւելանա:  
 — Համդուլ, մի տես ի՞նչ է անում հրեղէն ձին.  
 Խոտից, գարուց արդեօք գտաւ իրեն բաժին:

Հարիւր ձիերն սարսափահար բակի ծայրը քաշել էին  
 Եւ Դաւիթի ձին ախորժակով նաշակում էր խոտն ու գարին.  
 Եւ զնգում էր նրա խրխիջն որպէս մի կանչ յաղթանակի,  
 Սմբակներից կայծ էր ժայթքում ինչպէս խորձեր հուր կայծակի:

Համդուլն եկաւ եւ հանդուրթին պատմեց ինչ որ տեսել էր նա:  
 — Թէ՛ գոռ կուում, թէ՛ սիրո մէջ այսպէս գոր են քաջերն Սասնա.  
 Գնա, Համդուլ, ասա Դաւիթին մթնշաղով այգին թող գա:

Դաւիթ մտաւ մեծ սրահը. փահելվաններն նստել էին.  
 Ու թասերով կոնծում էին Սարաղայի կարմիր գինին:  
 Ջորս պատերից շողում էին հարիւր թրեր, հարիւր նիզակ.  
 Իսկ սրահում հնչում էր բամբ ուրախութեան մի աղաղակ:  
 Դաւիթի անունն որպէս փայլակ պայթեց նրանց շշմած գլխին,  
 Լոնց աղաւկն ու թասերը նրանց ձեռքում դողդողացին:  
 Ասես անեղ հրամանով բոլորը մէկ ոտքի ելան.  
 — Դաւիթ, ասին, համմէ, մեզ հետ նստիր զարթ գինու սեղան:

Դաւիթ նստեց. ու թասերը պղպջացին կարմիր գինով.  
 Հասում էր հուր, ծիծղուն գրսն ոսց ալեկոծ արեան մի ծով:  
 Լցնում էին Դաւիթի թասը, բաժանութիւն իրար զարկում.  
 Դաւիթն իրեն դատարկում էր — նրա սիրենց բերան տանում  
 Յետո դարձեալ Դաւիթ լիքը թասին տասում եւ պինդ զարկում:

— Ասես դգալով դուք ուզո էք ջրում —  
 Կանաչ փարջերով գինի եմ ուզում:  
 Ասաց, առաւ գինու կուտը, տարաւ այրուղ իր շրթունքին.  
 Դաւիթն նրա վերջին պուտը — դատարկ կուտը զարկեց գետին,  
 Առաւ դարձեալ մի ուրիշ կուտ, տարաւ շուրթին իր հրակէզ:  
 Ու յատակի վրա փշուր եղաւ անյոյս մի սրտի պէս —  
 Հարթել էր նա արդեօք գինով թէ հանդուրթի անմար սիրով,  
 Սրահն այն մեծ ու բազմութիւնն շուռ էր գալիս նրա գլխով:  
 Հէնց որ փակեց Դաւիթի աչքը՝ փահելվաններն ելան արագ՝  
 Պատերից վար առան թրեր, առան իրենց տէգն ու նիզակ:

Հանդուրթ տեսաւ այդ՝ երդիքից, գնաց, բերաւ մի պարկ կաղին,  
 Երբ որ նրանք թրերն առան, որ սպանեն Սասնա Դաւիթին՝  
 Սինուն զարկեց նա մի կաղին եւ զնգոցից Դաւիթ զարթնեց.  
 Ջէնքերն դրին սփռոցի տակ — ամեն մարդ իր տեղում նստեց:  
 Դարձեալ փակեց Դաւիթի աչքը, դարձեալ նրանք զնգեցին առան,  
 Նորից հանդուրթ զարկեց կաղին — զնգաց սինին արծաթաձայն:  
 Հէնց որ Դաւիթն աչքը բացաւ՝ զնգեցին դրին սփռոցի տակ,  
 Այնքան տեւեց խաղն այս մինչեւ կաղնու պարկը մնաց դատարկ.  
 Մինչե՛ւ Դաւիթ լաւ սքափեց վտանգաւոր իր թմբիկից,  
 Մինչեւ խոժոռ իր շուրջ նայեց՝ յոնքերն կիտած սպառնալից:

Նայեց իր շուրջ նստողներին, նայեց մէկ այն լեռկ պատերին,  
 Եւ սփռոցին այն խորտ ու փորտ, ուր զնգեցին պահել էին,

Ու քրքշալով ձեռքը զարկեց եւ սփռոցը դէմ շարտեց.  
Ձէնքերն ամեն մէկ մէկ առաւ ընկուզի պէս ձեռքով փշրեց:  
Յետո զոռաց. — Գաւոր Համդոյ,  
Բակիցը բեր ձիւս խուրջին.  
Էս փշրանքը նրա մէջ դիր:  
Երբոր հասնեմ Սասնա երկիր  
Շինեմ ձիւս պայտ ու բեւեռ:  
Համդոյ, բակից խուրջին առ, բե՛ր:

5

Այգին՝ հասուն շատ մրգերի բուրմունքիցն էր դարձել գինով.  
Հեշտ մթնշաղն իջել, ծածկել էր ծառուղին, քփերը գով,  
Ամառնային ծաղիկների հոյիերն անուշ եւ գունավառ  
Մթնշաղում այրում էին բոցերի պէս մշտապայծառ:

Նագան, փափուկ մի ոտնաձայն ... չքնաղ հանդուրժն ինքն էր  
գալիս —

Ի՞նչ սլացիկ հասակ ունէր, ի՞նչ հրեղէն կարապի վիզ.  
Ո՛չ մէկ ծաղիկ չունէր նրա քարմ այտերի կարմիրն անհառ,  
Ոչ էլ մէկ նուռ այդ շրթների փաղցրութիւնը արիւննավառ:  
Մեծ աշուղին չէր յաջողւել լրիւ գծել դէմքը նրա.  
Ոչ դիւքանքը նրա անհուն, ո՛չ շտրիքը նրա անսահ.  
Փառելեմաններն ողջ աշխարհի չունէին ուժն նրա քովին,  
Արար քրերն նրա բոցէ նայածքի տակ հալում էին:

Դարձիք տեսել էր դիւքանքը մշտափոփոխ՝ վանա Ծովի  
Բայց ի՞նչ էր այդ համեմատած փաղցր աչքերին նրա ծարի,  
Որոնք կախարհ լոյսի նման Դարձին իրենց էին փաշում.  
Եւ աղամա նա անձնատուր եղաւ նրա փարթամ գրկում:

Եւ համբուրեց նախտն այն լա՛յն — շուշանածուփ լուսնակի  
բակ,

Այտը նրա՝ խնձորի պէս՝ ե՛ւ կարմրավառ, ե՛ւ սպիտակ.  
Յետո նրա միւս այտը — բայց իր սիրտը չի հովացաւ,  
Դեռ իր ծաղիկ, բացէ հոգին նրա սիրուն մնաց ծարաւ:  
Բռնեց պագնեց կուրծքը նրա — քարմ բամպակի գրգուր ֆուլս.  
Յանկարծ գգաց մի ծանր ապտակ իր բախտաւոր շրթանց վրա:  
Մի կողմ փաշեց խիստ նախատուած — արիւնլու իր բերանը —  
Արագ վագեց դէպի իր ձիւն — դէպի բակը նրա տանը:

Ելաւ, կապեց քամը Սաղափին,  
Յետեւ կախեց ծանր խուրջին.

Ոտնն որ դրաւ ասպանդակին  
Բակից քուս հրեղէն ձիւն:  
Քշեց, մտաւ հնձած դաշտը, քէնն ու ամօքն իրեն դէմքին:  
Մէկ էլ նայեց որ շա՛տ հեռից մէկն էր վագում, նրան կանչում.  
Ականջ տեց եկող կանչին — կնոջ ձայն էր փաղցրահնչին.  
Յետեւ դարձաւ — հանդուրժն էր նա, ոտքերն բոպիկ ու վիրաւոր.  
Որտեղ կոխել՝ քողել էր նա վառ արիւնի մի հետք բոսոր:

Դարձիքն ուզեց այդ արիւնը հոսէր իրեն առոյգ սրտից  
Ոչ քէ չքնաղ իր հանդուրժի պատառոտած ձիւն ոտներից:  
Ձիւց իջաւ եւ հանդուրժին նստեցրեց ձիւն քամրին,  
Կտրեց երկու քեղանիքը, կապեց վերքը նրա ոտին,  
Ինքն էլ ելաւ, նստեց քամրին, հանդուրժին էլ առած ֆամակ.  
Մուրն իջել էր երբոր նրանք եկան, մտան նրա տան բակ:

հանդուրժ Դարձին առաւ, տարաւ մէկտեղ նստան իր սենեակում,  
Դէմքը պայծառ արեւի պէս — հոգում ծաղկած սէր ու խնդում —

— հանդուրժ, ասաց, սիրո պահին ինչն՞ու արիր ինձ խայտառակ,  
Յետո ինչն՞ու բոպիկ ոտքով հետեւեցիր այնպէս արագ:  
հանդուրժն ասաց. — Դարձիք, իմ ֆաջ,  
Մէրն էլ ունի կարգն իր պատշաճ.  
Երբ ինձ տեսար, չ'ասիր մէ՛կ բառ —  
Միրո ոչ մէկ խօսք բոցավառ:  
Հասար, նախատա համբուրեցիր —  
Այդ մէկը՝ լաւ — համբուրդ էիր:  
Համբուրեցիր իմ մէկ երես —  
Ջահել էիր — ներեցի քեզ:  
Միւս այտս էլ համբուրեցիր —  
Ասի — սիրուն համար արիր:  
Բայց որ կուրծքս էլ համբուրեցիր —  
Դու ինձ սաստիկ նախատեցիր:

— Ների՛ր ինձ, հանդու՛րժ, ես մեղաւոր եմ,  
Միրո մեծ խաղում անփորձ, անգոր եմ:  
— Ինձ համար արի՞ր ֆաջ մարդու մի բան,  
Ո՛վ անպարտելի, հզօր փառելիս,  
Ինձ սպառնում է Բարէ Յրանկին —  
Չամբել է ահեղ Ողան — Դողանին  
Որ կամ կին տանեն նրանք ինձ նրան —  
Կամ խոյ փաղաքը ֆանդեն ու գնան:  
— Դէ մնաս բարով, հանդուրժ անմեղան —  
Ո՞ւր էք — գալիս եմ, ա՛յ Ողան — Դողան:

Վագեց Դաւիթ, հեծաւ իր ձին, մէջքին կապեց թուր-կայծակին,  
Տեսաւ հեռուից ամպի նման բարձրանում էր թանձր փոշին:

Քշեց այն կողմ. գալիս էին հարիւրաւոր շէկ ձիաւոր,  
Նրանց գլխին գնում էին գոյգ փահելվան նշանաւոր:

— Ովքե՞ր էք, գոռաց, եւ ո՞ւր էք գնում.

— Մենք հիւր ենք գնում հոյի ֆաղափում.

Մեր արքան լսեց հանդուրի համբաւ,  
Մատանի նամբեց — բայց հանդուր չառաւ:

Եկել ենք նրան կամ տանենք գորով,

Կամ ելնենք հոյը ֆանդենք մենք օրով:

— Այսօր ձիաւոր՝ առել գէնք ու թուր՝

Մի կնոջ վրա կուի՞ քե՞ք գնում:

Ձեր երեսներին հազար թուփ ու մուր,

Արդեօք ձեզանից դուք չէ՞ք ամաչում:

Ձեր կուր, որ կա, ինձ հետ է առաջ.

Ո՞վ է ձեզանից գորաւորն ու ֆաջ —

Թող ինձ դէմ դուրս գա ահեղ պայքարի:

Ողան ձայն տւեց. — դէ՛հ, մեյդանն արի՛:

## 7

Մի ահարկու եւ կատաղի փահելվան էր Ողան հսկան.

Աչքի վերեւ յոնքն էր կիտուել՝ սեւ ու մռայլ ամպի նման.

Դէմքն էր թթու ֆացախի պէս եւ ձեռքն ու ոտքն իր՝ վիթխարի,

Ով որ տեսնէր նրա դէմքը — չէր մոռանար հարիւր տարի:

Իրար մէջքով փաթաթւեցին բազուկներով օձագալար,

Պրկուել էին մկանները, նրանց նայածքն՝ արիւնավառ.

Ընկնում գետին, նորից ելնում, կանգնում ահեղ իրար դիմաց,

տեղում էին բռունցքներով իրար մարմնին անվերջ հարած:

Յետո հեծան ձիերն իրենց, գուրգերն առան, կուի ելան,

Փոշին ելաւ ծածկեց շուտով շուրջի հնձած դաշտն ու դուրան.

Երկար վագքից, կուից յետո՝ երբոր գուրգերն էլ չօգնեցին՝

Մէկ կողմ դրին գուրգերն պողպատ — թուրերն իրենց մերկացրին:

Անվերջ վագքից, կուից յետո Ողանի ձին շատ էր յոգնել.

Մինչդեռ Դաւիթի հուր երկվարն ասես նոր էր կուի մտել:

Դաւիթ գարկեց թուր — կայծակին, ջարդեց նրա հսկա վահան,

Երկրորդ գարկին գետին փուկեց եւ վիթխարի, ահեղ Ողան:

Առիւծի պէս մոնչալով Դողան վագեց Դաւիթի վրա,  
Որ իր արնոտ թրին, ձեռքին ասես դրած լինէր հինա:  
Դողան տեսնով ահաւի էր — մի հիւաղի ունէր երես,  
Ցածրի շրթունքն կախում, ծածկում էր ծնօտը դմակի պէս:

Կուում էր նա դեռի նման, որպէս խոցած անգուսպ գագան,  
Քանի՞ անգամ Դաւիթն եղաւ նրա հսկա ոտքի կոխան,  
Սակայն հզօր մի ցնցումով միշտ էլ հպարտ ելաւ ոտքի.  
Կուի արին նրանք երկա՞ր, մերկ բռունցքով, առանց գէնքի:

Ելան, հեծան ձիերն իրենց ու ձեռքն առան գուրգը պողպատ,  
Նորից ելաւ թանձր փոշին ծածկեց հոյի այգին ու դաշտ.  
Եւ ազգիկներն հարիւրաւոր դիտում էին սարսափահար  
Ջոյգ ահաւոր հսկաների կուրն այդ բուռն արիւնավառ:

Երբոր գիշերն իր սեւ օղը փոքր փոշոտ դաշտի վրա,  
Ամառ մտնով մէկ մէկ վառեց անթիւ ջահերն իր շափիւղա,  
Մենամարտը այդ ահաւոր մղում էր դեռ սաստկութեամբ մեծ:  
Երբ մեծաւոր մի հարսի պէս յուսնակն իրեն դէմքը բացեց,

Նորից պայծառ յոյսի նման, սիրո ժպտի նման շիկնաւ՝

հոյի խոով դաշտին բացեց վառ իրանի ջինջ առաւօտ.

Բայց դեռ Դողան եւ ֆաջ Դաւիթ կուում էին կատաղօրէն.

Արիւն-ֆրտինք ելել, ծածկել դէմքն նրանց, շորերն ամեն:

Շողում էին թրերն նրանց՝ վառ ու բարի արեւի տակ.

Կուում էին երբ միջօրէն թափեց իրա բոցն ու կրակ.

Մի հարածով Դաւիթ ջարդեց Դողանի թուրն նրա ձեռքում.

Թուր — կայծակին իջաւ գլխին երբոր փախչել էր նա փորձում:

Ձեռքում թուրը արիւնածոր, հրեղէն ճծոյգն իրեն տակին՝  
Դաւիթ կանչեց անդեկավար, ահաբեկած նրանց գորգին.

— Դուք բոլորդ էլ աղքատ մշակ, խեղճ մարդիկ էք.

Ելէք բոլորդ եւ ձեր երկիր վերադարձէք:

Ո՞վ որ ելաւ եւ ձեզ կուի նամբեց այսպէս,

Ասէք նրա հետ միշտ կուի պատրաստ եմ ես.

Թէ որ ուզում է հանդուրի նման նա կին՝

Ասէք, իրեն դէմ կը գտնի Սասնա Դաւիթին:

## 8

Այս յաղթական կուից Դաւիթ խոյն էր դառնում ֆառամբակ —  
Թողին իրենց տափն ու արօր ամեն մանկալ, ամեն մշակ  
Եւ դիտեցին հիացմունքով ձիաւորին այն հրամագ,  
Որ թռչում էր որպէս մրրիկ, որպէս մի նետ, որպէս երազ:

Խոյի կողմից փոշու ամպով եկաւ շքեղ մի ձիաւոր .  
Ասաց . — Բեզ դէմ կոնի ունեմ, Բեզ գրողն եմ բերել այսօր :  
Սասնա Դաւիթ խիստ բարկացաւ — ո՞վ էր անմիտ այն փահելովան,  
Որ չէր թողնում իր հանդուրժին տանի լուրը մեծ յաղթուրեան :

Քաշեց թուրը եւ խոյացաւ այդ անծանօթ ֆաջի վրա .  
Վարժ էր եւ նա . հարածի տեղ իջնում էր շեշտ գարկը նրա :  
Մէկ էլ մարտար մի հարածով Դաւիթի ձեռքից ձգեց վահան .  
Եւ մոնչեց Դաւիթ արպէս մի ահարկու, խոցած գագան :  
Մէկ հարածով փորձեց ջարդել գուլթն յանդուզն այդ  
մարտիկին ,

Որ մի անշահ փորձանքի պէս հանդիպել էր նրա մամբին :  
Նա ծառս եկաւ . բայց այն գարկից գլխից թռաւ իր սաղաւարտ  
Եւ ուսերի վրա թափեց թուխ մագերի մի ծով առատ :

— Երկրորդ անգամ է ինձ նախատում ես .  
Խաղ ես անում հետս — բայց ո՞ւմ հետ — գիտե՞ս :  
Սարի մարդ եմ ես անտաշ ու կոպիտ —  
Բայց ոչ մի փայաս՝ գեղեցիկ ոտքիդ :  
Ասաց Դաւիթ եւ ձին ֆշեց՝ արհամարհոտ եւ մոլեգին .

— Կանգ առ, Դաւիթ, ա՛յ անասուած — կանչեց հանդուր-  
պաղատագին .  
Եւ բուքի պէս ֆշում էր ձին՝ մագերն հովից ծուփ ու ծածան .  
Ու տոփում էր Դաւիթի նժոյգն փայլատակող շանթի նման :  
հանդուրժն ասում էր իր ձիուն . — ինձ հասցրու իմ ֆաջ  
Դաւիթին ,

Եւ շոյում էր բաշը նրա եւ ազաչում նրա կրկին .  
Թոչում էր ձին նետի նման — բաշը թափած ջրվէժի պէս .  
— Երջանկութիւնս գրկումս ընկաւ եւ իմ ձեռքով փախցրի ես :  
Ասում էր նա, նորից խնդրում որ ձին իրեն տանի արագ .  
Յանկարծ ելաւ, կանգանաւ թամբին, իրեն ձգեց Դաւիթի ֆամակ .  
— Ո՞ւր ես փախչում ինձնից, Դաւիթ, դու իմ հօր, իմ բոցէ սէր .  
Գրաւեցիր սրտիս բերդը, դու ես նրա իշխանն ու սէր .  
Քանդիր նրան, թէ ուզում ես, արա մոխիր ոտքիդ տակին  
Միայն մնա անունը քո, նշանը քո նրա շէմֆին :

Դաւիթ դարձաւ, սիրով շոյեց մագերն նրա հողմածածան,  
Այտերն նրա շառագունած, վառ, նորաբաց վարդի նման :  
— Սրտիդ շքեղ, կուռ ամբոցում ինձ արել ես կարանաւոր .  
Ո՞վ է տէրը, ո՞վ է գերին — դա սիրո մէջ չէ կարեւոր .  
հանդուրժ, հոգիս, էլ ինձի հետ այդպէս անգութ խաղ մի անիր,  
Նոր ցանքի պէս դալար սիրտս, կանաչ արեւըս մի դադիր :

Մէկտեղ դարձան Խոյի ֆաղաֆ հեծած Դաւիթի կրեղէն ձին .  
հանդուրժի ձին վրնջալով հետեւում էր այն երկուսին :  
Երբ Խոյ հասան, թնդաց ֆաղաֆն պարերգերով հարսանեկան,  
Նրանց սիրով գուգում էին Սասունն հպարտ եւ վառ իրան :

Եկան աշուղ եւ սագանդար, թմբուկ ածող եւ փողափար,  
Եկան հասած աղջիկ, տղա հարսանեկան պարի համար,  
Եկան մշակ, արհեստաւոր, եկան համալ ու փահելովան .  
Այսպէս գարթ մի հարսանիք չէր ունեցել երբէք իրան :

Խոյի ֆաջերն ու ժողովուրդ հարսանեկան իբրեւ նւէր  
Դաւիթին ասին . — Ժողովուրդիդ տար մեր ողջոյն, յարգանքն ու սէր .  
Դուք ձեր սիրովն այս բոցավառ մեզ բարեկամ արիք Սասնա .  
Թող գեղեցիկ արպէս մի գորգ մեր սէրն հիւսի եւ ամբանա :

Մնաս բարով, Խոյի ֆաղաֆ, մնաս բարով, պայծառ իրան,  
Մնաք բարով հանդ ու ծաղկոց, շքեղ բագար ու այգեստան :  
Յլան, հեծան ձիերն իրենց, մամբա ընկան դէպի Սասուն —  
Նորապսակ Դաւիթ հսկան — հանդուրժ՝ նրա հարսը սիրուն :

Նրանց Սասնա ֆաղաֆ գալուց չէր բոլորել դեռ մի տարի  
Երբոր հանդուրժ ծնունդ տւեց անօրինակ մի տղայի .  
Գոց էր նրա աջ բունցքը արպէս կնքած գաղտնի մի գիր .  
Երբ բաց արին, ափում գտան լերդ արիւնի մի գունդ կարմիր :

Դաւիթն ասաց . — Սա նշան է գալիք արնոտ պայքարների .  
Վա՛յն է եկել նրա գլխին, որ ուրիշին վիզ կը ծռի :  
Տղիս անուն Մհեր դնեմք — հօրըս նման թող լինի ֆաջ  
Եւ միշտ մնա մշակ մարդկանց, ժողովրդի հարածող աջ :

Շէն ու խաղաղ Սասնա երկրում հունձին էր փուելի.  
օրհնութեան պէս.

Եւ կալից կալ բարձրանում էր առատ բերքի մի ոսկի դէզ:  
Հաւաքում էր հոծ բազմութիւն հին, ծառաշատ մեծ մեյդանում  
Լիալուսնի լուսով վարար, երբ բիւր աստղերն էին պլպլում:  
Լուսն էին պատմողների գրոյցներին հետաքրքիր —  
Շրջում էին պատմողի հետ ամեն քաղաք, ամեն երկիր,  
Վերադառնում նորից Սասուն — այդ լեռների գմբուխտ կղզին —  
Ուտին՝ կանաչ դաշտերի ծով, վերեւ՝ փերուզն իր երկնքին:

Եւ մի օր էլ մի մեծ աշուղ՝ եկած Լոռա երկրից չքնաղ՝  
Երգեց հեռու Արարատեան դաշտի մարդկանց երգերն ու խաղ,  
Գովէր հիւսեց Մասիս սարի, Լոռա հօր մարտիկների,  
Գուրջիստանի էն քիսանոյշ, վարդածիծաղ աղջիկների:

Պատմեց էն շէն եւ միշտ պայծառ Գուրջի հօր մարդկանց  
մասին,

Որոնց հոգում տեղ չի գտնում հարկահաւաքն ու քշնամին,  
Որոնք թողած գինու բաժակ՝ ձեռքն են առնում աղեղն ու թուր  
Եւ քշնամուն իրենց հողից դուրս են նետում ջարդ ու փշուր:

Աշուղն երբ իր երգն աւարտեց — Դաւիթ նրան կանչեց իր մօտ.  
Հարցրեց թէ ո՞ր է Գուրջիստան — կախարդ երկիրն այդ արեւոտ.  
Ասաց թէ ինքն շատ է սիրել ժողովրդին այդ անւանի,  
Ուզում էր որ Սասուն լինի նրանց ընկեր ու խնամի:

Ելաւ, գտնեց քառուսն տղա-ֆաջ, եւ թիկնեղ, ե՛ւ գեղեցիկ.  
Ասաց. — Գնանք մենք Գուրջիստան, ձեզի գտնեմ մէկ մէկ աղջիկ.  
Թող մեր միջեւ հաստատուի սէր, անփակտելի եղբայրութիւն.  
Քաջ են նրանք եւ անուան ինչպէս ֆաջ է եւ մեր Սասուն:

Գուրջիստանում նրանց համար սարքեցին պար եւ ցնծութիւն.  
Կարասներից կախեք գինին փարչերի մէջ էր կարկաչում.  
Յետո թասերն իրար զարկում, խմում իրար պայծառ կենաց,  
Կանչում էին Սասնա ֆաջերն — «Ա՛յ Գուրջիստան, միշտ հօր  
կա՛ց»:

Գուրջիներն էլ խմում էին անյաղք Սասնա փառքի համար —  
Երկու ազատ երկիրների եղբայրութեան կենացն անմար.  
Ուտի ելաւ Գուրջի հսկան — Գորգիս մարտիկն ու փահլեվան —  
Սասնա Դաւիթի սէգ նակատին կնիեց համբոյրն եղբայրութեան:

Դաւիթ նրան գրկեց սիրով — ոնց մեծ եղբօրն իր հարազատ  
Եւ անսահման, ջերմ գորովով պագնեց նրա այտն ու նակատ.  
Յետո վերցրած գինու թասը — ասաց. — Գորգիս, թանգ խնամի՛,  
Ո՛վ Վրաց դէմ կուի դուրս գա — նա եւ Սասնա է քշնամի:

Գորգիսն էլ ասաց. — Մեր անգին հիւրն էք.

Մեր հողը դուք ձեր երկիրն համարէք:

Եւ երբ որ գտնի ձեզնից վերջինը  
Իր սրտի սիրած լուսեղէն կինը,  
Եւ բոլորդ ընկնէք բարի նանապարհ  
Դէպի գեղեցիկ, ազատ ձեր աշխարհ,  
Մեր դուռը միշտ էլ բաց է մնալու  
Ձեզնից նոր հիւրեր մեզ մօտ առնելու:

Մինչեւ վերջին Հայը գտաւ իրեն փնտռած Գուրջի աղջիկ,  
Եւ աղջիկն էլ մինչեւ ընտրեց մի հրաշեա Սասնա մարտիկ՝  
Անցաւ ութ ձիգ, երկար տարի. եւ դեռ Դաւիթ Գուրջիստանում  
Քաջ ու շէնոյղ Գորգիսի մօտ որսի ընկեր, հիւր էր մնում:

Գնում էին սարեր որսի. եւ այդ մաքուր բարձունքներում  
Աղբիւրների ջրի նման իրենց սրտերն էին թափում,  
Եւ վիթխարի մէկ-մէկ վարագ եւ կամ վայրի ցուլ որսացած՝  
Տփում էին դէպի Թփղիս ցոյցերի մէջ համատարած:

Թէ որ յանկարծ յարձակւէին հորդաները անապատի  
Թէ Իրանից ասպատակէր վայրագ գորգը մի սատրապի —  
Երկուսը մէկ՝ քառատրոփ՝ Գուրջիների առաջն ընկած  
Նետում էին նրանց վրա արծիւների թափովն յանկարծ:

Եւ կորչում էր խոյ քշնամին ոնց եղեւոր կէզ արեւից,  
Ինչպէս փոշին է չքանում է՛ն սարերի քամու շնչից.  
Եւ Գուրջիներն դառնում էին իրանց դատին ու պարերին —  
Իրանց աղւար, վարդ կիների սիրակարօտ համբոյրներին:

Երբոր եկաւ ժամն քաժանման՝ նրանք իրար վզովն ընկան,  
Համբուրեցին եւ լաց եղան երկու փոքրիկ տղի նման:  
Դաւիթն ասաց. — Մեր այս կապը եղբայրութեան  
Կնիել ենք մենք անմեռ ու մեծ սիրով մի մոր.  
Թող անիծւի այն մարդն անարգ ու դաւաճան,  
Որ այդ կապը փակել փորձի դժբախտ մի օր:

Եւ մեծ պատուով, նւերներով նամբա ընկան Սասնա ֆաջեր —  
Ոմանք՝ դեռ նոր ամուսնացած, շատերն՝ արդէն տան, տղի տէր-  
Շատերը՝ տէր մի արհեստի, շատերն փողով ու բարիքով  
եկան հասան Սասնա երկիր ե՛ւ խնդութեամբ, ե՛ւ արցունքով:

Սասնում ուրախ տօն սարքեցին եւ կեր ու խում եւ ցնծութիւն,  
Ուր տարիներ հուր կարօտով այդ օրան է մնում Սասուն:

12

Դաւթի կարօտն անծայր ծո՛ղ էր. սահման չունէր, յատակ  
չունէր.

Ուր ճիգ տարի Թփղիս նստած նա լոկ իրեն սիրում էր կրծել  
Սասնա համար, նրա սիրուն նա գոհել էր ինչ որ ունէր —  
Իր հանդուրի եւ Մհերի մշտադալար եւ ֆաղցր սէր:

Սասնա երկրում կատարել էր շատ դաւ, աւեր եւ կեղեքում.  
Հարկ էր դրել աղֆատներին, շատերն եղել անհող, անտուն.  
Եւ հարկերից, կողոպուտից յղփացել էր մի ժանտ խմբակ —  
Յամփշտակել էր շատ հողեր, շինել էր շատ վանք ու դղեակ:

Եւ երբեմնի ազատ Սասուն՝ միայն մի յուշ էր հեռաւոր.  
Հանապարհին եւ սարերում՝ գող, աւագակ հարիւրաւոր.  
Եւ ժողովուրդն, որ չէր ծոնել վիզը ոչ մէկ բռնաւորի,  
Հիմա տնօրէն էր վիրաւոր՝ բեռան ներքո իր տէրերի:

Դաւթի հոգում եկաւ, կուտեց վիշտը որպէս ամպ անփարատ.  
Կանչեց իր լաւ մարտիկներին, որ պատրաստի ճակատամարտ,  
Որ մէկ գարկով փշուր անի ժողովրդի ոսոխներին —  
Երբոր օտար մի արշաւի դաժան լուրը նրան բերին:

Խլաթ ֆաղֆում եկել էր, մեծ բանակ դրել Չմչիկ սուլթան.  
Մարդ էր նամբել եւ պահանջել որ Սասունցիք իրեն հարկ տան.  
Թէ չէ նրանց ողջ կը ջարդի, երկիրն կանի հիմնայատակ,  
Կը վարի եւ աղ կը ցանի որ չը բսնի անգամ տատակ:

Զէնով Յովան ելաւ, կանչեց թէ գալիս են Սասնա վրա,  
Թող ամեն մարդ առնի զէնքը եւ Դաւթի հետ կուի գնա.  
Բայց այս անգամ նրա ձայնը հնչեց կոտրած զանգի նման —  
Ասում էին — Ի՞նչ ունեն որ, ինչի՞ համար կուի գնան:

— Մե՛նք ի՞նչ ունենք որ մեզանից յամփշտակի Չմչիկ Սուլթան.  
Ոչ հ՛ող ունենք, ոչ տո՛ւն ունենք — ինչե՞րս պիտի տանի թալան.

Դաւթի կողքին եկան մի խումբ իր հարագատ մարտիկներից.  
Ասին. — Առաջ օտար տէրը հետու պահենք մեր սարերից,  
Յետո մաքրենք մեր հաշիւը հայ կեղեքիչ տէրերի հետ.  
Յետ առնենք մեր հողն ու տունը, ազատ մեր կեանքն առնենք մենք

յետ:

Դաւթը հագաւ գրահէ շապիկ, մէջքին կապեց պողպատ գօտին,  
Հագաւ գրահէ մոյկը ոտին, գլխին դրաւ ֆագալս կոտին —  
Կողքից կախեց թուր — կայծակին, գուրզն ու վահանն առեց ձեռքին  
Եւ իր հօգը ֆաջերի հետ խլաթի դուռն ֆշեց իր ձին:

Ասես մարախ էր այն եկել, բռնել էր դաշտն ոսկի բերքի,  
Սուլթանն ասես հետն էր բերել տղամարդերն ողջ աշխարհի.  
Ասես մարդկանց մի հեղեղ էր՝ անծայրածիր, բազմագունեան  
Որ ելել էր չորս ծագերից եւ յարդելու էր յախտեան:

— Զարկէ՛ք — գոռաց Դաւթն անվախ, ֆաշեց անեղ  
թուր — կայծակին,

Որպէս յանկարծ խփող փայլակ գնաց, զարկեց զօրքի միջին:  
Եւ փոթորկի նման հասան նրա կողքին Սասնա ֆաջեր,  
Նրանց անեղ թափի առաջ, սարքն անգամ կը նահանջէր:

Այդպէս հօգը ու կատաղի Դաւթն երբէք չէր կուել դեռ,  
Երբէք այդպէս անպարտելի չէին եղել Սասնա Ծոնք:  
Թէ եկել էր մարախի պէս, փռու նման անցաւ, գնաց  
Դաւ Սուլթանի բանակն այն մեծ՝ դիակներով դաշտը ծածկած:

Եւ յաղթական Սասնա ֆաջերն հաւաքեցին Դաւթի բուրբ,  
Որպէս մի թանգ փառասպակ եւ մի լոյսի բակ փառաւոր.  
Խնդրում էին որ անյայտաղ Սասնա երկիրն վերադառնան  
Որ աւագակ ննջողներին ցոյց տան ուղին արքայութեան:

Դաւթը ասաց. — Մին ուղարկենք Սասնա ֆաղաք,  
Որ հռչակի մեր փառքը մեծ, մեր յաղթանակ:  
Ես ատում եմ մարդու արիւնն իմ ձեռքերին,  
Յարդ արիւնից կարմրել է եւ մեր հոգին.  
Եկէք, գետի ափին լւանք շորերը մեր,  
Խլաթ ֆաղֆում հանգիստ առնենք այս մէկ գիշեր,  
Լուսաբացին նամբա ընկնենք դէպի Սասուն,  
Որ յետ խլենք նրա կորած ազատութիւն:

Մի ֆաջ ողա այն ֆաջերից հեծաւ սպիտակ մի երիվար —  
Դէպի Սասուն նամբա ընկաւ յաղթանակի լուրովն այն վառ.  
Մնացողներն գետի ափին լացւելու շտապեցին:  
Սասնա Դաւթը կամրջի տակ կապեց իրեն հրեղէն ձին,  
Լուց շորերն ու զէնքերը թանձր լերդած մոյգ արիւնից,  
Փռեց շորերն խոտի վրա, զէնքերն կապեց ձիու թամբից:

Հաւաաբել էր քաղաքը ողջ եւ ցնծութեամբ դիտում նրանց,  
Որոնք շահել էին այնքան յաղթանակներ եւ փառք անանց.  
Անյագ աչքով հետեւում էր Սասնա անյաղթ այն հսկային,  
Որի հոչակն լոյս էր դարձել որպէս անմար շողն արեւին:

Այդ խանդավառ բազմութեան մէջ կար դաւանան մի Սասունցի,  
Որ քողով էր իր տունն ու արտն ու իր դատը հալալ հացի.

Գնացել էր վանառելու Սասնա երկիրն ու իր հոգին  
Օտար ամեն բանաւորի որպէս մի շոր ածանազին:

Եղել էր նա դաւանափոխ, իշխանների փշրանքն ուտող,  
Ժողովրդից արհամարհած, տիրողների սոսների հող.  
Եւ ինչ չափով որ անել էր Սասնա երկրի փառքն ու համբաւ —  
Այնքան մաղձ էր կիտուել նրա հոգում, այնքան վրէժ ու ցաւ:

Գետն էր մտել Սասնա Դաւիթ, լւացում էր գուլալ ջրում,  
Իր ձեռքերից, խղճմտանքից լւանում էր լերդած արիւն.  
Գետն էլ ասես կարկաջելով ողջունում էր շէտղ քաջին  
Եւ փարոււմ էր սրա մէջքին, սրա հոգոր, աննենգ լասջին:

Սասնա Դաւիթի, ժողովրդի քշնամիներն խորհուրդ արին,  
Ասիւս. — Դաւիթն սպառնում է մեր շահերին, մեր կարգերին.  
Ձէ կարելի բաց անկատով նրա դիսաց կուր դուրս գալ.  
Պէտք է, սակայն, նրա կեանքին եւ ընթացքին շուտով վերջ տալ.  
Թէ ոչ էլու եւ աշխատող ժողովուրդը ամեն երկրում  
Գետի նման պիտը քափի իր տէրերի ազնիւ արիւն:

Ծախուած Հայն այն դաւանափոխ ասաց. — Նրան ես կսպանենմ.  
Ամբողջ հոգովս, կատաղօրէն այդ Ծոներին ես ստում եմ:

Եւ մի ժանգոտ եւ հսկա խոփ՝ քէժ կրակի մէջ կրամբացրած՝  
Առաւ, զգոյշ գետափն իջաւ այն դաւանան հայն անիծւած,  
Եւ քփերը սրջից գաղտնի Դաւիթի մէջքին զարկեց յանկարծ,  
Երբոր ջրից դուրս էր ելնում Սասնա հերոսն այդ փառասպանծ:

Գոռաց Դաւիթ որպէս առիւծ՝ ողջ հասակով փուեց գետին  
Ինչպէս հողմից տապալում է աշտարակող շէտղ սօսին.  
Մտել էր խոփն նրա մէջքից եւ դուրս եկել կրծքիցն այն վառ  
Որ արեւի պէս վառուել էր ժողովրդի սիրո համար:  
Կուրծքն, որ այնքան քշնամու դէմ դրել էր նա բերդի նման  
Խոցել էր խոր եւ մահացու՝ ստոր ձեռքովն այդ դաւանան:

Ասես արեւն էր խաւարել, ասես էլ վերջն էր աշխարհի,  
Ալեկոծեց ամբոխն այդ մեծ խոր կսկիծով մի վիթխարի.  
Լալով եկան Սասնա քաջերն, վերցրին դիակն արիւնլուս,  
Եկան կիներն իրաք՝ քաղքի տխուր լացին նրա վրա.

Եւ բռնեցին մարդասպանին, կտոր կտոր արին պրծան —  
Ձգեցին, որ շներն ուտեն — բայց չը դիպաւ մէկ շուն նրան:  
Ձին էլ կտրեց իրեն կապը, եկաւ, կանգնեց տիրոջ վրա,  
Որ մարել էր մի օրս պէս՝ շառ լոյսերի մէջ իրիկա.  
Սմբակները զարկեց գետին եւ վրնջաց որսուման պէս  
Արագ տուիեց դէպի Սասուն՝ փայլատակի պէս հրագէս:

Սասնա աշխարհում ծափ ու ծիծաղ էր,  
Սասնա աշխարհում խնդում ու խաղ էր.

Թնդում էր ուժգին, զնգում ցնծալից  
Մեծ Դաւիթի անունն ամեն բերանից:

Կանգ առաւ վաստակն՝ ոսկի հանդերում,  
Լսեց սայլերի նոռոցը նամբում.

Ոստայնակն քողեց իր հորն ու հինած  
Եւ տօնի ելաւ՝ յաղթութեամբ հարբած:

Դարձի նանապարհն ծաղկեց վարդավառ՝  
Յաղթող քաջերի ողջոյնի համար.

Եւ կին ու աղջիկ փնջերը ձեռքին՝

Կեցան յաղթութեան ծաղկավառ նամբին:

Խանդութն էլ ելաւ որպէս առաւօտ,  
Իր սրտում վառած եւ սէր եւ կարօտ.

Մհերն էր պարում մշակների հետ —

Սասնա անբաժին, գրկւած մարդկանց հետ:

Եւ ասում էին մշակ, շինական.

— Շուտով գալու է Դաւիթն յաղթական

Պիտի շողացնի իր քուրը նորից

Եւ մեզ ազատի մեր ժանտ տէրերից:

Դաւիթի դռան շեմքին եկաւ, տխուր կանգնաւ հրեղէն ձին՝  
Կողքից դեռ կախ Դաւիթի գէնքեր — չկար Դաւիթ նրա քամբին.  
Եւ իմացաւ խանդութն իսկոյն քէ ձին ի՛նչ սեւ լուր էր բերում.  
— Ես մեռնէի, իմ քաջ, նչաց, մարած ընկաւ որդու գրկում:

Գաղար առան պարն ու խաղեր, լոեցին երգն ու ցնծութիւն.  
Սասնա վրա որպէս գիշեր իջան մորմոխ ու տխրութիւն.  
Մ'հեր քառ ձիւ քամբին — քշեց խաբ նետի նման.  
Տեսաւ հայրը պառկել էր մունջ՝ կրծքին մի մեծ կարմիր նշան:

Լալիս էին մայրերն — ասես իրենց որդին մեռած լինէր,  
Լալիս էին հարսն ու աղջիկ, գորքն ու մշակ, մանուկ ու ծեր.  
Այդպէս կտրին, շքեղ մարտիկ — ժողովրդի հօր պաշտպան  
Ոչ մի վէպում չէին երգել ոչ մէկ աշուղ, ոչ մէկ Գուսան:

Դաւթի դիակն առան դրին Մուրադ ձիւ սաղափ քամբին,  
Մ'հերն լալով եւ ընկնւած՝ հետեւում էր հօր դիակին:  
Գնում էին կտրած սրտով՝ իրենց հագում սե՛ւ սե՛ւ անափ  
Սասնա քաջերն, որոնց աչքին մահը չունէր ոչ մի սարսափ:

Սրբոր հասան Սասնա քաղաք փրքաւ հառաչ եւ լաց ու կոծ.  
Լուռ ու դատարկ էր քաղաքը — ասես լինէր գերեզմանոց.  
Ողջ ժողովուրդն հաւաքել էր նրանց անցած նանապարհին՝  
Ասես Սասունն էր գարկըւած՝ խոփը խրած նրա կրծքին:


Խանդութ կանգնել էր կտուրը եւ Մ'հերին էր սպասում,  
Գուցէ Դաւիթ դեռ չէր մեռել, գուցէ իրեն խաղ էր անում.  
Բայց երբ լսեց տակաւ անող, ցնցող ձայնը հեկեկանքի,  
Ապա յամբ, մեռելական երթը դարձող Սասնա գորգի.  
Ու երբ տեսաւ իր հոյակապ Դաւթին փռած ձիւ քամբին,  
Մ'հեր որդին էլ գլխիկար հետեւում էր արտասագին.

— Դաւիթ, հոգիս, առանց քեզի կեանքն ի՞նչ արժէ ինձի համար.  
Ասաց խանդութ հեկեկալով իրեն ձգեց կտուրից վար:

Վերցրին նրան եւ Դաւթի հետ տարան սարումը քաղեցին,  
Ծովասարի գմբուխտ լանջին, մի դարաւոր կաղնու տակին:  
Ժողովուրդը չէր հեռանում — սիրտն էր ասես այնտեղ քաղել  
Եւ իր յոյսը, ու չէր կարող իրեն բաժնել նրանցից էլ:

Ու դաւանան Սասնա ջոջերն եկան, գաղտնի խորհուրդ արին,  
Ինչպէ՛ս դնեն ծանր տուրքեր, ի՛նչպէս ննշեն ժողովրդին:  
Դաւթի մահով, ասին, Տէրը մեզ ազատեց այդ Մ'հերից,  
Մ'հերն քանի դեռ տղա է — հեռացնենք Սասնա հողից:

Թող որ գնա ուրիշ երկրի մշակներին պաշտպան կանգնի.  
Նրա կուին, պաշտպանութեանն հօր Սասունն էլ պէտք չունի:  
Զէնով Յովան, դուռդ փակիր այդ խելագար լակոտի դէմ.  
Բա՛ւ է խաղան մեր կեանքի հետ — մեր կեանքն իրենք խոմ տւած  
չեն:



ՊԶՏԻԿ ՄՅԵՐ

Դ

1

Խաւարն իջաւ սուգի նման, մնշող՝ որպէս անյուսութիւն.  
Եւ դեռ Մհերն՝ որր ու անտէր՝ հեկեկում էր թանձր մթում.  
Հօր ձին մօտն էր կանգնել տխուր, ասես նա էլ արտասուում էր —  
ժողովրդի ազատութեան վազքն այդ անմահ եւ բոցահեր:  
Ելաւ, հեծաւ մծոյզն իր հօր, եկաւ իրենց դուռը թակեց.  
Լուռ ֆաղաֆում նրա ձայնը հնչեց որպէս սրտի մի ծեծ.  
Ոչ ոք բացաւ դուռը նրան — այդ որբացած, հէզ պատանուն,  
Շատ էր յոգնել — գլխին մի ֆար՝ ընկաւ քնեց մութ փողոցում:

Լուսաբացին եկաւ, նրան արթնցրեց Ձէնով Յովան.  
— Որդի, ասաց, ազֆատ մարդ եմ, քեզ համար տեղ չունեմ մեր  
տան.

Աշխարհէն է լայն, դու էլ՝ ուժով, գնա քեզի մի գործ մարիւր.  
Մոռացիր որ մենք կանք այստեղ — ասեմք չկա Սասնա երկիր:

Մհեր ելաւ, հեծաւ իր ձին եւ թափ տւեց ոտքի փոշին,  
Գնաց սարը, իրեն ձգեց իր հօր ու մօր գերեզմանին.  
Նորից թացեց իր արցունքով դեռ նոր թափած հողը նրա.  
— Ինչո՞ւ, ասաց, ինձ թողեցիք այս ֆարասիրտ երկրի վրա:

Ելաւ նորից, հեծաւ իր ձին, կողքից կախեց թուր — կայծակին  
— Ինձի, ասաց, տուն թող լինի, ուր կամք կառնի հրեղէն ձին.  
Աշխատաւոր եւ գիւղացի ժողովրդին լինեմ պաշտպան:  
Կը մարեմ հացս իմ ձեռքերով աշխատաւոր մարդու նման,

— Խոնջ ու ֆաղցած՝ Մհեր հասար ցորենի մի դաշտ ընդարձակ,  
Ուր ծփում էր ալիֆ, ալիֆ հուր հասկերի ոսկի ծովակ,  
Առած մանգաղ եւ գերանդի մի ժողովուրդ արեւավառ  
Քաղում էին բերքն այդ առատ մի հողատէր ջոջի համար:

— Ճամբորդ մարդ եմ, անօթի եմ —  
Մի պատառ հաց տւէ՛ք ուտեմ.

— Թէ ուզում ես մի պատառ հաց,  
Ե՛կ, մեզի հետ ու բանի կա՛ց:

Մհերն առեց մի գերանդի եւ սկսեց ցորեն ֆաղել  
Նրա ֆաղածն յիսուն մարդու ֆաղածիցն էլ էր առանել:  
Յետո եկաւ հողատէրը, տեսաւ ֆաղել պրծել էին,  
Իմացաւ որ այդ գործը չէր անվարձ բանող այդ խեղճերին:

— Զանկի տղա, աչքս մտար, արի դու իմ գիւղումն ապրիր,  
Մշակներիս, ծառաներիս վերակացու եւ պետ եղիր.

Մհեր դարձաւ վերակացու, բայց բոլորի գործի դիմաց —  
Նա բանում էր կրկին անգամ եւ ուտում էր կուշտ փորով հաց:

Կալն էլ ելաւ եւ ցորենը դիզեց ոսկի դարերի պէս —  
Ու ձի հեծած, ծառաներով տէրը եկաւ իր կալին տես.  
Քաղփից եկել էր մի հարուստ. սուկարկեցին, տին, առան,  
Առաւ մի մեծ ֆսակ ոսկի եւ ցորենը տուեց նրան:

Սարումն ունէր անթիւ ոչխար եւ արօտում՝ մի մեծ նախիր,  
Մառան լիքը ինչո՞վ ուզես — մեզը ու կարագ, սեր ու պանիր.  
Ամեն օր թարմ բաղարջ ու հաց, ընտիր գինի եւ խորոված.  
Իսկ գիւղացու ողջ երազն էր կիսատ փորով մի ցամաք հաց:

Բուպիկ ոտքով եւ կիսամերկ թէ ցրտի դէմ եւ թէ տօթին  
Մեծի դռան շնիցն էլ վատ կեանք էր վարում խեղճ գիւղացին.  
Ցանում էր նա եւ իր բերքից իրեն ձեռքը բան չէր մնում,  
Նա միշտ տկոյր, իրեն կինը մեծի համար շալ էր հիւսում:

Մհեր մի օր հարցմունք արաց գրկած, անբախտ այդ  
մարդերին.

— Որքա՞ն պիտի դատէ՛ք այսպէս եւ տա՛ք բերքը հողատէրին.  
Որքա՞ն պիտի նա վայելի եւ դու՛ք հացի կարօտ ֆաշէ՛ք.  
Նա մի մարդ է — հազար ունի. դու՛ք հազար է՛ք — մի բան չունէ՛ք:

Գիւղի մարդկանց խմբի միջից նրան խօսեց մի ալետր,  
Նրա դէմքը կննիւրով լի — որպէս մի արտ ակոսաւոր:  
— Որդի՛, տղա ես դեռ, դու չես տեսել աշխարհ.  
Ապրիր ու սովորիր — կեանքի դասն է դժար.

Մշակ մարդը հողն է, բարիք է նա ծնում.

Հողի պէս միշտ բաշխում — ինքն անբաժին մնում:

— Զեմ հաւանում, աղբեր, ասաց, ես ձեր հողի գաղափարին,  
Երբ տէր կանգնի ամեն մշակ իրեն հալալ վաստկածին,  
Էլ չէ՛ք նստի մեծի դռան՝ ողորմելի, վզերը ծուռ,  
Էլ չէ՛ք նայի դու՛ք գալիքին անյոյս սրտով, այդպէս տխուր:

Եւ խոր կսկիծ իրեն սրտում՝ ելաւ, հեծաւ հրեղէն ձին,  
Գլխին դրեց ֆագալս կոտին, կողփից կախեց թուր կայծակին.  
Նայեց անյոյս այդ մարդերին, նայեց փոշոտ գիւղին տխուր,  
Կայծակի պէս ֆշեց իր ձին եւ չը գիտէր ինքն էլ դէպ ո՞ւր ...:  
Մտածում էր թէ աշխարհը նրանց Սասնա Մուռ էր ասում,  
Թէ Մուռ էր նա — ի՞նչ էր արդեօք այդ խեղճ գիւղի մարդկանց  
անուն:

Եկաւ, հասաւ Բաղեշ ֆաղաք նորից յոգնած եւ անօթի.  
Ո՞ր մէկ դուռը թակէր արդեօք, ո՞ր մէկ բարի անձանօթի.  
Նրա նժոյգն եկել, հասել էր մի հսկա փռան առջեւ.  
Շարել էին հացերը թարմ — փափուկ որպէս հաւփերի թել:

— Հացքույս աղբեր, անօթի եմ:  
— Ինչքա՞ն փողի ֆեղ հաց կշռեմ:

— Փողըս ո՞րն է, ես փող չունեմ.  
Թէ ուզեցաւ — ֆեղ կաշխատեմ:

Եւ հաւանեց փռապանը, Մհեր դարձաւ աշխատաւոր,  
Գիշերն ամբողջ — մինչեւ կէսօր շինում, կոնում էր նա խմոր.  
Եւ ալիւրտ ու ջարդած՝ փռան յետեւ, մուր նկուղում,  
Իր պէս յոգնած մարդկանց կարգին ինքն էլ ընկնում էր ու ֆնում:

Շարաքն անգամ ստանում էր մի մի ֆանի հաց, մի ֆիչ էլ փող —  
Իր աչքերից խլած լուսնակն, աստղն ու ծաղիկ, արեւաշող.  
Մտածում էր մեռելները բախտաւոր են ողջ բանորրից —  
Նրանց վերեւ երկինքն է վառ, շուրջը՝ գարունն բուրումնալից:

Ժողովուրդը չէր իսկ կարող գնել այն լաւ, ծաղիկ հացից,  
Որ հոտաւէտ վարդի նման բացում էր տա՛ք փռան միջից.  
Փռատէրը նրանց համար ունէր մի հաց աժանագին,  
Որ չէր ուտի անգամ շունը — նրա ստաջ թէ դնէին:

Փռատէրը շատ տուն ունէր, ֆէռչկ ու հանդեր, ծառ ու  
պարտէզ.

Մի ֆառածի կառնով ելնում, ման էր գալիս մի կռփի պէս:

Եւ յետեւից վագում էին մուրացկաններ հարիւրաւոր,  
Որոնց կեանքը խորտակել էր մի չար խաղով, մի անբախտ օր:

Եւ գրեւի քննիծաղով նրանց նետում էր մի սեւ փող.  
Ու փողոցով սուրում, անցնում էր նրա կառքը շառաչոյ:  
Որքան շատ էր նա տուն քանդում, այնքան յանդուգն էր նա  
դառնում,  
Այնքան յանախ ծամ էր գնում եւ փառք տալիս մեծ Աստըծուն:

Մի օր երբոր գործից յետո իրանց սկուզն էին գնում —  
Մեքնն սասց ընկերներին.

— Մեր թխածը հաց չէ՛ — արի՛ւն ...

— Մեքն, ասին, մեքն չթխեմք այդ սեւ հացը թխող շա՛տ կա  
Դու իզո՛ւր ես սիրտդ մաշում աղքատ մարդու բախտի վրա:

— Ես գգում եմ որ ալիւրը մեր ոսկորից եմք մեքն աղում,  
Եւ ջրի տեղ նրան խառնում մեր կեանքը եւ մեր արիւն:  
Աղքատ մարդը օր չի տեսնի քանի մնա բաժան, բաժան —  
Թէ միանա — նա կը լինի ողջ աշխարհքի տէրն ու իշխան:

4

Մեքն թողեց Բաղեշ քաղաք, գնաց, հասաւ Շատալի Թաղ,  
Որ նստում է գով Տիգրիսի երկու մոլն գեղածիծաղ.  
Տեսաւ որ շատ տնեքից ներս բանում էին մի ազնիւ շալ —  
Տատրակի վառ լանջի նման երանգածուի եւ լուսափայլ:

Մի մարդու մօտ աշկերտ մտաւ որ թանգ արհեստն այդ սովորի.  
Շուտով տեսաւ շալ բանողը մնում էր խեղճ, առանց շորի.  
Նրա բանած յարգի շալը հագնում էր մեծն ու հօրը.  
Իսկ նա իր բախտն էր անիծում, իրեն ծնած դժբախտ օրը:

Թողեց, գնաց սուկար եղաւ. կարմիր կօշիկ էր նա շինում.  
Նրա շինած սուրը հագին մեծաւորի կինն էր ստնում.  
Իսկ սուկարը, որ օրն ի բուն կուզը հանած աշխատել էր,  
հեղճ եւ անյոյս տուն էր դառնում՝ ոտին մաշած մի գոյգ սուկը:

Շատ երկիրներ շրջեց Մեքն — ամեն տեղն էլ բանը նոյնն էր —  
հեղճն ի՛նչ անէր, ի՛նչ բան շինէր — ջոջը գալիս ու տանում էր.  
Եւ տնում էր ժողովուրդը իր ծանր, անմար բեռի տակին.  
Վէրքը սրտին՝ նորից կնում իր սեւ, դաժան աշխատանքին:

5

Եկաւ, հասաւ վանա քաղաք. տեսաւ մի յամր, հսկա թափոր  
Ողողել էր մեծ փողոցը որպէս յարած մի գետ պղտոր.  
Ուր հատ հսկա, ուժով բանոր տանում էին իրենց ուսին  
Սեւով պատած մի սեւ դագաղ՝ ծաղկափթիթ մայիս ամսին:  
Բարձրանում էր թափորը մեծ մի ծառաշատ բլրի վրա,  
Դէմը գոյգ սարն էր վարագա, ցածը՝ փերուզ ծովը վանա.  
Եւ անում էր բլրի շուրջը մեծ բազմութեան ծովն ալեկոծ,  
Հասնում էին հետզհետէ խմբերը նոր՝ տխուր մարդոց:

— Ո՞վ է մեռել, ո՞ւմ դագաղին է հետեւում ամբոյսն այս մեծ.  
Մօտը կանգնող մի ծերունու Սասնա Մեքնն հարցնումք արեց:

— Դագաղն է դա մի քաջ տղի, որ գոհ եղաւ վանա հողին.  
Քաջ տղա էր, վարպետ քարհան, եւ նւիրած իրեն գործին:  
Երբ նա գնաց որ պահանջի իր իրաւունքն, իրեն դրամ —  
Զօրքեր նրա վրա ընկան, սպաննեցին հողի դռան:

Անցորդ աղեր. դու չո՛ւ գիտես էն ահաւոր վանա հողին.  
Կարաւաններն նրա գնում են Հինդուստան, Չին ու Մասին:  
Ծախում է նա ապրանք Շամում, Բիզանդիոնում, Վենետիկում  
Եւ յետ բերում ոսկու բեռներ, ակունք, բուրմունք եւ արքայում:  
Իշխան չէ նա, չէ գահակալ — լոկ մի յայտոյ մանառական.  
Բայց սողում են նրա առաջ իշխան ու ջոջ ու գորական.  
Նա է ըմտրում դատաւորին, նա է վնասում կուրի վախճան.  
Շահողն է նա ով էլ կուրում լինի պարտուղն ու յաղթական:

Մի օր ելաւ իրեն վայելի մի փառակերտ դղեակ շինի,  
Ուր շողոքան գորգերը թանգ եւ գարդերը վառ իրանի,  
Մաղափ գահեր Հինդուստանից եւ անօթներ, գրքերը չին,  
Փարթամ ցահեր վենետիկից եւ Բարվարի նռան գինին:

Զօրով, փողով յափշտակեց ինչքան հողեր որ ուզում էր,  
Եւ տնագործի՝ փողոց ընկան այնքան անտէր ընտանիքներ.  
Եկաւ մի մեծ մարտարապետ, ամեն միւղի ծանօթ վարպետ,  
Եկան սարակ, արհեստաւոր եւ խմբերով տղա - աշկերտ:

Եւ կառուցին հրաշակերտ մի ապարանք հողի համար —  
Ցողուն ու պատն՝ ոսկեփանդակ, սիւնն ու յատակն՝ ընտիր մարմար:  
Շէնքի բոյոր տարածում էր եղեմական մի մեծ պարտէզ,  
Ուր շարունակ երգում էին կախարդ հաւքեր կարօտակէզ:  
Երբ ապարանքն աւարտեցին — հողան մի մեծ կոչունի

սարքեց,

Թագաւորին, իշխաններին եւ ջոջերին ամեն կանչեց.  
Բողբոջում էր նռան գինին, բարձրանում էր երգ ու ծիծաղ,  
Խորտիկներն, խորովածի հոտն էր բռնել թաղերից թաղ:

Թագաւորը նշան կախեց փարթամ հոջի անխիղն լանջին,  
կաթողիկոսն օրհնեց գործը եւ վաստակը խարդախ հոջին,  
իշխանները նրա անծայր, մեծ բարութեան գովքն հիւսեցին.  
Եւ ջոջերը՝ միշտ ժպտագին՝ հոգով նրան նախանձեցին:

Օրեր անցան եւ ապարանք շինողները — վարպետ, բանուոր  
հկան իրենց վարձն ուզելու հոջից՝ նրա այդ տանը նոր.

— հոջա, ասիր որ այսօր գանք —

Ամենքս մէկ ահա եկանք.

Խեղճ ենք բոլորս — հացի կարօտ,

Մեր վարձքն ինչո՞ւ պահես քեզ մօտ.

Քոնը, որ կա, ծո՞վ է անտակ

Մերն է՞ կարիք — լափող կրակ:

— Ձեզ համար էր որ այս դժբաղին ես շինեցի.

Մէկ օր ես ձեզ չը թողեցի առանց հացի.

Վնարեցի քարին, հողին եւ ատաղձին,

Եւ գորգերին, անօթներին էլ առանձին:

Կարաւանը Թուրանի մէջ եղաւ անհետ

Եւ վեներտիկ գնացող նաւս էլ չեկաւ յետ:

Պարտատերերս՝ թուրք գլխիս՝ սպասում են՝

Պատեհ ժամին հոգով, մարմնով ինձ կործանեն:

Ի՞նչ էլ յինի — ես չեմ մնա ձեզ պարտակամ:

Սպասեցէ՛ք մի օր կը գա իմ կարաւան —

Նրանք որ քեզին էին շինել վանա խարդախ հոջի համար՝

Դատարկ ձեռքով տներ դարձան՝ դարձեալ յոյսով, համբերատար:

Շատ մաշեցին նրա դուռը — միշտ ձեռնուձայն վերադարձան

Նրա նաւը միշտ գալու էր եւ գնում էր իր կարաւան:

Վերջին անգամ երբ նա կրկնեց դարձեալ նոյն հին Տէր  
նորմեան՝

Մի հրդեհի պէս բորբոքեց այն վիթխարի, ազնիւ քարհան.

— Մեր խեղճներս գրկանումն ես վանա հոջա, հզօր դարձել.

Մենք դատում ենք արիւն — քրտինք — դո՞ւ ես շքեղ քեզինում նստել:

Երբ քայլում է քո կարաւան — մեր գրկանքի ողբն է հեծծում,

Երբ սահում է նաւը քո մեծ — մեր ցաւերի ծովն է կոծում:

Բաւական է որքան հլու շան պէս դուռը քո մաշեցիմք,

Բաւական է որքան լացով մեր վարձքը մենք աղերսեցիմք.

Թէ մեր ձեռքով շինած տունքդ մենք քո գլխին չկործանենք,

Թող քո շունը, ոտքիդ փոշին եւ ո՞չ պատուով մարդ յինեմք մենք:

Թէ գնացիմք էլի կը գանք ահեղ որպէս ծովամարտիկ,

Որի առաջ նաւը եւ ուժըդ տաշեղ են լոկ ու խաղալիք.

Կը գանք որպէս անապատից փրթած ահեղ այն ուրագան,

Որ աւազի տակ կը թաղի քո փառքն ու յոյսն ու կարաւան:

Վանա հոջան լուռ նստել էր մի սաղափէ գահի վրա  
Մի ամպ իջաւ նրա հոգում եւ մի հեգնանք դէմքին նրա:  
— Որդի, սասց, տաքարիւն ես, մեզանում կա կարգ ու օրէնք.  
Խաղաղ խօսով եւ օրէնքով մեր հաշիւը պէտք է մաքրենք:

Եւ քարհանը՝ բռունցքը սեղմ՝ փոքորկի պէս սպանական  
իրեն յուզած ընկերներով ելաւ կանգնաւ հոջի դռան:  
Շատերը փոխ էին քարել հոջից գալիք վարձի փոխան,  
Ոմանք էլ տուրք չէին տուել, որ վարձքն առնեն ու տուրքը տան:  
Պարտատերերն հիմա ելել իրենց պարտքերն էին ուզում,  
Եկել էին հարկահաններն՝ տէրութեան հարկը պահանջում:

Ասաց քարհանը իր ընկերներին  
Երբ լուռ գլխիկը տուն գնում էին.

— հոջան ասում է կա կարգ ու օրէնք,

Մեծ դատաւորին եկէ՛ք մենք դիմենք.

Նրա աջ ձեռքում մէկ հատ կշիռք կա —

Ո՞վ արդար լինի — դատն նրան կը տա:

Եւ դատաւորը դրեց ու առաւ,

Կիտեց յանգիւրը, բխերն ոլորեց.

Մի մեծ մագաղաք կիսով բաց արաւ,

Դատն ու իրաւունք հոջին շնորհեց:

Գնացին, ասին կաթողիկոսին,

— Աստուծո՛ւ շուքն ես իջել մեր երկրին.

Արի, դո՞ւ մեզ դատ, իրաւունք արա.

հոջին պատուիրիք որ մեր վարձքը տա:

— Որդիք, ձեր դատը երկնքում գտնէք.

Փուչ եւ ունայն է աշխարհի օրէնք:

Ասեղի ծակից ուզուր կը մտնի

Հարուստն երկնքում ասը չի դնի:

Իրգէ՛ք ձեր գանձը վերեւ, երկնքում

Եւ կեանք անվախն եւ անվերջ խնդում:

Մեր կաթողիկոսն այսպէս պատուիրեց.

Եւ դեղին սաքէ համրիչը ձեռքին

Մետաքսէ բարձին իր գլուխը դրեց

Ակնակուռ մի խաչ կախած իր լանջին:

Տխուր, ձեռնուձայն կրկին յետ դարձան,

Դարձաւ եւ նրանց խօսեց էն քարհան:

— Մեզի համար չեն կրօնն ու օրէնք,

Մեր դատն արիւնով պիտի մենք շահենք.

Թէ նորից հոջան մեր վարձքը չը տա —

Քանդենք իր տունը իր գլխի վրա:

Խոջի դռան եկել, կանգնել էր շատ զինուոր ու պահապան,  
Իսկ պարտիզում սարքել էին խորտիկների գինու սեղան.  
Եւ նրա շուրջ բազմել էին վանա ջոջերն ու դատաւոր,  
Թասերի մէջ կարկաչում էր ծաղկած գինու երգը բոսոր:

Եւ ֆարհանի աչքին մ'ընեց — ինչ բիրտ խաղ էր, այդ ի՛նչ  
հանաւ.

Ջրկում էր նա իրանց վարձից եւ ջոջերին մեծ ֆէֆ սարքում.  
Իրանք, որ դառ դատել էին, մնում էին ձեռքը դատարկ.  
Նա, որ մատի մատ չէր տւել, գեխուքեան մէջ էր թաւալում:  
Եւ օրէնքը՝ որպէս գրող՝ նրանց դէմն էր ելել հիմա,  
Որ կողոպտիչ այդ Խոջի դէմ չը լինի որ բռունցք դուրս գա:  
Հօր բռունցքն իր շարժելով վագեց դէպի դղեակի դուռ.  
Ու նրա հետ զրկւածների խումբն այն խիզախ, բազմահարկը:

Ջօրքերն իսկոյն գայլերի պէս ֆաջ ֆարհանի վրա ընկան,  
Հարւածեցին բրով, քրով — յետո արին ոտքի կոխան.  
Ջախջախեցին նրա գլուխն ընդդէմ տաշւած այն սալերին,  
Որոնք նրա նարտար ձեռքերն մեծ ժայռերից պակել էին:

Վարձի փոխան միւսներին արիւնլւա տուն նամբեցին.  
Սակայն նրանք իրենց արդար դատիցն էլ ձեռք չը ֆաշեցին:  
Եւ ժողովուրդն ողջ ելել է եւ կազմել է սուգի թափոր,  
Յնցւել էր այդ անխօս հսկան երկրաշարժի պէս ահաւոր:  
Վաղն էլ կելնի շղթայագերձ՝ մշակ մարդկանց հետ միասին՝  
Կը կործանի կարգն այս արնոտ իր վիթխարի ցասման օրին:

Եւ ծերունին լոնց յանկարծ. նրա աչքում լացն էր փայլում  
Ու այդ լացում ցասման օրւա պայծառ արեւն էր շողջողում:  
Իսկ թափորը երկարում էր մի բազկի պէս սպառնագին —  
Եւ նայում էր նրան Մեք ձեռքը դրած թուր — կայծակին:

— Ասա, աղբեր, ցասման օրը ե՞րբ է գալու:

— Որդի, անշուշտ, այդ մեծ օրը կը տեսնես դու:

Եւ Մեքի հոգին խայտաց մի մարտական, պայծառ երգով —  
Պատեց նրան մի խնդուքին — վնիտ ինչպէս է վանա ծով:  
Յիշեց գիւղը, փուռն այն տխուր, Շատախի Թաղ, սալի խանութ,  
Յիշեց անխօս տանջողներին եւ տէրերին նրանց անգութ,  
Յիշեց իր հօր, Սասնա աշխարհ եւ ջոջերին նրա դաժան,  
Փոքորկի պէս ֆշեց իր ձին — ձեռքին թուրը շանթի նման:

Գնաց Մեք ոտքի հանի մշակներին հագար, հագար.  
Անտուն, անտէր մեծ ամբոխին գալիք ցասման օրւա համար.  
Որ կործանեն աշխարհն այդ բիրտ իր ցաւերով ու արիւնով,  
Որ նոր աշխարհ կեանքի բերեն աշխատանքով ու ծիծաղով:

Շատ դարերի մեծ գայրաջից ձիւ մէջքին էր ծանրացել,  
Եւ հրեղէն այդ անմահ ձին էլ չէր կարող ոտքը փոխել.  
Քայլալու էր գետինն ասես, դողում նրա ոտքի տակին.  
Բացում էր հողն ու սմբակներն աւելի խոր խրում էին:

Եւ վրնջաց նժայգն անեղ, ցատկեց որպէս մի թռչող նետ,  
Որ թափ առնի, թռնի ժայռին ու բարձրանա ամպերի հետ:  
Դէմը բացեց հսկա մի դուռ, եւ մթի մէջ անհետ եղան  
Սասնա Մեք, հրեղէն ձին մի մոռացած խռի նման:

Դողդալով փակեց դուռը, ժայռէ դուռը նրանց յետեւ,  
Եւ մնացին այնտեղ բանդած առանց օրի եւ անարեւ:  
Եւ անցել է շատ ժամանակ, եկել շատ դէպք պետաւոր —  
Կանգուն է դեռ տարերքի դէմ դուռն այդ ամուր, խորհրդաւոր:

Մի լաւ մշակ մօտիկ հանդում ջուր էր անում բառը ուսին.  
Իրեն առջեւ բացւած տեսաւ դուռն այդ ժայռէ՝ կէս գիշերին.  
Բահն իր ուսին՝ նա ներս մտաւ զոյց անի Մեքի հետ:  
Տեսաւ այնտեղ շառաչելով հասում, գնում էր մի մեծ գետ,  
Գետի ափին ձին էր կանգնել եւ ուտում էր հրեղէն գարի,  
Ժայռ պատերից կախւել էին զէնքերն իր հօր մեծ մարտերի:  
Մեք մէկ էլ կանգնաւ դէմը մի վիթխարի ծառի նման,  
Աչքերը վառ որպէս կրակ — նման ծագող արեգական:

- Բարով եկար, մշակ աղբեր, ի՞նչ էք անում դուք աշխարհում:
- Մենք, դեռ եմ գիտցածի պէս — շատը դատում, քիչն է ուտում:
- Խելֆի եկե՞լ է մշակը, անտուն մարդը, չփառորը:
- Ելնում է նա փոթորկի պէս — շատ հեռու չէ ցասման օրը:
- Ինչո՞վ արդեօք դուք կը յաղթէք, խորամանկ է տիրող դասը:
- Հիմա մենք էլ իմաստուն ենք. հազար ենք մենք — նրանք՝ տասը:
- Դե՛ լաւ, դու մի էս տոպրակը ձիւ մօտ տար, որ ձին ուտի:

Մշակն ուզեց տոպրակն առնի — խոշոր բեռ էր եօթը ուղտի.  
 Տոպրակն իրեն տեղը թողեց, գնաց բերաւ հրեղէն ձին.  
 Զին որ ծուեց գարին ուտի — ամուր կապը ձգեց վզին:


Վարդի նման մի վառ ծիծաղ ծաղկեց դէմքին քաջ Մենքի.  
 Նրա աչքում շողաց հուրը գալիք անեղ պայքարների:

— Մենք, դարձեալ լոյս աշխարհը ե՞րբ ես գալու:

— Մշակ աղբեր, այդ մեծ օրը չէ շատ հեռու:  
 Տե՛ս, վառում է բոցակարմիր օրը ցասման.  
 Խորտակում են նորուն ու մշակն իրենց շղթան.  
 Երգն է զնգում կուրի ելնող հազարների,  
 Բազմաչարչար եւ անբաժին ամբոխների:  
 Հագնեմ գրահէ շապիկն իմ վառ,  
 Մէջքիս կապեմ պողպատ քամար,  
 Հագնեմ գրահէ մոյկը ստին,  
 Գլխիս դնեմ քաղախ կոտին,  
 Ամուր կապեմ թամբ սաղափին,  
 Ելնեմ, հեծնեմ հրեղէն ձին  
 Զեռֆիս առնեմ թուր — կայծակին  
 Ահեղ կուրի ելնեմ կրկին.  
 Որ միաբան վարենք մեր գոռ մարտը վերջին  
 Յաղթանակի եւ ցնծութեան երգի միջին.  
 Որ փլատակ անենք հին կարգն ու հին աշխարհ  
 Ժողովրդի նոր, երջանիկ կեանքի համար:  
 Եւ մեր քանդած հին աշխարհի, գրկանքի տեղ  
 Շինենք պայծառ մեր նոր աշխարհն հրաշագեղ.  
 Ո՛րք մշակի դաշտերը ծո՛վ լինեն բերքի,  
 Յարենն՝ ընկոյզ, գարին՝ մասուր, կորեկն՝ ոսկի:

Մայիս 11, 1939,





55265

89

U-54

891.99

U-54